9. Саркисян Н.С., Хачатрян А.М. О двухмерных уравнениях двухслойной анизотропной пластинки когда слои взаимодействуют по закону сухого трения. Изв. НАН Армении. Механика. 2019. Т.72. № 2, С.68-79.
10. Алексеев А.Е. Нелинейные законы сухого трения в контактных задачах линейной теории упругости. ПМиТФ. 2002.Т.43. №4.с. 161-169.
11. Дюво Г. Лионс Ж.-Л. Неравенства в механике и физике. М: Наука. 1980. 384с.
12. Баласанян Е.С. О пограничном слое двухслойной полосы. Уч. записки АрГУ, 1/2016, С. 88-92.

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկիայի անդամ, ֆ.մ.գ.թ. Գ.Տ.Սահակյանը:

ՀՏԴ 513.813

Մաթեմատիկա

Գուրգեն ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱրԴՀ-ի մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ.

E-mail [Gurgen250612@mail.ru](mailto:Gurgen250612@mail.ru)

**ԳԵՈՂԵԶԻԿ ԶՈՒԳԱՀԵՌ  
ՀԻՊԵՐՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ  
ՌԻՄԱՆՅԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Նշված թեման նպատակահարմար է ուսումնասիրել ինդուկցիայի մեթոդով՝ ի տարբերություն [2] –ում շարադրված է դեդուկցիայի մեթոդի: Թեմայի յուրացումը ավելի մատչելի կլինի մագիստրանտների և ասպիրանտների համար: Դիտարկվում է  $V_n$  Ռիմանյան տարածությունում  $V_{n-1}$  անհզոտոտայ հիպերմակերևույթ: Ուսումնասիրված է, որ  $V_0$  կետից ելնող իրական երկարությամբ գեոդեզիկները հանդիսանում են նորմալ գեոդեզիկներ  $V_0$  կենտրոնով և իրական շառավղով  $V_{n-1}$  գեոդեզիկ հիպերսֆերաների համար: Ուսումնասիրված է, որ  $V_{n-1}$  հիպերմակերևույթի գեոդեզիկ նորմալները հանդիսանում են նաև նորմալներ  $V_{n-1}$  -ին գեոդեզիկ զուգահեռ  $V_r; (r \leq n-1)$  մակերևույթի համար:

**Բանալի բառեր՝** իզոտոտոտայ և անհզոտոտայ հիպերմակերևույթներ, գեոդեզիկ նորմալներ, գեոդեզիկ զուգահեռներ, գեոդեզիկ զուգահեռ հիպերմակերևույթների ընտանիք, հիպերսֆերա, վարիացիայի մեթոդ:

Г.Налбандян

**ГЕОДЕЗИЧЕСКИ ПАРАЛЛЕЛЬНЫЕ ГИПЕРПОВЕРХОСТИ  
В РИМАНОВОМ ПРОСТРАНСТВЕ**

На мой взгляд отмеченную тему целесообразно изучать по методу индукции, в отличие от [2], где рассмотрен метод дедукции. Таким образом, осмысление темы будет доступным для магистрантов, аспирантов В римановом пространстве  $V_n$  рассматривается произвольная неизотропная гиперповерхность  $V_{n-1}$ .

Изучено, что из точки  $V_0$  исходящие геодезические вещественной длины, служат нормальными геодезическими для геодезических гиперсфер  $V_{n-1}$  вещественного радиуса с центром  $V_0$ . Изучено, что геодезические нормальные к  $V_{n-1}$  будут нормальными и к любой геодезически параллельной к  $V_{n-1}$  поверхности  $V_r; (r \leq n-1)$ .

**Ключевые слова:** изотропные и неизотропные гиперповерхности, геодезические нормали, геодезически параллельные, семейство геодезически параллельных гиперповерхностей, гиперсфера, метод вариации.

G.Nalbandyan

**GEODESICALLY PARALLEL HYPERSURFACES IN  
RIEMANNIAN SPACE**

*In my opinion, it is advisable to study the noted topic by the method of induction, in contrast to [2], where the method of deduction is considered. Thus, understanding the topic will be available to graduate students. It has been  $V_0$  studied that geodesics of real length coming from a point, serve as normal geodesics for geodesic hyperspheres of material radius centered  $V_0$ . In an arbitrary non-isotropic hypersurface  $V_{n-1}$  is regarded in  $V_n$  Riemannian space. The geodesics normal to will be normal and to any geodesically parallel to over  $V_r; (r \leq n-1)$ .*

**Keywords:** isotropic and nonisotropic hypersurfaces, geodesic normals, geodesic parallels, family of geodesically parallel hypersurfaces, hypersphere, method of variation:

Թեմայի ուսումնասիրության համար նախապատվություն է տրվում ինդուկցիայի մեթոդին, այսինքն՝ անցումը պարզից դեպքից ընդհանուր դեպքի: Այսպես՝ [2] դասագրքում նշված թեման շարադրված է դեդուկցիայի մեթոդով՝ ընդհանուրից դեպքի պարզը, որը, մեր կարծիքով, այնքան էլ մատչելի չէ մագիստրանտների, ասպիրանտների համար: Նախ տանք մի քանի կարևոր հասկացություններ, որոնք անհրաժեշտ են հետագա դատողությունների համար:

Դիտարկենք՝

$$x^i = x^i(u^1, u^2, \dots, u^{n-1}) \quad (1)$$

անիզոտրոպ  $V_{n-1}$  հիպերմակերևույթը  $V_n$  ռիմանյան տարածությունում, որտեղ  $u^\alpha, \alpha = 1, n-1$  պարամետրերը փոփոխվում են  $\Omega_\alpha$  կապակցված տիրություն, իսկ  $x^i(u^\alpha)$  ֆունկցիաները  $\Omega_\alpha$  տիրություն և նրա եզրագծում առնվազն երկու անգամ ածանցելի են և բավարարում են ռեգուլյարության պայմանին, այսինքն՝  $A = \left\| \frac{\partial x^i}{\partial u^j} \right\|, \quad i = \overline{1, n} \quad j = \overline{1, n-1}$  մատրիցայի ռանգը հավասար է  $(n-1)$ -ի՝

$$\text{rang} A = n-1 \quad (2)$$

Հայտնի է, որ ռիմանյան տարածությունում կորերի երկարությունները կարող են լինել իրական, կեղծ կամ զրո, այլ կերպ ասած՝ իզոտրոպ՝ զրո երկարությամբ և անիզոտրոպ՝ իրական կամ կեղծ երկարությամբ: Պարզ է, որ կամայական  $M \in V_{n-1}$  կետում գոյություն ունի ոչ իզոտրոպ նորմալ միավոր (կամ կեղծ միավոր) վեկտոր, որը կնշանակենք  $\eta^i$ -ով: Նշենք, որ այդպիսի նորմալ վեկտոր կարելի է կառուցել  $-1$  արտադրիչի ճշտությամբ, այնպես որ  $V_{n-1}$  հիպերմակերևույթի կամայական կետում կվերցնենք երկու

ուղղություններից միայն մեկը, իսկ մյուս կետերում՝ անընդհատության սկզբունքով [1-3] :

Ինչպես հայտնի է  $v^i = v^i(t)$  վեկտորը զուգահեռ է տեղափոխվում  $u^i = u^i(t)$  կորի երկայնքով, եթե այդ վեկտորի կոորդինատները բավարարում են՝

$$\frac{dv^k}{dt} + \Gamma_{ij}^k \frac{du^i}{dt} v^j = 0 \quad (3)$$

հավասարումների համակարգին [4-5], որտեղ  $i, j, k = \overline{1, n}$ :

Դիֆերենցիալ հավասարումների տեսությունից հայտնի է, որ այդ դեպքում գեոդեզիկ գծերի դիֆերենցիալ հավասարումների

$$\frac{d^2 u^k}{ds^2} + \Gamma_{ij}^k \frac{du^i}{ds} \frac{du^j}{ds} = 0, \quad (4)$$

համակարգն ունի լուծում, որը նույնպես կլինի անընդհատ դիֆերենցելի ֆունկցիա՝  $S$  և  $u^\alpha$  պարամետրերից կախված, որտեղ  $i, j, k = \overline{1, n}$ :

Օր ի ն ա կ 1. Նախ դիտարկենք կարևոր մի մասնավոր դեպք, երբ տրված մակերևույթը զրո չափի է և իրենից կներկայացնի  $V_0$  -կետը: Այդ դեպքում  $V_0$  կետից յուրաքանչյուր ուղղությամբ դուրս եկող գեոդեզիկ գիծ կլինի նորմալ  $V_0$  «մակերևույթի» նկատմամբ:

Անհրաժեշտ է առանձին դիտարկել իրական և կեղծ երկարությամբ գեոդեզիկ գծերը: Բոլոր ուղղություններով տեղադրենք  $ai$  իրական հաստատուն երկարությամբ հատվածներ գեոդեզիկ գծերի երկայնքով: Այդ հատվածների ծայրակետերը կազմում են հիպերմակերևույթ, որին անվանում են հիպերսֆերա՝  $V_0$  կենտրոնով և  $a$  շառավղով: Նույն կերպ,  $V_0$  կետից տեղադրելով  $s = ai$  կեղծ երկարությամբ հատվածներ, կստանանք հիպերմակերևույթ, որին անվանում են գեոդեզիկ հիպերսֆերա  $V_0$  կենտրոնով և  $ai$  շառավղով:

Նշենք, որ իրական ռիմանյան տարածությունում միշտ գոյություն ունի հիպերսֆերա՝ իրական շառավղով, որն ընդգրկում է  $V_0$  կետը: Պսևդոռիմանյան տարածության դեպքում իրական և կեղծ շառավղիներով գեոդեզիկ հիպերսֆերաները կառուցվում են նույն կերպ, ինչպես  $S_{n-1}$  հիպերսֆերան համապատասխան  $R_n$  պսևդոէվկլիդեսյան տարածությունում [1-2]: Որոշակիության համար մենք կսահմանափակվենք միայն իրական շառավղով գեոդեզիկ հիպերսֆերաներով:

**Թեորեմ 1.**  $V_0$  կետից եկող իրական երկարությամբ գեոդեզիկ գծերը հանդիսանում են գեոդեզիկ նորմալներ  $V_0$  կենտրոնով և իրական շառավղով  $V_{n-1}$  գեոդեզիկ հիպերսֆերաների համար:

**Ապացույց:** Պետք է ապացուցել, որ  $V_{n-1}$  հիպերսֆերայի յուրաքանչյուր  $L$  կետ, որը գեոդեզիկ գծով միացված է  $V_0$  կետի հետ, ուղղված է  $V_{n-1}$  հիպերսֆերայի  $L$  կետում տարված նորմալի ուղղությամբ: Հաշվենք  $ML$  գեոդեզիկ հատվածի երկարությունը վարիացիայի մեթոդով, որտեղ  $M$  կետը

տեղադրված է  $V_0$  կետում՝ հիպերսֆերայի կենտրոնում, իսկ  $L$  կետը սահում է  $V_{n-1}$  հիպերսֆերայով:

Հաշվենք,  $ML$  աղեղի երկարության վարիացիան նրա անվերջ փոքր փոփոխության դեպքում [6-7]: Քանի որ տեղի ունի (3) պայմանը, այսինքն կորը գեոդեզիկ է, ուրեմն կարելի է օգտվել

$$\delta S = \left[ g_{ij} \frac{dx^i}{ds} \delta x^j \right]_L - \left[ g_{ij} \frac{dx^i}{ds} \delta x^j \right]_M \quad (5)$$

բանաձևից: Քանի որ  $M$  կետը անշարժ է, ուրեմն  $ML = s$  աղեղի երկարությունը կլինի հաստատուն և կունենանք  $\delta S = 0$  արժեքը: Մյուս կողմից

$$\left[ g_{ij} \frac{dx^i}{ds} \delta x^j \right]_M = 0 \quad (6)$$

որովհետև  $M$  կետը անշարժ է: Հետևաբար,

$$\left[ \delta x^j \right]_M = 0 \quad (7)$$

Հաշվի առնելով (6) և (7) պայմանները՝ (5)-ից կստացվի

$$\left[ g_{ij} \frac{dx^i}{ds} \delta x^j \right]_L = 0: \quad (8)$$

Դա փաստորեն նշանակում է, որ  $ML$  գեոդեզիկ գիծը հիպերսֆերայի  $L$  կետում ուղղահայաց է  $V_{n-1}$  հիպերսֆերային:

Այսպիսով  $V_0$  կենտրոնով և իրական շառավղով գեոդեզիկ  $V_{n-1}$  հիպերսֆերան կազմում է մեկ պարամետրից կախված գեոդեզիկ զուգահեռ հիպերմակերևույթների ընտանիք, որն ունի  $V_0$  կետից ելնող ընդհանուր գեոդեզիկ նորմալներ: Ուրեմն  $V_0$  կետը կարելի է դիտարկել որպես ընտանիքի «հիպերմակերևույթ», որը գրո չափի է: Նշենք, որ նմանակերպ արդյունքները ճիշտ են նաև կեղծ շառավղով համակենտրոն գեոդեզիկ հիպերսֆերաների համար:

Օրինակ 2. Դիտարկենք սովորական տարածությունում միևնույն առանցքն ունեցող շրջանային գլանների ընտանիքը: Այս մակերևույթները («հիպերմակերևույթները» սովորական եռաչափ տարածության տեսանկյունից) կազմում են մեկ պարամետրից կախված ընտանիք և ունեն ընդհանուր գեոդեզիկ նորմալներ:

Իրոք, բոլոր հնարավոր ուղղահայացները, որոնք տարված են առանցքի յուրաքանչյուր կետում, կլինեն ընդհանուր նորմալներ ընտանիքի բոլոր գլանների համար: Հատվածները ընդհանուր նորմալով ընկած երկու գլանների միջև մնում են հաստատուն: Կառուցելով տրված գլանին գեոդեզիկ զուգահեռ մակերևույթներ՝ կստանանք ընտանիքի մյուս գլանները:

Եթե շրջանագծի շառավղին հավասար հաստատուն հատվածները տեղադրենք գլանային մակերևույթի ներքին նորմալի ուղղությամբ, ապա գեոդեզիկ զուգահեռ մակերևույթը կվերածվի գլանի առանցքի, այսինքն՝ ուղիղ գծի: Նման երևույթներ հնարավոր են նաև բազմաչափ մակերևույթների համար:

Ուրեմն կարելի է վերականգնել գեոդեզիկ զուգահեռ հիպերմակերևույթների ընտանիքը ոչ միայն կամայական  $V_{n-1}$  հիպերմակերևույթի միջոցով, այլ նաև երբ այն վերածվում է  $V_r$  փոքր չափանի մակերևույթի: Ճիշտ նույն ձևով կարելի է կառուցել գեոդեզիկ զուգահեռ մակերևույթների ընտանիք, եթե տրված է ինչ-որ փոքր չափի  $V_r$  մակերևույթ, որը պետք է պատկանա այդ ընտանիքին, որպես վերածվող հիպերմակերևույթ:

Այժմ անցնենք ընդհանուր դեպքին: (1) բանաձևով որոշված հիպերմակերևույթի յուրաքանչյուր  $M \in V_{n-1}$  կետով տանենք գեոդեզիկ գիծ նորմալի ուղղությամբ, այսինքն՝  $\eta^i$  վեկտորի ուղղությամբ: Այդպիսի գեոդեզիկ գծերին անվանում են  $V_{n-1}$  հիպերմակերևույթին նորմալ գեոդեզիկ գծեր, և կվերագրենք  $s$  պարամետրը, եթե իրական երկարությամբ է, և կվերագրենք  $\sigma$  պարամետրը, եթե կեղծ երկարությամբ է:

Քանի որ շոշափող  $\eta^i$  վեկտորն անիզոտրոպ է, հետևաբար գեոդեզիկ գիծը իզոտրոպ լինել չի կարող: Թող  $M$  կետը լինի որպես հաշվման սկզբնակետ, այսինքն՝ այդ կետում  $s=0$  (կամ  $\sigma=0$ ): Դրական ուղղությունը վերցնենք  $\eta^i$  վեկտորի ուղղությամբ, այնպես, որ  $M$  կետում շոշափող  $\frac{dx^i}{ds}$  (կամ  $\frac{dx^i}{d\sigma}$ ) վեկտորի ուղղությունը համընկնի  $\eta^i$  (այլ ոչ թե  $-\eta^i$ ) վեկտորի ուղղության հետ: Որոշակիության համար կոիտարկենք այսուհետև միայն իրական երկարությամբ գեոդեզիկ գծերը:

Եթե  $u^\alpha$  պարամետրերին տանք արժեքներ  $\Omega_\alpha$  տիրույթից և մոդուլով շատ փոքր արժեք  $s$  -ին, ապա դրանցով որոշվում է ինչ-որ  $L$  կետ արդեն ռիմանյան տարածությունում: Այսինքն, երբ  $u^\alpha$  պարամետրերը որոշում են  $M$  կետը  $V_{n-1}$  հիպերմակերևույթի վրա, ապա  $M$  կետով անցնող նորմալ գեոդեզիկ գծի վրա միարժեքորեն որոշվում է  $L$  կետը  $V_r$  -ում այնպես, որ  $ML=s$ :

Նշենք, որ  $s=0$  արժեքի դեպքում կստանանք  $V_{n-1}$  հիպերմակերևույթի  $M$  կետը: Եթե ֆիքսենք  $u^\alpha$  պարամետրերը և փոխենք միայն  $s$  -պարամետրը, ապա կետը կշարժվի  $V_{n-1}$  հիպերմակերևույթին տարված նորմալ գեոդեզիկ գծով [2-4]:

Ըստ կառուցման  $L$  կետը միարժեք որոշվում է  $u^\alpha$  և  $s$  պարամետրերով, ուրեմն նրա կոորդինատները կլինեն այդ պարամետրերից կախված միարժեք ֆունկցիաներ, այսինքն՝

$$x^i = x^i(u^1, u^2, \dots, u^{n-1}, s), \quad (9)$$

որտեղ  $u^\alpha \in \Omega_\alpha$ , իսկ  $s$  պարամետրը փոփոխվում է զրո թիվը պարունակող ինչ-որ ինտերվալում: Այդ դեպքում նորմալ գեոդեզիկի  $M \in V_{n-1}$  սկզբնական կետի կոորդինատները և այդ կետում տարված սկզբնական  $\eta^i$  շոշափող վեկտորի կոորդինատները կլինեն  $u^\alpha$  և  $s$  պարամետրերից կախված անընդհատ դիֆերենցելի ֆունկցիաներ:

Հետևաբար  $V_{n-1}$  հիպերմակերևույթի յուրաքանչյուր նորմալ գեոդեզիկ գծի երկայնքով  $L$  կետը նշված է այնպես, որ  $ML$  տեսքի աղեղների

երկարությունները հավասար լինեն իրար, այսինքն՝  $ML = s$ : Այդպիսի  $L$  կետերի բազմությունը որոշում է մակերևույթ, որին անվանում են  $V_{n-1}$  հիպերմակերևույթին գեոդեզիկ զուգահեռ հիպերմակերևույթ:

Այդ եղանակով առաջացած մակերևույթի պարամետրական հավասարումը կորոշվի, եթե (9) -ում  $s$ -պարամետրին տանք որոշակի հաստատուն արժեք՝  $s = a$ : Այդ դեպքում  $V_{n-1}$  հիպերմակերևույթի յուրաքանչյուր  $M$  կետ կտեղաշարժվի նորմալ գեոդեզիկ գծերով  $s = a$  հաստատուն հեռավորությամբ:

Ուրեմն ստացված կետերի երկրաչափական տեղը որոշվում է

$$x^i = x \left( \begin{matrix} 1 \\ \mu \\ 2 \\ \mu \\ \dots \\ n \\ \mu \end{matrix} \right)$$

(10)

պարամետրական հավասարումով: Այն կարող է ունենալ եզակիություններ օրինակ՝ այն կարող է վերածվի ավելի ցածր չափողականությամբ մակերևույթի, նույնիսկ կարող է վերածվել կետի:

Իրոք, (2) պայմանը կարող է տեղի չունենալ  $a$ -ի որոշ արժեքների դեպքում և  $x^j$  ֆունկցիաները կարտահայտվեն ավելի քիչ  $u^a$  պարամետրերի միջոցով: Հետևաբար (10) բանաձևով որոշվող մակերևույթը կունենա  $r < n - 1$  չափողականություն: Բայց  $a$ -ի շատ փոքր արժեքների դեպքում (2) պայմանը ապահովում է անընդհատության շնորհիվ և կունենանք հիպերմակերևույթ, իսկ  $a = 0$  դեպքում  $V_{n-1}$  հիպերմակերևույթը:

**Թեորեմ 2.**  $V_{n-1}$  հիպերմակերևույթի նորմալ գեոդեզիկ գծերը կլինեն նորմալներ նաև  $V_{n-1}$  հիպերմակերևույթին գեոդեզիկ զուգահեռ  $V_r; (r \leq n - 1)$  մակերևույթի համար:

**Ապացույց:** Դիտարկենք  $V_{n-1}$  հիպերմակերևույթի նորմալ գեոդեզիկ գծի երկայնքով  $ML$  աղեղը, որի  $M$  սկզբնակետը սահում է  $V_{n-1}$  հիպերմակերևույթով, իսկ  $L$  վերջնակետը սահում է նրան գեոդեզիկ զուգահեռ  $V_r$  մակերևույթով: Այդ դեպքում,  $ML$  աղեղի երկարությունը մնում է հաստատուն՝  $ML = s = a$  ըստ կառուցման:

Հաշվենք  $ML$  աղեղի երկարության վարիացիան նրա անվերջ փոքր փոփոխության դեպքում [6-7]: Զանի որ կորը գեոդեզիկ է, ապա կօգտվենք (5) բանաձևից:

Նախ  $\delta s = 0$ , քանի որ  $s = a$  մեծությունը հաստատուն է:

$$\text{Մյուս կողմից } \left[ g_{ij} \frac{dx^i}{ds} \delta x^j \right]_M \text{ արտահայտում է } \frac{dx^i}{ds} \text{ և } \delta x^j \text{ վեկտորների}$$

սկալյար արտադրյալը, որտեղ  $\frac{dx^i}{ds}$  վեկտորը շոշափում է  $ML$  աղեղը  $M$

կետում, իսկ  $\delta x^j$ -ը  $M$  կետի անվերջ փոքր տեղաշարժի վեկտորն է  $V_{n-1}$  հիպերմակերևույթով:



Համաձայն (3) պայմանի՝  $\frac{dx^i}{ds} = \eta^i$  հանդիսանում է  $V_{n-1}$

հիպերմակերևույթի նորմալ վեկտորը, իսկ  $\delta x^j$ -ն շոշափում է  $V_{n-1}$

հիպերմակերևույթը, ուրեմն դրանց սկալյար

արտադրյալը կհավասարվի զրոյի: Այդ դեպքում (5) –ից կստանանք

$$\left[ g_{ij} \frac{dx^i}{ds} \delta x^j \right]_L = 0:$$

Այսինքն՝  $ML$  աղեղի  $L$  կետում տարած  $\frac{dx^i}{ds}$  շոշափող վեկտորի և  $L$

կետի  $V_r$  մակերևույթով անվերջ փոքր տեղաշարժի  $\delta x^i$  վեկտորի սկալյար

արտադրյալը կհավասարվի զրոյի: Ենթադրության համաձայն՝  $\delta x^j$  վեկտորը

հանդիսանում է շոշափող  $V_r$  մակերևույթին, ուրեմն  $\frac{dx^i}{ds} = \eta^i$  կլինի նորմալ

վեկտոր  $V_r$  մակերևույթի համար: Հետևաբար  $\frac{dx^i}{ds}$  վեկտորը, որը հանդի-

սանում է  $ML$  գեոդեզիկ գծի շոշափողը նրա  $L$  կետում տարված, կունենա  $V_r$  մակերևույթի նորմալի ուղղությունը:

Դիտարկենք  $V_{n-1}$  հիպերմակերևույթին գեոդեզիկ զուգահեռ  $V'_{n-1}; (r = n - 1)$  հիպերմակերևույթը, որի նորմալ գեոդեզիկները կլինեն նորմալ գեոդեզիկներ  $V_{n-1}$  հիպերմակերևույթի համար: Համաձայն (3) պայմանի՝ գեոդեզիկները անիզոտրոպ են, ուրեմն դրանց օրթոգոնալ  $V'_{n-1}$  հիպերմակերևույթը ևս կլինի անիզոտրոպ: Ուրեմն անիզոտրոպ գեոդեզիկ զուգահեռ  $V_{n-1}$  և  $V'_{n-1}$  հիպերմակերևույթների միջև ընդհանուր նորմալ գեոդեզիկներով պահպանվում է հաստատուն հեռավորություն: Հետևաբար, կամայական մակերևույթ, որը գեոդեզիկ զուգահեռ է  $V_{n-1}$  -ին կլինի գեոդեզիկ զուգահեռ  $V'_{n-1}$  հիպերմակերևույթին: Այսպիսով՝  $V_{n-1}$  և  $V'_{n-1}$  հիպերմակերևույթները ստեղծում են նույն գեոդեզիկ զուգահեռ մակերևույթների ընտանիքը: Ուրեմն որպես սկզբնական մակերևույթ կարելի է վերցնել կամայական անիզոտրոպ  $V_r; (r \leq n - 1)$  մակերևույթ այդ ընտանիքից:

Այսպիսով, եթե կամայական  $M \in V_r$  կետով տանենք գեոդեզիկ գծեր յուրաքանչյուր նորմալի ուղղությամբ, ապա կստանանք գեոդեզիկ գծերի ընտանիք՝ կախված  $(n - r)$  -հատ պարամետրերից, դրանց վրա տեղադրելով  $s = 0$  երկարությամբ հատվածներ՝ կստանանք գեոդեզիկ զուգահեռ հիպերմակերևույթներ, որոնք կհամընկնեն  $V_{n-1}$  հիպերմակերևույթով ստեղծված գեոդեզիկ զուգահեռ հիպերմակերևույթների ընտանիքի հետ: Ուրեմն կամայական անիզոտրոպ  $V_{n-1}$  հիպերմակերևույթ ընդգրկվում է մեկ պարամետրից կախված գեոդեզիկ զուգահեռ հիպերմակերևույթների ընտանիք: Այդ հիպերմակերևույթներն ունեն ընդհանուր նորմալ գեոդեզիկ գծեր: Պարամետրերի որոշ արժեքների դեպքում

ընտանիքի հիպերմակերևույթը կարող է վերածվել փոքր չափանի մակերևույթի:

Այսպիսով միևնույն ընտանիքին պատկանող երկու անիզոտրոպ հիպերմակերևույթներ անվանում են գեոդեզիկ զուգահեռ, եթե նրանք ընդհանուր նորմալ գեոդեզիկներից անջատում են հավասար երկարությամբ հավաժներ: Ակնհայտ է, որ այն կլինի համարժեք վերևում նշված հիպերմակերևույթների գեոդեզիկ զուգահեռության սահմանումին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Норден А.П. Пространства аффинной связности.- М.: "Наука", 1976.
2. Рашевский П.К. Риманова геометрия и тензорный анализ М.: "Наука", 2006.
3. Дубровин Б.А., Новиков С.П., Фоменко А.Т. Современная Геометрия М.: "Наука", 1986.
4. Абрамов А.А. Введение в тензорный анализ к риманову геометрию, М. 2004.
5. Налбандян Г.А. Чебышевские и геодезические сети на приводимых пространствах, Մաթեմատիկական բարձրագույն դպրոցում, հ IV, 2008, էջ 42-47:
6. Նալբանդյան Գ.Ա. Ռիմանյան տարածության մակերևույթի վրա գեոդեզիկ գծեր, ԱրՊՀ Գիտական տեղեկագիր, N 1, 2009, էջ 11-13:
7. Նալբանդյան Գ.Ա. Անիզոտրոպ կորի աղեղի երկարության հաշվումը  $V_n$  ռիմանյան տարածությունում, ՀՀ Գորիսի պետական համալսարանի Միջազգային II գիտաժողով <<ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ>> մայիսի 26-27, 2011, էջ 91-96:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, ֆ.մ.գ.թ. Գ.Տ.Սահակյանը:

ՀՏԴ 37.02(004.45)Ինֆորմատիկա**Վազգեն ԱՌՍՏԱՄՅԱՆ****ԱրՊՀ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի  
դոցենտ, մ.գ.թ.****E-mail. [varustamyan@rambler.ru](mailto:varustamyan@rambler.ru)****Արթուր ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ****ԱրՊՀ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի  
դասախոս****E-mail. [mnacakanyan\\_artur77@mail.ru](mailto:mnacakanyan_artur77@mail.ru)**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՍՈՂԵԼՈՒՄ**

Սույն հոդվածում ընդհանրացվում են հեռավար ուսուցման մեթոդաբանական հիմնավորման առանձնահատկությունները, նշվում, որ ուսուցման գործընթացում պետք է հաշվի առնել և գնահատել կրթական գործընթացի սկզբունքորեն նոր մոդելների մշակումն ու ներդրումը: Դիտարկվում է ուսանողի սովորելու ունակությունները մեծացնելու և գիտելիքն արդիականացնելու խնդրի առաջնահերթության գիտակցումը, որը ենթադրում է մշտական աշխատանք, և առավել կարևորվում են խմբային աշխատանքները, համագործակցային ուսուցումը և ակտիվ ուսումնական գործընթացը:

**Բանալի բառեր`** Հեռավար ուսուցում, մեթոդաբանական հիմնավորում, համակարգչային տեխնոլոգիա, մոլտիմեդիա համակարգեր, ծրագրային մոդել, էլեկտրոնային փոստ, ուսումնական հաստատության, նյութ, գիտելիքների գնահատում:

**В.Арустамян,****А.Мнацаканян**

**МЕТОДОЛОГИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ МЕТОДА  
ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ СОВРЕМЕННЫХ  
ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ**

В данной статье обобщается «методологическое обоснование» дистанционного обучения, отмечается, что в процессе обучения следует учитывать и оценивать разработку и внедрение принципиально новых моделей образовательного процесса. Считается, что это повышает способность студента к обучению и определяет приоритетность проблемы модернизации знаний, которая подразумевает постоянную работу, чаще групповую

*работу, совместное обучение и активный учебный процесс.*

**Ключевые слова:** *Дистанционное обучение, методическое обоснование, компьютерные технологии, мультимедийные системы, программные модели, обучающиеся, преподаватели, электронная почта, учебные материалы.*

**V.Arstamyan,  
A.Mnacakanyan**

**METHODOLOGICAL JUSTIFICATION OF THE METHOD OF  
DISTANCE LEARNING OF MODERN INFORMATION  
TECHNOLOGIES**

*This article summarizes the "methodological justification" of distance learning, noting that the teaching process should take into account and evaluate the development and implementation of fundamentally new models of the educational process. It is considered to increase the student's ability to learn and prioritize the problem of modernization of knowledge, which implies constant work, more often group work, collaborative learning and active learning process.*

**Keywords:** *Distance learning, methodological substantiation, computer technology, multimedia systems, software model, learners, teachers, educational activity, material, knowledge assessment.*

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը մեծ հեռանկարներ է բացում հասարակության յուրաքանչյուր անդամի և պետության զարգացման ուղղությամբ: Ժամանակակից հասարակությունը գլոբալ տեղեկատվական հասարակությունից դառնում է գիտելիքների և տեղեկատվության վրա հիմնված ինտելեկտուալ հասարակություն: Այս գործում մեծ է հեռավար ուսուցման դերը, որտեղ մարդը, հանդես գալով հիմնական կապիտալի դերում, պետք է ներգրավվի կրթության և տեղեկատվական հասարակության մեջ:

Ինովացիոն տեխնոլոգիաները, հանդիսանալով լավագույն միջոցը դասընթացների նախապատրաստման և իրականացման համար, դասախոսին ընձեռում են լայն հնարավորություն կիրառելու մի շարք մեխանիզմներ, որոնք ուսումնառողին հնարավորություն կտան ավելի հեշտ յուրացնելու դասընթացը:

Հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառման արդյունքում դասախոսակենտրոն ուսուցումից ուսանողակենտրոն ուսուցման անցման գործընթացը ենթադրում է, որ դասընթացը պետք է կառուցվի [1].

- 1) համակարգչային տեխնոլոգիաների առավել ակտիվ կիրառմամբ,
- 2) ուսուցման համար առավել հարմարավետ միջավայրի ստեղծմամբ,
- 3) խնդիրների բովանդակային կողմի վրա կենտրոնանալու հնարավորության ստեղծմամբ:

Հեռավար ուսուցումը նպաստում է ուսուցման այնպիսի տեխնոլոգիաների ձևավորմանը, որոնց նպատակը արդեն հայտնի գիտելիքների, հմտությունների և ունակությունների փոխանցելն է:

Տեղեկատվական հոսքի աճող ծավալը և վերջինիս անկառավարելի լինելը ստիպում են կատարելագործելու վերլուծության և տեղեկատվությունը գիտելիքի վերածելու հայտնի մոդելները, ու առաջնահերթ խնդիր է դառնում ոչ թե էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների առկայությունը (չնայած դրանց կարևորությանը), այլ կրթական գործընթացի նոր մոդելների մշակումն ու ներդրումը: Ուստի կրթական համակարգի հեռանկարային զարգացման արդյունքում պետք է իրագործել.

- 1) համակարգչային տեխնոլոգիաների առավել ակտիվ կիրառում,
- 2) տեղեկատվության յուրացման արագությունը որոշելու հնարավորության ստեղծում,
- 3) ուսուցումն անհատականացնելու հնարավորություն և առավել հարմարավետ միջավայրի ստեղծում,
- 4) խնդիրների բովանդակային կողմի վրա կենտրոնանալու հնարավորության ստեղծում:

Համակարգչային մեթոդները դրական տրամադրվածություն են ստեղծում առարկայի և ուսուցման գործընթացի նկատմամբ, թույլ են տալիս անհրաժեշտության դեպքում վերադառնալ առանձին կարևոր պահերին, ինչը ոչ միշտ է հնարավոր դասախոսության ժամանակ:

Մուլտիմեդիա համակարգերն ապահովում են ձայնային և տեսապատկերների ավելի բարձր որակ, քան դասախոսությունների ժամանակ օգտագործվող սլայդները: Եվ վերջապես՝ օնլայն ցանցերում ներկայացվող հեռավար ուսուցումը հնարավորություն է տալիս սովորողներին նյութի ուսումնասիրման ընթացքում շփվելու միմյանց հետ և քննարկելու բարդ հարցեր:

Մեր կողմից մշակվող հեռավար ուսուցումը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

1. ավտոմատացված ալգորիթմների մշակում,
2. գրանցման ինտերֆեյսի (միջերեսի) նախապատրաստում և ուսանողների գրանցման համակարգի նախագծում,
3. դասախոսների գրանցման համակարգի նախագծում և ինտերֆեյսի (միջերեսի) պատրաստում:

Անձնական տվյալներ

Անուն

Ազգանուն

Հայրանուն

Ծննդյան օր  
mm/dd/yyyy

Գրանցման հասցե

Բնակության հասցե

Հեռախոսահամար

Հեռախոսահամար

Սեռ  
Արական

Կրթություն

Ազգություն

Անձնագրի տվյալներ

Անձնագրի սերիա

Տրման ամսաթիվ  
mm/dd/yyyy

Վավեր է մինչև  
mm/dd/yyyy

Ում կողմից

Սոցիալական քարտի համար

Նկար.1

Գիտական աստիճան

Պաշտոն

Կոչում

Ամբիոն  
Ինֆորմատիկա և Կիրառական մաթեմատիկա

Նկար.2

4. ֆակուլտետների բաժինների, կուրսերի և խմբերի համար դինամիկ համակարգի ստեղծում,

5.աշխատանք ֆայլային համակարգի հետ, ֆայլերի ներբեռնման և վերաբեռնման համակարգի նախագծում:

|                                                            |                                                                                                   |
|------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------|
| Վերնագիր                                                   | Նկարագրություն                                                                                    |
| <input type="text"/><br>Կարգավիճակ<br><input type="text"/> | <input type="text"/><br>Կցել ֆայլեր<br><input type="button" value="Choose Files"/> No file chosen |

Նկար.3

Ստորև ներկայացնենք ֆայլերի վերաբեռնման ծրագրային կոդի մի հատված.

```
using System;
using System.IO;
using System.Text;
using System.Globalization;
using System.Threading.Tasks;
using Microsoft.AspNetCore.Http;
using Microsoft.Net.Http.Headers;
using System.Collections.Generic;
using Microsoft.AspNetCore.WebUtilities;
using Microsoft.AspNetCore.Http.Features;
using Microsoft.AspNetCore.Mvc.ModelBinding;

namespace Distance_Learning.Helpers
{
    public static class FileStreamingHelper
    {
        private static readonly FormOptions _defaultFormOptions = new
        FormOptions();

        public static async Task<Tuple<FormValueProvider, IDictionary<string,
        Stream>>> GetFormData(this HttpRequest request)
        {
            if (!MultipartRequestHelper.IsMultipartContentType(request.ContentType))
                throw new Exception($"Expected a multipart request, but got
                {request.ContentType}"); //TODO:Write here log.

            // Used to accumulate all the form url encoded key value pairs in the request.
            var formAccumulator = new KeyValueAccumulator();

            // Container for files.key - file name, value - file stream
            var fileStreams = new Dictionary<string, Stream>();

            string boundary =
            MultipartRequestHelper.GetBoundary(MediaTypeHeaderValue.Parse(request.Conte
            ntType),
```

```

_defaultFormOptions.MultipartBoundaryLengthLimit);

var reader = new MultipartReader(boundary, request.Body);

var section = await reader.ReadNextSectionAsync();
while (section != null)
{
    if (ContentDispositionHeaderValue.TryParse(section.ContentDisposition,
out ContentDispositionHeaderValue contentDisposition))
    {
        if
(MultipartRequestHelper.HasFileContentDisposition(contentDisposition))
        {
            MemoryStream memoryStream = new MemoryStream();
            await section.Body.CopyToAsync(memoryStream);
            fileStreams.Add(contentDisposition.FileName.Value,
memoryStream);
        }
        else if
(MultipartRequestHelper.HasFormDataContentDisposition(contentDisposition))
        {
            if (contentDisposition.Name != "files")
            {
                // Do not limit the key name length here because the
                // multipart headers length limit is already in effect.
                var key =
HeaderUtilities.RemoveQuotes(contentDisposition.Name);
                var encoding = GetEncoding(section);
                using (var streamReader = new StreamReader(section.Body,
encoding, detectEncodingFromByteOrderMarks: true,
bufferSize: 1024,
leaveOpen: true))
                {
                    // The value length limit is enforced by
MultipartBodyLengthLimit
                    var value = await streamReader.ReadToEndAsync();

                    if (string.Equals(value, "undefined",
StringComparison.OrdinalIgnoreCase))
                        value = string.Empty;

                    formAccumulator.Append(key.Value, value); // For .NET Core
<2.0 remove ".Value" from key

                    if (formAccumulator.ValueCount >
_defaultFormOptions.ValueCountLimit)

```



```

        throw new InvalidDataException($"Form key count limit
        {_defaultFormOptions.ValueCountLimit} exceeded.");
    }
}

// Drains any remaining section body that has not been consumed and
// reads the headers for the next section.
section = await reader.ReadNextSectionAsync();
}

// Bind form data to a model
var formValueProvider = new FormValueProvider(BindingSource.Form, new
FormCollection(formAccumulator.GetResults()),
CultureInfo.CurrentCulture);

return new Tuple<FormValueProvider, IDictionary<string,
Stream>>(formValueProvider, fileStreams);
}

private static Encoding GetEncoding(MultipartSection section)
{
    MediaTypeHeaderValue mediaType;
    var hasMediaTypeHeader =
MediaTypeHeaderValue.TryParse(section.ContentType, out mediaType);
    // UTF-7 is insecure and should not be honored. UTF-8 will succeed in
    // most cases.
    if (!hasMediaTypeHeader || Encoding.UTF7.Equals(mediaType.Encoding))
    {
        return Encoding.UTF8;
    }
    return mediaType.Encoding;
}
}
}

```

Հաշվի առնելով ուսանողների տարիքային, անհատական առանձնահատկությունները, նրանց հետաքրքրությունները, պահանջմունքները և ապագայի նկատմամբ ունեցած ծրագրերը դասախոսի խնդիրն է՝ ստեղծել այնպիսի աշխատանքային միջավայր, որը կնպաստի նրանց մտավոր և ստեղծագործական գործունեությանը:

Հեռավար կրթության ժամանակ ուսումնական հաստատությունը յուրաքանչյուր ուսանողի համար ապահովում է հեռավար կրթության միջոցների և տեղեկատվության հիմնական ռեսուրսների հասանելի լինելը՝ ուսումնական պլանի ժամաքանակների, համապատասխան

կրթական ծրագրի կամ նրա մասի յուրացման համար անհրաժեշտ ժամաքանակի ծավալին համապատասխան [2]:

Հեռավար կրթության ժամանակ ուսումնական հաստատությունն ուսանողներին գիտական և ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերում է դասավանդողների միջոցով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառման եղանակով:

Հեռավար ուսուցման ծրագրի կոնկրետ պահանջները արտացոլված են թեստային առաջադրանքներում: Դրանք ունեն 2 հիմնական գործառույթներ՝ հսկիչ և խթանիչ [3]:

**Դրանցից առաջինն** արտաքին հսկողության ձևն է, որի օգնությամբ որոշվում է յուրացված գիտելիքների մակարդակը:

**Երկրորդն**՝ ինքնավերահսկողության ձևն է, որի օգնությամբ ուսանողը հայտնաբերում և շտկում է սեփական գիտելիքների բացթողումները:

Նշենք, որ առավել որակյալ ուսուցում ապահովվում է «սովորող-դասախոս» օպերատիվ հետադարձ կապի առկայությամբ [4]: Դա թույլ է տալիս օգտագործել ինտերակտիվ ուսուցման բարձր արդյունավետություն ունեցող մեթոդներ [5]:

Ուսումնական գործընթացի ընթացիկ վերահսկողությունը և սովորողների միջանկյալ ատեստավորումը իրականացվում է ուսումնական հաստատության կողմից ավանդական մեթոդներով կամ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ (էլեկտրոնային թեստավորում)՝ ապահովելով ուսանողների անձի գաղտնիությունը, իսկ ուսումնական հաստատությունը, սահմանում է առարկաների բովանդակությունը և ծավալը, ուսանողների կողմից դրանց յուրացման որակի ապահովման պայմանները ու դրանց հսկողության իրականացման պահանջները [6]:

Հեռավար ուսուցման ընթացիկ վերահսկողության ժամանակ ցուցադրական նյութերի օգտագործման մեջ մտնում են սխեմաները, գծանկարները, աղյուսակները, կինո-ֆոտո-աուդիո և այլ նյութերը, որոնք ամրապնդում են ստացած տեսական և գործնական գիտելիքները [7]:

Մերվերում տեղադրված են ուսումնական պլանով նախատեսված առարկաների առաջադրանքները, ստուգողական աշխատանքները, ստուգարքների և քննությունների հարցաշարերը: Սովորողները հարցումներն ու քննությունները թեստավորման միջոցով հանձնում են ավտոմատացված համակարգով կամ էլ առցանց եղանակով և ստանում համապատասխան գնահատական, ապահովվում է գնահատման անաչառությունը [8]:

Այսպիսով՝ հեռավար ուսուցման ժամանակ ուսանողի սովորելու ունակությունները մեծացնելու և գիտելիքն արդիականացնելու խնդրի առաջնահերթության գիտակցումը ենթադրում է մշտական աշխատանք և նշանակալի ներդրումներ, ու առավել կարևորվում են խմբային աշխատանքները, համագործակցային ուսուցումը, ակտիվ ուսումնական գործընթացը:

Հոդվածը տպագրվում է ԱՀ կառավարության կողմից ֆինանսավորվող Արցախի գիտական կենտրոնի հետ համատեղ իրականացվող «18 AK-004 "Արցախում հեռավար ուսուցման WEB ծրագրային մոդելի մշակում"» գիտական թեմայի շրջանակներում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Вайндорф-Сысоева, М. Е. Методика дистанционного обучения : учебное пособие для вузов / Вайндорф-Сысоева М. Е. , Грязнова Т. С. , Шитова В. А. ; под общей редакцией Вайндорф-Сысоевой М. Е. . — Москва : Издательство Юрайт, 2020. — 194 с. — (Высшее образование). — ISBN 978-5-9916-9202-1
2. Жапарова, Самал Внедрение системы дистанционного обучения Moodle в высшем образовании / Самал Жапарова. - М.: LAP Lambert Academic Publishing, **2019**.-112 с.
3. Шлыкова, Ольга Владимировна Книжная Культура В Электронной Образовательной Среде И Новые Технологии Обучения / Шлыкова Ольга Владимировна. - Москва: ИЛ, **2017**. - 616 с.
4. Бочков В. Е. Учебно-методический комплекс как основа и элемент обеспечения качества дистанционного образования // Качество. Инновации. Образование. – 2004. - N 1. - С. 53-61.
5. Алексеев Г.В. Современные подходы к решению некоторых проблем непрерывного образования [Электронный ресурс]: монография/ Алексеев Г.В., Андреев С.И., Боровков М.И.— Электрон. текстовые данные.— Саратов: Вузовское образование, 2015.— 195 с
6. Авраамов Ю. С. Практика формирования информационно-образовательной среды на основе дистанционных технологий // Телекоммуникации и информатизация образования. – 2004. - N 2. - С. 40-42.
7. Топунова М. К. Оценка качества знаний учащихся при дистанционном обучении в системе начального общего образования // Дистанционное и виртуальное обучение. - 2012. - № 2. - С. 31-42.
8. Ерёмин А.В. Анализ использования платформ и систем дистанционного образования/ Ерёмин А.В., Гусаков Д.В. // Пожарная и техносферная безопасность: проблемы и пути совершенствования. 2020. № 1 (5). С. 257-259.

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, ֆ.ս.գ.թ. Գ.Տ.Սահակյանը:

ՀՏԴ621.315

Ֆիզիկա

*Ալբերտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*

*ԱրՊՀ, Ընդհանուր և կիրառական ֆիզիկայի ամբիոն,*

*Ֆ.ս.գ.դ., պրոֆեսոր,*

*E-mail: [alalbert@inbox.ru](mailto:alalbert@inbox.ru)*

*Արսեն ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*

*Արցախի գիտական կենտրոն*

*E-mail: [alex.armen88@gmail.com](mailto:alex.armen88@gmail.com)*

**ՔՎԱՆՏԱՅԻՆ ԿԵՏԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐՈՒՄ  
ԳԵՐԿԱՐՃ ԼՈՒՍԱՅԻՆ ԻՄՊՈՒԼՍԻ  
ՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ՈՉԳԾԱՅԻՆ ԿԼԱՆՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Աշխատանքում նկարագրվում է լազերի գերկարճ իմպուլսի կլանման հազեցումը քվանտային կետերի հիմնական էքսիտոնային անցման դեպքում: Ենթադրվում է, որ երկմակարդակ համակարգերում վիճակների լցումը տեղի է ունենում լույսի ինտենսիվությունից կախում ունեցող ռելաքսացիայի ժամանակ:

*Բանալի բառեր`* իմպուլս, նանոկառուցվածք, քվանտային կետ, հազեցում, կլանում, ռելաքսացիա, երկկայունություն:

*Ալ.Алексаян, А. Алексаян*

**ОБ ОСОБЕННОСТИ НЕЛИНЕЙНОГО РЕЗОНАНСНОГО  
ПОГЛОЩЕНИЯ УЛЬТРАКОРОТКИХ ИМПУЛЬСОВ СВЕТА В  
СТРУКТУРАХ С КВАНТОВЫМИ ТОЧКАМИ**

В работе описывается процесс насыщения поглощения ультракороткого импульса лазера при резонансном возбуждении основного экситонного перехода в квантовых точках. Предполагается что заполнение состояний двухуровневой системы происходит в условиях зависимости времени жизни возбужденного состояния от интенсивности света.

*Ключевые слова:* импульс, наноструктура, квантовая точка, насыщение, поглощение, релаксация, бистабильность.

*Al. Alexanyan, A. Alexanyan*

**ON THE FEATURES OF NONLINEAR RESONANCE ABSORPTION**

**OF ULTRA SHORT LIGHT PULSES IN STRUCTURES WITH QUANTUM DOTS**

*The paper describes the process of saturation of absorption of an ultrashort laser pulse by resonant excitation of the main exciton transition at quantum dots. It is assumed that the filling of the states of a two-level system occurs under the conditions of the dependence of the lifetime of the excited state on the light intensity.*

**Keywords:** momentum, nanostructure, quantum dot, saturation, absorption, relaxation, bistability.

Հայտնի է, որ ստացիոնար գրգռման ժամանակ քվանտային կետերի համախմբության կողմից կլանման հազեցման էֆեկտը կարող է նկարագրվել երկմակարդակ համակարգի մոդելի օգնությամբ [1]: Սակայն եթե լազերային ճառագայթման իմպուլսի տևողությունը շատ ավելի փոքր է, քան գրգռման վիճակում ՔԿ-ի կյանքի տևողությունը, ապա գրգռումը այլևս ստացիոնար չի հանդիսանում: Այդ իսկ պատճառով ՔԿ-ում էքսիտոնների ռեզոնանսային գրգռման ժամանակ գերկարճ հզոր լազերային իմպուլսների ոչ գծային կլանման վերլուծությունը կկատարվի օգտագործելով երկմակարդակ համակարգի վիճակների լցման մոդելը ոչ ստացիոնար գրգռման դեպքում: Այդ դեպքում իմպուլսի տարածումը որոշ չափով կարելի է նկարագրել կինետիկ հավասարման միջոցով [2]

$$\frac{\partial n_2}{\partial t} = -\sigma(n_2 - n_1)I(t, z) - \frac{n_2}{\tau_{ex}(I)}, \quad (1)$$

$$\frac{dI}{dz} = \sigma(n_2 - n_1)I(t, z) : \quad (2)$$


$I(t, z)$ -ֆոտոնների նորմավորված հոսքն է,  $n_2 \gg n_1$ -գրգռված և հիմնական վիճակում ՔԿ-ի խտությունները,  $\sigma$ -կլանման լայնական կտրվածքը մեկ ՔԿ-ի հաշվարկով: Այստեղ հաշվի չեն առնվում լազերային իմպուլսի և միջավայրի փոխազդեցության ժամանակ կոհերենտության էֆեկտները, և միայն նկարագրվում է ոչ կոհերենտ օպտիկական հազեցումը ռեզոնանսային միջավայրում: Իրոք, ինչպես փորձնական [4], այնպես էլ տեսական [5] հետազոտությունները ցույց են տվել, որ լազերային իմպուլսների անցելիությունը կտրուկ աճում է փոքր արժեքներից ցածր մուտքային ինտենսիվությունների դեպքում մինչև 100%-ի մոտ արժեքներ, երբ մուտքային հզորությունը հասնում է որոշակի շեմին և գերազանցում է այն:

Լազերային տեխնոլոգիաների զարգացումը և քվանտային կետերում կյանքի տևողությունից փոքր տևողությամբ և մի քանի Գվտ հզորությամբ հոսանքներով լուսային իմպուլսների ձևավորման մեթոդներում ձեռք բերված առաջընթացը լիովին նոր խնդիրներ են դրել ոչ գծային միջավայրերի օպտիկայի առջև:

Սովորաբար երբ միջավայրի ռեզոնանսային գրգռումը կատարվում է հզոր լուսային իմպուլսով, ապա ոչ գծային կլանման պրոցեսը նկարագրելու համար օգտվում են երկմակարդակ համակարգի կլանման հազեցման մոդելից, ընդ որում համարվում էր, որ գրգռված վիճակի կյանքի տևողությունը մնում է հաստատուն և կախված չի գրգռման հզորությունից:

[3] աշխատանքում դիտվում էր անցելիության աճի տեմպի նվազումը, երբ մղման ինտենսիվությունը աճել է Գվտ արժեքները: [3] հեղինակների կողմից ՕԺԷ-ռեկոմբինացման պատճառով ՔԿ-ում էքսիտոնների կյանքի տևողության նվազման հաշվառումը թույլ է տվել նրանց տալու ՔԿ-ում անցելիության նվազման որակական պատկերը, երբ աճում է գրգռող ճառագայթման ինտենսիվությունը:

Իրոք, ՕԺԷ-պրոցեսը կարող է բերել գրգռված վիճակի կյանքի տևողության զգալի նվազմանը համաձայն  $\tau_{ex} \approx I_0^{-2}$  օրենքի [6]: Սակայն այդ դեպքում էլքային և մուտքային ազդանշանների առավելագույն ինտենսիվությունների հարաբերության հաշվարկային կորը  $(I/I_0)$ , որպես մուտքային ազդանշանի առավելագույն  $I_0$  ինտենսիվությունների ֆունկցիա, ունի բեկյալ բնութագիծ [3]: Միաժամանակ այդ կախումը ունի ողորկ բնույթ: Ելնելով վերոհիշյալից՝ աշխատանքի խնդիրն է այնպիսի մոդելի կառուցումը, որ թույլ կտա ստանալու ողորկ բնութագիծը: Հարկ է նշել, որ ճառագայթման և ՔԿ ոչ գծային փոխազդեցությունը կարող են բերել  $\tau_{ex}$  նվազեցմանը մեկ այլ ֆիզիկական մեխանիզմով: Որպես օրինակ դիտարկվել է ՔԿ-օսցիլյատորների դիպոլային մոմենտի գրգռումը, որն էլ իր հերթին առաջացնում է դիպոլ-դիպոլ փոխազդեցությունը և բերում է ռելաքսացիայի ժամանակի նվազեցմանը [6]: Այսինքն՝  $\tau_{ex}$  նվազեցմանը կարող են բերել մի քանի ֆիզիկական մեխանիզմներ: Ելնելով դրանից՝ մենք առաջարկել ենք ֆենամենալոգիկ մոտեցում մոդելի ընտրության հարցում՝  $\tau_{ex}(I)$ -ճառագայթի ինտենսիվությունից կախում ունեցող գրգռված էքսիտոնների ռելաքսացիայի ժամանակը նկարագրել հետևյալ ֆունկցիայով՝ (տես նկ.1)



Նկ.1.

$$\tau_{ex}(I) = \frac{\tau_{ex}(0)}{1 + \exp\left(\frac{I_0 - I_{th}}{\gamma}\right)} + \tau_{ex}(\infty) : \quad (3)$$

Համաձայն [7]-ի հաշվի առնելով (1) և (2) կինետիկ հավասարումները կարող ենք ստանալ անչափայնության տեսքով հավասարում  $T = I(x, t)/I_0$  անցելիության համար՝

$$\frac{d}{d\tau}(\ln T) + \ln T = 2\sigma I_0 \tau_{ex} f(\tau)(1 - T) + \ln T_0 : \quad (4)$$

$I$ -ֆոտոնների հոսքը կառուցվածքի  $x$  խորությամբ ժամանակի  $t$  պահին,  $\sigma$ -մեկ ՔԿ կլանման կտրվածքն է,  $I_0$ -ֆոտոնների հոսքը կառուցվածքի սկզբում,  $T_0$ -անցելիությունն է գծային կլանման դեպքում,  $f(\tau) = \frac{1}{2}\left(1 - \cos\pi\frac{t}{\Delta t}\right)$ -լազերային իմպուլսի ձևն է,  $\tau = \frac{t}{\tau_{ex}}$ ,  $\Delta t$ -իմպուլսի տևողությունն է: Այնուհետև կատարվել է թվային հաշվարկ՝ հաշվի առնելով, որ  $I_0$  ինտենսիվության աճը բերում է համաձայն (3) բանաձևի  $\tau_{ex}$ -ի նվազմանը: Ինչպես երևում է նկ.2-ից արդյունքները, թվային հաշվարկների (3) և (4)-ի օգտագործմամբ, համապատասխանում են էքսպերիմենտալ արդյունքների:

Անհրաժեշտ է նշել, որ երկմակարդակ համակարգի համար գոյություն ունի վտանգ սխալ կատարելու՝ ընդունելով ոչկոհերենտ հազեցման դրսևորումը որպես ինքնահինդուկցման պարզեցում [1], որովհետև իրականում բավական հզոր ոչկոհերենտ իմպուլսները կարող են տեղափոխել. Տվյալ դեպքում՝ քվանտային կետերի կետը վերևի մակարդակ և լուսային իմպուլսի առաջին մասի ազդեցությամբ հազեցնել կլանման գծի կոնտուրը: Իմպուլսի մնացած մասը կանցնի միջավայրը առանց կլանման: Բացի դրանից՝ իմպուլսը միջավայրից դուրս կգա ուշացումով, որովհետև իմպուլսի առաջին մասի էներգիան ծախսվում է միջավայրի հազեցմանը: Այսպիսով՝ միջավայրը “խժոելով” իմպուլսի առաջին մասը, առաջացնում է նրա ծանրության կենտրոնի տեղափոխումը, այսինքն՝ բերում է նրա ձևի փոփոխմանը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аллен Л., Эберли Дж.. Оптический резонанс и двухуровневые атомы. И., Мир, 1978.
2. Weigscheider W., Pfeiffer L.N. Et.al., Phys.Rev.Let.-1993, v.71, №24, p.4071.
3. Днепровский В.С., Жуков Е.А. и др. ФТТ, 2010, том 52, вып.9, с.1809.
4. Z.Luo, H.Chen. Live et al., Appl.Opt.54, 2845 (2015)  
J.I.Saari, M.M.Krause, B.R.Walsh. Et al., Science 13, 722 (2013).
5. Schmitt-Rink S., Miller D.A., Chemla D.S. Theory of linear and nonlinear optical properties, Phys.Rev.B, 1987, v.35, №15, p.8113-8125.
6. Smith K.W., Allen L. Optics Comm., 8, 166 (1973).
7. Selden A.C. Brit J. Appl.Phys, 18, (1967).

**Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, ֆ.մ.գ.թ., Կ. Ս. Արամյանը:**



ՀՏԴ 911.3(379.243)

Աշխարհագրություն

Անահիտ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱրՊՀ, Աշխարհագրության ամբիոն, աշխ. գիտ. թեկ.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀԱՎԵՐՆԵՐԸ**

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ արագ են զարգանում այն երկրները, որտեղ մեծ է համայնքների դերը, գոյություն ունի տեղական ինքնակառավարման բարձր աստիճան, և համայնքները օժտված են մեծ լիազորություններով: Աշխատանքում հիմնավորել ենք այն մոտեցումները, որոնց համաձայն Արցախի Հանրապետության համայնքների արագ զարգացումը հնարավոր է միայն մեծ ներդրումներ կատարելու և կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում: Առանձնակի ուշադրություն ենք դարձրել ռեսուրսների ծախսման ուղղություններին ու դրանց արդյունավետությանը:

**Բանալի բառեր՝** համայնք, տեղական ինքնակառավարում, բյուջե, կայուն զարգացում, եկամուտներ, միջհամայնքային միավորում, ավագանի, դատադիա, շրջվարչակազմ:

A. Григорян

**ПРОБЛЕМЫ И ВЫЗОВЫ ДЛЯ РАЗВИТИЯ СЕЛЬСКИХ  
ОБЩИН РЕСПУБЛИКИ АРЦАХ**

Международный опыт показывает, что те страны развиваются быстрее, где роль общин большая, существует высокая степень местного самоуправления и общины имеют большой авторитет. В работе, мы обосновали подходы, согласно которым быстрое развитие сообществ Республики Арцах возможно только в результате крупных инвестиций и повышения эффективности управления. Мы уделили особое внимание направлениям расходования ресурсов и их эффективности.

**Ключевые слова:** община, местное самоуправление, бюджет, устойчивое развитие, доходы, межобщинный союз, совет старейшин, субсидии, районная администрация.

A. Grigoryan

**THE PROBLEMS AND CHALLENGES FOR THE DEVELOPMENT  
OF THE RURAL COMMUNITIES OF THE REPUBLIC OF ARTSAKH**

The international experience shows that those countries are

*developing rapidly where the role of communities is great, a high degree of self-government exists and the communities have great authorities. In the work we have substantiated the approaches, according to which, the rapid development of the communities of the Artsakh Republic is possible only in the result of making large investments and increasing the efficiency of the management. We have paid a special attention to the directions of spending resources and to their efficiency.*

**Keywords:** *Community, local self-government, budget, sustainable development, incomes, inter-community union, council of elders, subsidy, district administration.*

Արցախի Հանրապետության բնականոն զարգացումն իր քողի տակ կրում է համայնքների կայուն զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, արագ են զարգանում այն երկրները, որտեղ մեծ է համայնքների դերը, գոյություն ունի տեղական ինքնակառավարման բարձր աստիճան, և համայնքներն օժտված են մեծ լիազորություններով:

Թեմայի նպատակն է առաջադրել և հիմնավորել այն մոտեցումները, որոնց համաձայն՝ Արցախի Հանրապետության համայնքների արագ զարգացումը հնարավոր է միայն մեծ ներդրումներ կատարելու և կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում: Առաջնորդվելով այդ նպատակով՝ խնդիր ենք դրել բացահայտելու համայնքների ռեսուրսների ծախսման ուղղություններն ու դրանց արդյունավետությունը:

Այսօր համայնքների առջև ծառացած հիմնախնդիրները, ձևավորվող եկամուտների և անհրաժեշտ ծախսերի միջև եղած շեղումը անհամեմատ մեծ են, խոչընդոտ է հանդիսանում համայնքների կայուն զարգացման գործում: Իսկ ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը բացատրվում է նրանով, որ կառավարման մեջ բացակայում են նոր տեխնոլոգիաներն ու նոր մոտեցումները:

Պետք է նկատել, որ բյուջեն կազմում են՝ հիմք ընդունելով նախորդ տարիների տվյալները: Ստացվում է, որ առանձին ոլորտների կամ ծառայությունների համար չկա որևէ գնահատման մեխանիզմ: Եթե մենք ունենանք ծրագրային բյուջետավորում, ապա կունենանք նաև ամեն մի ծրագրի համար չափորոշիչներ: Տեղական ինքնակառավարման մարմինները, տարին ամփոփելիս, ոլորտի վերլուծություն ու առաջացած խնդիրների գնահատում չեն կատարում: Բայց դրանք, մեր կարծիքով, շատ են անհրաժեշտ՝ հավաստելու, թե ինչ միջոցներ են պետք հաջորդ տարում խնդիրները արմատապես լուծելու համար: Դեռ ավելին, համայնքները չունեն հստակ հաշվարկ, թե ինչքան գումար է անհրաժեշտ մի ոլորտի

խնդրի լուծման համար և ինչ միջոցներ են պահանջվում թերևս մոտակա հինգ տարվա կտրվածքով բոլոր խնդիրները լուծելու համար: Զարգացած երկրների բազմաթիվ համայնքներ կիրառում են ներդրումների ներգրավման և մեծ ընկերությունների համար ավելի գրավիչ միջավայր ստեղծելու քաղաքականությունը: Օրինակ՝ Ճապոնական Յոկոհամա քաղաքի զարգացման պատմությունը սկսվում է «Նիսսան» ընկերության ձեռնարկություններն ու կենտրոնակայանը այս քաղաք տեղափոխելուց:[3] Ընկերության հիմնական գրավականը հողահատկացումն ու հարկային արտոնություններն էին: Իհարկե, բոլոր ուղղություններով աշխատանքը կարևոր է, սակայն պետք է որոշվի առաջնայինը, այն թիրախը, որին ուղղված է տեղական տնտեսական ջանքերի մեծ մասը: Այս որոշումից է կախված, թե հետագայում ինչպիսի կառուցվածք կունենա համայնքի տնտեսությունը, որ ճյուղը կդառնա տնտեսության զարգացման շարժիչ ուժը: Համայնքների գործարարության զարգացումը հնարավոր է աջակցության մրցունակ ծառայությունների զուգակցմամբ: Զարգացած երկրներում տարբեր ձևաչափեր և կազմակերպական ձևեր կան նման ծառայությունների մատուցման համար: Որոշ տեղերում դրանք հենց ՏԻՄ-երում առկա բաժիններ են, ազգային կառույցների տեղական ներկայացուցչություններ, բիզնես կենտրոններ, տեխնոլոգիական պարկեր կամ ինկուբատորներ:

Յուրաքանչյուր տարի Արցախի իշխանությունը պետական բյուջեի միջոցով դոտացիոն գումարներ է հատկացնում հանրապետության համայնքներին, ինչն էլ խոսում է պետական բյուջեից համայնքների կախվածության մասին: Նույնը տեղի է ունենում նաև Հայաստանի Հանրապետությունում: Սակայն պետք է գիտակցել, որ ՀՀ-ն հնարավորություն ունի բյուջետային վարկեր ներգրավել այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից: Իսկ Արցախի Հանրապետության անկախությունը չճանաչված լինելը մեզ զրկում է նման հնարավորություններից: [5]

Հետազոտությունները ցույց են տվել նաև այն, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել սոցիալական ձեռնարկությունների գաղափարին: Համայնքի պարագայում այն առավել քան արդյունավետ կլինի, քանի որ ստեղծված արդյունքը և ստացված եկամուտը կմնա համայնքին և մեծ սոցիալական ազդեցություն կունենա: Համայնքների զարգացման հաջորդ նախապայմանը համայնքների կառավարման արդյունավետության բարձրացումն է: Խոսքը համայնքների ավագանիների մասին է: Վերջիններիս գործունեությունը գրեթե անհնար է առանց կառավարման ինստիտուտի արդյունավետության բարձրացումն: Պատճառն այն է, որ համայնքների կառավարման միակ մարմինը ավագանու ինստիտուտն է, որը, և՛ Հայաստանի և Արցախի Հանրապետություններում բացակայում է: Մեր երկու հանրապետությունների համայնքներում ավագանիների գործունեությունը մեծամասամբ արդյունավետ չէ: [1] Հեշտորեն

կառավարվում են համայնքապետերի կողմից: Դա խոչընդոտում է գրագետ և արհեստավարժ կադրերի ներգրավումը և որոշումների արդյունավետության բարձրացումը:

Հիմք ընդունելով 2011 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորների ձևավորման հայեցակարգը, ինչպես նաև մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները՝ բացահայտվեցին, որ համայնքների խոշորացման դեպքում մեզ սպասվում են ինչպես դրական արդյունքներ, այնպես էլ բազմաթիվ խնդիրներ, որոնց անտեսումը հղի կլինի շատ վտանգավոր հետևանքներով: [1]

Այսպես՝ համայնքների խոշորացման դեպքում դրական արդյունքներ կամ ցանկալի փոփոխություններ են համարվում՝

1. մարդկային ռեսուրսների համախմբումը,
2. համայնքի կառավարման արդյունավետության բարձրացումը,
3. ենթակառուցվածքների զարգացումը և ծառայությունների արդյունավետության բարձրացումը,
4. ֆինանսական կարողությունների ուժեղացումը և համայնքների լիազորությունների ընդլայնումը,
5. համայնքների զարգացման կապիտալ ծրագրերի իրականացումը և այլն:

Իսկ ո՞րոնք են այն բացասական հետևանքները, որոնք լրջորեն մտահոգում են և՛ բնակչությանը, և՛ տեղական ինքնակառավարման մարմիններին: Դրանք են՝

1. համայնքային ծառայողների կրճատումը,
2. ծառայությունների տեղափոխումը համայնքներից, օրինակ՝ բուժկետը կամ սոցիալական այլ ծառայությունները և այն, որոնք հեռու կլինեն հատակապես լեռնային և ծայրամասային շրջաններում, և բնակիչները ստիպված կլինեն լրացուցիչ ժամանակ և գումար ծախսել դրանցից օգտվելու համար,
3. միավորված համայնքների միջև ռեսուրսների անհամաչափ բաշխման վտանգը: Այստեղ կարևոր է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք:

ա) կառավարման տեսանկյունից գրեթե անհանար է դառնում փոքր համայնքից ընտրվել միացյալ համայնքի ղեկավար,

բ) համայնքների միավորումը կխոչընդոտի ավելի մեծ պոտենցիալ ունեցող համայնքների զարգացումը, կնվազեցնի զարգացման տեմպերը, կստացվի, որ փոքր համայնքների զարգացումը տեղի կունենա մեծ թվով ռեսուրսներ ունեցող բնակավայրերի հաշվին:

E-mail: [balayan-karine@mail.ru](mailto:balayan-karine@mail.ru)

**Աիդա ԹՈՐՈՍՅԱՆ**

ԱրԴՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոն, Կ.գ.թ., դոցենտ

E-mail: [aidatorosyan@mail.ru](mailto:aidatorosyan@mail.ru)

**Ռոզա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս,

E-mail: [rozakostandyan67@mail.ru](mailto:rozakostandyan67@mail.ru)

**ԱՐՑԱԽՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ԳԵՂԱԶԱՐԴԱՅԻՆ  
ԲՈՆՅԱԵՐԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԿԱՌՈՆՑՎԱԾՔԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Աշխատանքում ներկայացվում են Արցախում տարածված գեղազարդային բույսերի վեգետացիայի տարբեր փուլերում 2018-2020 թթ. ընթացքում կատարված ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների արդյունքները: Արցախի գեղազարդային բույսերի գենոֆոնդն իր մեջ ընդգրկում է այնպիսի տեսակներ, որոնք միաժամանակ հանդիսանում են նաև երեքայտղատու, ներկատու, սննդային, համեմունքային և դեղատու: Գեղազարդային բույսերի կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունները թվային մանրադիտակի միջոցով հնարավորություն են տվել բացահայտելու նրանց անատոմիական կազմությունը, արտադատող և ծածկող հյուսվածքների տարրերը:

**Բանալի բառեր`** Արցախ, գեղազարդիչ բույսեր, գնարբուկ, շտերնբերգիա, բազմոտիկ, բերենիկե, անմոռուկ, խոլորձ, վարդակակաչ, հովտաշուշան, պապլոր, ձնծաղիկ, ոսկեհազարուկ:

**К. Балаян, А. Торосян, Р. Костандян  
ВИДОВОЕ РАЗНООБРАЗИЕ И СТРУКТУРНЫЕ  
ОСОБЕННОСТИ ДЕКОРАТИВНЫХ РАСТЕНИЙ  
РАСПРОСТРАНЕННЫХ В АРЦАХЕ**

В работе представлены результаты полевых исследований и изучений в 2018-2020гг. декоративных растений Арцаха на разных

этапах вегетации. Генофонд декоративных растений Арцаха включает в себя виды, которые также являются эфирномасличными, красителями, съедобными, специями и лекарственными растениями. Исследования структурных особенностей декоративных растений с помощью бинокулярного цифрового микроскопа позволили нам выявить их анатомическое строение, элементы секреторных и покровных тканей.

**Ключевые слова:** Арцах, декоративные растения, первоцвет, штернбергия, многоножка, вероника, незабудка, орхидея, тюльпан, ландыш, мускари, подснежник, золототысячник.

**K. Balayan, A. Torosyan, R. Kostandyan**  
**SPECIES DIVERSITY AND STRUCTURAL FEATURES**  
**DECORATIVE PLANTS DISTRIBUTED IN ARTSAKH**

The work presents the results of field research and studies in 2018-2020. ornamental plants of Artsakh at different stages of vegetation. The gene pool of Artsakh ornamental plants includes species that are also essential oils, dyes, edible, spices and medicinal plants. Studies of the structural features of ornamental plants using a binocular digital microscope allowed us to identify their anatomical structure, elements of secretory and integumentary tissues.

**Keywords:** Artsakh, decorative plants, Primula, Sternbergia, Polypodium, Veronica, Myosotis, Orchis, Tulipa, Convallaria, Muscari, Galanthus, Centaurium.

Արցախը, չնայած իր համեմատաբար փոքր տարածքին, աչքի է ընկնում բուսական համակեցությունների և բուսատեսակների արտահայտված բազմազանությամբ: Արցախի լեռները ծածկված են անտառներով, թփուտներով կամ խոտային բուսականությամբ:

Արցախի տարածքում աճող վայրի 2027 բուսատեսակից գեղազարդային նշանակություն ունեն 454 տեսակ: Արցախի ֆլորայում գեղազարդային նշանակության բույսերի կենսաձևերի հարաբերակցությունը հետևյալն է. ծառատեսակներ – 31, թփատեսակներ – 22, կիսաթփեր – 7, լիաններ – 4, խոտաբույսեր – 390 տեսակ [1]:

Գեղազարդային բույսերն ընդգրկում են տարբեր ընտանիքների մշակովի և վայրի աճող բույսերի խմբեր: Աճեցվում են քաղաքների և այլ բնակավայրերի կանաչապատման, այգիների, պուրակների ձևավորման, հասարակական և բնակելի շենքերը զարդարելու համար: Աչքի են ընկնում ծաղիկների, տերևների, պտուղների բազմերանգությամբ: Գեղազարդային բույսերը լինում են. ըստ ցողունի աճման ձևի՝ ուղղաձիգ, մագլցող, հյուսվող, կախվող, փաթաթվող, կառչող, ըստ վեգետացիայի տևողության՝ միամյա, երկամյա, բազմամյա [5]:

Արցախում տարածված գեղազարդային բույսերի ուսումնասիրության ու գիտական հետազոտությունների կատարման համար մենք աշխատանքները իրականացրել ենք հետևյալ երթուղիներով. Ստեփանակերտ – Շուշի, Ստեփանակերտ – Տոդ, Ստեփանակերտ –

Տիզրանակերտ, Ստեփանակերտ – Վանք, Ստեփանակերտ – Ննգի – Հարավ, Ստեփանակերտ – Դադիվանք: Ընթացքում կիրառվել են հերբարիումային, գիտական գույքագրման մեթոդները: Բուսատեսակների մանրադիտակային ուսումնասիրություններն իրականացվել են ԱրՊՀ կենսաբանության լաբորատորիայում՝ թվային մանրադիտակի խոշորացմամբ(X150): Բուսատեսակների որոշումների ժամանակ օգտագործվել են դասական որոշիչներ [2, 3, 4]:

Գեղազարդային նշանակության բուսատեսակների մի մասը դեղատու է, որոնցից են՝ Կոմուխ Հեդինեի (*Inula helenium* L.), Տատրակ սովորական (*Tussilago farfara* L.), Մեխակ արևելյան (*Dianthus orientalis* Adams), Յմախ նրբագեղ (*Gypsophila elegans* Bieb.), Ծվծվուկ քլորատեր (*Silene chlorifolia* Smith.), Տուղտավարդ դեղնականաչ (*Alcea flavovirens* (Boiss. et Buhse) Iljin), Անակամպտիս բրգաձև (*Anacamptis pyramidalis* (L.) Rich.), Խոլորձ արական (*Orchis mascula* L.), Կակաչ արևելյան (*Papaver orientale* L.), Արյունխմիկ դեղատու (*Sanguisorba officinalis* L.), Տննտաշ օղակավոր (*Lysimachia verticillaris* Spreng.), Ցախակեռաս բուրավետ (*Lonicera caprifolium* L.), Մանուշակ գիշերային (*Hesperis matronalis* L.), Բազմոտիկ սովորական (*Polypodium vulgare* L.), Ապուզան թավոտ (*Epilobium hirsutum* L.), Հասմիկ թփուտային (*Jasminum fruticans* L.), Մատիտեղ ալպիական (*Polygonum alpestre* C. A. Mey.) և այլն:

Արցախի դենդրոֆլորայում ռելիկտային, ինչպես նաև գեղազարդային նշանակության բույսերը ներկայացված են հետևյալ տեսակներով՝ Սոսի արևելյան (*Platanus orientalis* L.), Ձելկվա բոխատեր (*Zelkova carpinifolia* (Pall.) C. Koch), Խաղող անտառային (*Vitis silvestris* C.C.Gmel.), Շրջահյուս հունական (*Periploca graeca* L.), Ընկուզենի սովորական (*Juglans regia* L.), Կենի հատապտղային (*Taxus baccata* L.), Բադեղ սովորական (*Hedera helix* L.), Հաճարենի արևելյան (*Fagus orientalis* Lipsky), Պիստակենի բրատեր (*Pistacia atlantica* Desf. subsp. *mutica* Fisch.), Իլենի թավշյա (*Euonymus velutina* Fisch. et C.A.Mey.) և այլն: Ռելիկտային և գեղազարդային խոտաբույսերից մեծ հետաքրքրություն են ներկայացնում պտերները՝ *Asplenium rutamuraria* L., *A. nigrum* Heufl., *A. scolopendrium* L., *A. trichomanes* L., *Ceterach officinarum* DC., *Dryopteris filix-mas* (L.) Schott, *Polypodium vulgare* L. և այլն:

Ստորև ներկայացվում է Արցախի տարածքում հանդիպող գեղազարդային բույսերի կարգաբանական բազմազանությունը (աղյուսակ):

Աղյուսակ

**Գեղազարդային բույսերի կարգաբանական բազմազանությունն  
Արցախում**

| N                                      | Տեսակների անվանումն ըստ ըն-<br>տանիքների (հայերեն, լատիներեն)     | Կենսավայրը                                     |
|----------------------------------------|-------------------------------------------------------------------|------------------------------------------------|
| Ակքանազգիներ - <i>Dipsacaceae</i>      |                                                                   |                                                |
| 1.                                     | Զիվան հայկական<br><i>Cephalaria armeniaca</i>                     | Չոր, քարքարոտ<br>թերություններ                 |
| Աղտորազգիներ - <i>Anacardiaceae</i>    |                                                                   |                                                |
| 2.                                     | Դրախտաձառ սովորական<br><i>Cotinus coggygia</i> Scop.              | Չոր, քարքարոտ<br>թերություններ                 |
| 3.                                     | Պիստակենի բթատերև-<br><i>Pistacia mutica</i> Fisch. et C. A. Mey. | Արիդային<br>նոսրանտառներ                       |
| Արալիազգիներ - <i>Araliaceae</i>       |                                                                   |                                                |
| 4.                                     | Բադեղ սովորական<br><i>Hedera helix</i> L.                         | Ճանապարհեզրեր,<br>անտառներ                     |
| Արենախոտազգիներ - <i>Lythraceae</i>    |                                                                   |                                                |
| 5.                                     | Արենախոտ ուռատերև<br><i>Lythrum salicaria</i> L.                  | Գերիտնավ վայրեր, լճափեր,<br>ջրանցքներ, գետափեր |
| Բազմոտիկազգիներ - <i>Polypodiaceae</i> |                                                                   |                                                |
| 6.                                     | Բազմոտիկ սովորական<br><i>Polypodium vulgare</i> L.                | Անտառներ, քարքարոտ<br>վայրեր, ժայռեր           |
| Գնարբուկազգիներ - <i>Primulaceae</i>   |                                                                   |                                                |
| 7.                                     | Գնարբուկ գարնանային<br><i>Primula veris</i>                       | Անտառներ                                       |
| 8.                                     | Գնարբուկ սովորական<br><i>Primula vulgaris</i> Huds.               | Անտառներ,<br>թփուտներ                          |
| 9.                                     | Գնարբուկ Պալլասի<br><i>Primula Pallasii</i> Lehm.                 | Անտառներ,<br>թփուտներ                          |
| Թթվաովույտազգիներ - <i>Oxalidaceae</i> |                                                                   |                                                |
| 10.                                    | Թթվաովույտ եղջրավոր<br><i>Oxalis corniculata</i> L.               | Խոնավ վայրեր, կավային<br>լանջեր, ճանապարհեզրեր |
| Լորենազգիներ - <i>Tiliaceae</i>        |                                                                   |                                                |
| 11.                                    | Լորենի կովկասյան<br><i>Tilia caucasica</i> Rupr                   | Կաղնեթխային անտառներ                           |

Աղյուսակի շարունակությունը

|                                      |                                                              |                                                       |
|--------------------------------------|--------------------------------------------------------------|-------------------------------------------------------|
| 12.                                  | Լորենի սրտաձև / մանրատերև/<br><i>Tilia cordata</i> Mill.     | Կաղնեբոխային անտառներ                                 |
| Կարմրանագգիներ - <i>Tamaricaceae</i> |                                                              |                                                       |
| 13.                                  | Կարմրան Հոհենակերի<br><i>Tamarix Hohenackeri</i> Bunge       | Գետահովիտներ,<br>աղուտներ                             |
| 14.                                  | Կարմրան ճյուղառատ<br><i>Tamarix ramossisima</i> Ledeb.       | Գետահովիտներ,<br>աղուտներ                             |
| Կերոնագգիներ - <i>Typhaceae</i>      |                                                              |                                                       |
| 15.                                  | Կերոն, կեռոն լայնատերև<br><i>Typha latifolia</i> L.          | Գետափեր, լճափեր,<br>ջրամբարներ, ճահճուտներ            |
| Հակինթագգիներ - <i>Hyacinthaceae</i> |                                                              |                                                       |
| 16.                                  | Բելևալիա Ֆոմինի<br><i>Bellevalia fominii</i> Woronow         | Տափաստաններ, անտառեզրեր,<br>բացատներ                  |
| 17.                                  | Պուշկինիա մկնասոխանման<br><i>Puschkinia scilloides</i> Adam. | Թփուտներ, մերձալպյան,<br>ալպյան մարգագետիններ         |
| 18.                                  | Պապլոր կովկասյան<br><i>Muscari caucasicum</i> Baker.         | Քարքարոտ թերություններ,<br>խճաքարուտներ               |
| 19.                                  | Մկնասոխ սիբիրյան<br><i>Scilla sibirica</i> Haw.              | Թփուտներ, անտառներ,<br>անտառեզրեր                     |
| 20.                                  | Մկնասոխ կովկասյան<br><i>Scilla caucasica</i> Misch.          | Թփուտներ,<br>անտառներ                                 |
| Հիրիկագգիներ - <i>Iridaceae</i>      |                                                              |                                                       |
| 21.                                  | Քրքում հրաշալի<br><i>Crocus speciosus</i> M. Bieb.           | Անտառեզրեր, ցանքեր,<br>խոտածածկ լանջեր                |
| 22.                                  | Թրաշուշան կովկասյան<br><i>Gladiolus caucasicus</i> Herb.     | Խոտածածկ լանջեր,<br>մերձալպյան մարգագետիններ          |
| 23.                                  | Հիրիկ կովկասյան<br><i>Iris caucasica</i> Hoffm.              | Չոր, քարքարոտ թերություններ,<br>թփուտային մացառուտներ |
| 24.                                  | Հիրիկ ցանցավոր<br><i>Iris reticulata</i> M. Bieb.            | Չոր, քարքարոտ լանջեր,<br>թփուտային մացառուտներ        |
| 25.                                  | Հիրիկ կոմինդրյա<br><i>Iris imbricata</i> Lindl.              | Չոր, քարքարոտ լանջեր,<br>նոսրանտառներ, անտառեզրեր     |
| Ձիթենագգիներ - <i>Oleaceae</i>       |                                                              |                                                       |
| 26.                                  | Կիպրոս սովորական<br><i>Ligustrum vulgare</i> L.              | Թփուտներ, անտառներ                                    |
| Վարդագգիներ - <i>Rosaceae</i>        |                                                              |                                                       |
| 27.                                  | Փրփրուկ տափաստանային<br><i>Filipendula vulgaris</i> M.       | Տափաստաններ, թփուտներ,<br>մարգագետիններ               |




Աղյուսակի շարունակությունը

|                                         |                                                                        |                                                    |
|-----------------------------------------|------------------------------------------------------------------------|----------------------------------------------------|
| 28.                                     | Արյունխմիկ դեղատու<br><i>Sanguisorba officinalis</i> L.                | Ճանապարհեղբեր, բացատներ,<br>խոնավ մարգագետիններ    |
| 29.                                     | Ասպիրակ աղեղնաեզր<br><i>Spiraea crenata</i> L.                         | Քարքարոտ թեքություններ,<br>անտառեզրեր              |
| Մանուշակազգիներ – <i>Violaceae</i>      |                                                                        |                                                    |
| 30.                                     | Մանուշակ բուրավետ<br><i>Viola odorata</i> L.                           | Թփուտներ, անտառեզրեր,<br>անտառներ, այգիներ         |
| 31.                                     | Մանուշակ սպիտակ<br><i>Viola alba</i> Besser.                           | Թփուտներ, անտառեզրեր,<br>անտառներ, այգիներ         |
| Մեխակազգիներ - <i>Caryophyllaceae</i>   |                                                                        |                                                    |
| 32.                                     | Ծվծվուկ քլորատերև<br><i>Silene chlorifolia</i> Smith.                  | Քարքարոտ թեքություններ,<br>խճաքարուտներ            |
| 33.                                     | Մեխակ արևելյան<br><i>Dianthus orientalis</i> Adams                     | Չոր, քարքարոտ թեքություններ,<br>ժայռաճեղքեր        |
| 34.                                     | Սապնարմատ նրբագեղ<br><i>Gypsophila elegans</i> Bieb.                   | Չոր, քարքարոտ<br>թեքություններ                     |
| Շրթնաձաղկավորներ - <i>Lamiaceae</i>     |                                                                        |                                                    |
| 35.                                     | Ճանկիտոտ արևելյան<br><i>Ajuga orientalis</i> L.                        | Չոր, քարքարոտ լանջեր,<br>թփուտներ, մարգագետիններ   |
| Խոլորձազգիներ - <i>Orchidaceae</i>      |                                                                        |                                                    |
| 36.                                     | Անակամպտիս բրգաձև<br><i>Anacamptis pyramidalis</i> /L./ Rich.          | Թփուտներ, անտառեզրեր,<br>բացատներ                  |
| 37.                                     | Խոլորձ արական<br><i>Orchis mascula</i> L.                              | Անտառներ, բացատներ,<br>մարգագետիններ               |
| 38.                                     | Սարդակիր բռնակիր<br><i>Ophrys oestrifera</i> M. Bieb.                  | Թփուտներ, նոսրանտառներ,<br>բացատներ, մարգագետիններ |
| Ջրոսպազգիներ - <i>Lemnaceae</i>         |                                                                        |                                                    |
| 39.                                     | Ջրոսպ փոքր<br><i>Lemna minor</i> L.                                    | Կանգնած և դանդաղ հոսող ջրեր                        |
| Շուշանազգիներ – <i>Liliaceae</i>        |                                                                        |                                                    |
| 40.                                     | Սագասոխուկ դեղին<br><i>Gagea lutea</i> /L./ Ker Gawl.                  | Անտառներ, թփուտներ                                 |
| 41.                                     | Վարդակակաչ խճճված /խառը/<br><i>Tulipa confusa</i> Gabrielian           | Անտառեզրեր, բացատներ,<br>մերձալպյան մարգագետիններ  |
| Շքանարգիզազգիներ – <i>Amarilidaceae</i> |                                                                        |                                                    |
| 42.                                     | Չնձաղիկ անդրկովկասյան<br><i>Galanthus transcaucasicus</i> Fomin        | Թփուտներ, անտառներ,<br>անտառեզր                    |
| 43.                                     | Շտերնբերգիա Ֆիշերի<br><i>Sternbergia Fischeriana</i><br>/Herb./M.Roem. | Խոտածածկ լանջեր, չոր,<br>քարքարոտ թեքություններ    |

Ըստ Արցախի ֆլորայի գեղագարդային բույսերի կարգաբանական վերլուծության արդյունքների՝ առաջատար են հիրիկազգիների, հակինթազգիների, գնարբուկազգիների, խոլորձազգիների, մեխակազգիների և վարդազգիների ընտանիքները (աղյուսակ):


Արցախի Հանրապետության տարածքում հանդիպող գեղագարդային բույսերի կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունների ընթացքում մեր կողմից իրականացվել են ժամանակավոր պրեպարատների պատրաստում և դիտում ( նկ. 1, 2, 3, 4 ):




Նկ. 1. *Բագմոտիկ սովորական* – ա) ընդհանուր տեսքը, բ) տերևի և սորուսի անատոմիական կազմությունը



Նկ. 2. *Շտերնբերգիա Ֆիշերի* – ա) ընդհանուր տեսքը, բ) փռձեհատիկների կառուցվածքը



**Նկ. 3. Թթվատվույտ եղջրավոր (*Oxalis corniculata*) –  
ա) ընդհանուր տեսքը,  
բ) հերձանցքների անատոմիական կազմությունը**



**Նկ. 4. Խորդենի անտառային (*Geranium sylvaticum*) - ա) ընդհանուր  
տեսքը, բ) հասուն փոշանոթի կառուցվածքը**

Այսպիսով՝ թվային մանրադիտակի միջոցով կատարված ուսումնասիրությունների արդյունքում ներկայացվեցին գեղազարդային բույսերի կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև վեգետատիվ և գեներատիվ օրգանների անատոմիական կազմությունը:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Բալայան Կ. Վ. Լեռնային Ղարաբաղի ֆլորան(անոթավոր բույսեր), Երևան, 2014, էջ 17:
2. Վարդանյան Ժ. Հ. Ծառագիտություն, Երևան, 2005, 370 էջ:
3. Гроссгейм А. А. 1939-1967. Флора Кавказа. Баку. М-Л: Азфан, Т.1-7.
4. Флора Армении. 1954 – 2009. Ереван. АН Арм. ССР. Т. 1 - 11.
5. <https://hy.wikipedia.org/wiki/>

**ՀՈԴՎԱԾԸ ՏՊԱԳՐՎԱԾ Է**

**«ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ»  
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Հ. Գ.Գալստյանը:

ՀՏԴ 581.4Բուսաբանություն**Մայա ԾԱՏՐՅԱՆ****ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոն , գ.գ.թ., դոցենտ****E – mail: maya. c@mail.ru**

**ԱՀ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԽՆԱՊԱՏԻ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԴԵՆԴՐՈՖԼՈՐԱՅԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնասիրվել է Ասկերանի շրջանի Խնապատի տարածաշրջանի դենդրոֆլորայի տեսակային կազմը: Արդյունքում գրանցվել են 29 ընտանիքների և 46 ցեղերի պատկանող 73 տեսակ ծառեր, թփեր և լիաններ: Ուսումնասիրվող տարածքում առավել տարածված են չոր, մերձարևադարձային կլիմայի ներկայացուցիչներ: Հարավ արևելյան լանջերը միավորում են մեզոթերմ հելիոֆիտ տերևաթափ քսերոֆիտ ծառերի և ծառանման թփերի ֆորմացիաների խմբավորումներ: Պարզաբանվել է ուսումնասիրվող տարածքում հայտնաբերված բույսերի կարգաբանական ցուցակը, ինչպես նաև դրանց կենսաէկոլոգիական և ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները:

**Բանալի բառեր`** Խնապատ, դենդրոֆլորա, ծառ, թուփ, լիան, բազմազանություն, ընտանիք, ցեղ, վարդագգիներ, ձիթենագգիներ, ցախակենասագգիներ

**М.Цатурян**

**АНАЛИЗ ИССЛЕДОВАНИЙ ДЕНДРОФЛОРЫ В  
ХНАПАТСКОМ РАЙОНЕ АСКЕРАНСКОЙ ОБЛАСТИ  
РЕСПУБЛИКИ АРЦАХ**

Изучен видовой состав дендрофлоры Хнапатского района Аскеранской области Арцаха. В результате зарегистрированы 73 вида деревьев, кустарников и лиан, принадлежащих к 46 родам и 29 семействам. В исследуемом районе чаще всего встречаются представители сухого, субтропического климата. Юго-восточные склоны объединяют группы мезотермальных гелиофитных лиственных ксерофитных деревьев и древовидных кустарниковых образований. Выявлены таксономический перечень обнаруженных в исследованной области растений, а также их биоэкологические и фитоценотические особенности.

**Ключевые слова:** Хнапат, дендрофлора, дерево, куст, лиана, разнообразие, семейство, род, розовые, маслиновые, жимолостные.

**M. Tsatryan**

**ANALYSIS OF DENDROFLORA STUDIES IN KHNAPAT  
REGION OF ASKERAN REGION  
OF ARTSAKH REPUBLIC**

*The species composition of the Khnapat region dendroflora of the Askeran region has been studied. As a result, 73 species of trees, bushes and lianes have been registered, which belong to 46 genera and are included in 29 families. The representatives of dry, subtropical climate are more common in the study area. The south-eastern slopes unite groups of mesothermal heliophytic deciduous xerophite trees and dendriform shrub formations. The taxonomic list of the plants discovered in the studied area is also clarified, as well as the bioecologic and phytocenotic peculiarities.*

**Keywords:** Khnapat, dendroflora, tree, bush, liane, variety, family, genus, Rosaceae, Oleaceae, Caprifoliaceae

Խնապատ համայնքը գտնվում է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում, տեղաբաշխված է հանրապետության արևելյան հատվածում: Համայնքից հյուսիս գրեթե արևելք-արևմուտք ուղղությամբ ձգվում է Քարեն կլոխ (Քարագլուխ) արևելահայաց կողմից անտառազուրկ, 1.5 կմ երկարությամբ լեռնաբազուկը Կարմիր քերձ կամ Չոպոխ բարձունքով: Համայնքի տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից մոտ 600 մետր է, ընդ որում նախալեռները իջնում են մինչև 400-500 մ: Տարածքը գտնվում է չոր մերձարևադարձային կլիմայական գոտում, սակայն հատկապես բնորոշ են բարեխառը կլիմայական պայմանները[3]:

Հետազոտության նյութ են հանդիսացել Խնապատի շրջակայքից մեր հավաքած դենդրոֆլորայի նմուշները: Նյութը մշակելուց և հերքարիում պատրաստելուց հետո բույսերը խմբավորվել են ըստ տեսակի, կազմվել բույսերի կարգաբանական ցուցակը և կատարվել տաքսոնոմիական վերլուծություն: Խնապատի շրջակայքի բուսատեսակները որոշելիս հիմք են ընդունվել մենագրություններ, որոշիչներ, գրքեր և այլն[1,2,4,5]:

Հարավարևելյան լանջերը միավորում են մեզոթերմ հելիոֆիտ տերևաթափ քսերոֆիտ ծառերի և ծառանման աերոքսիլ թփերի ֆորմացիաների խմբավորումներ: Առավել տարածված է *Paliurus spinachristi* տեսակի գերակշռությամբ ֆորմացիան, որին խառնվում են դժնիկ պալասի (*Rhamnus pallasii*), թփային հասմիկ (*Jasminum fruticans*), նշենի Ֆենցլիի՝ սակավաթիվ (*Amygdalus fenzilana*), սովորական նոնենի (*Punica granatum*) տեսակները, հանդես գալով որպես համաէդիֆիկատորներ, իսկ հաճախ և էդիֆիկատորներ: Ուսունասիրվող տարածքում առավել տարածված են չոր, մերձարևադարձային կլիմայի ներկայացուցիչներ՝ նոնենին (*Punica granatum*), թզենին (*Ficus carica*), որոնք հիմնականում հանդիպում են ենթանտառում: Մերկասերմերից մեկ առանձնակով



հանդես է գալիս կազակական գիհին (*Juniperus Sabina*), իսկ երկհասկավոր էֆեդրան (*Ephedra distachya*) առաջացնում է ընդարձակ բուսուտներ:

Նշված տարածքի Կարմիր քերծ լեռնաբազուկի վերին մինչև 1100մ բարձրություններում հանդիպում է աղտոր դաբաղայինը (*Rhus coriaria*), որն առաջացնում է նոսր բուսուտներ:

Տարածքի հյուսիս արևմտյան մասը խիտ անտառապատ է, որը տարբերվում է տեսակների վիթխարի բազմազանությամբ, որտեղ գերիշխող տեսակներ են՝ կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), վրացական և խոշորատեղ կաղնիները (*Quercus iberica*, *Q. macranthera*): Որպես ուղեկցող ծառատեսակներ՝ հանդիպում են դաշտային թխկին (*Acer campestre*)՝ անտառի ստորինից մինչև վերին սահմաններում, արևելյան բոխին (*Carpinus orientalis*)՝ որպես ստորադաս ծառատեսակ, հարավային ճապկին (*Cornus australis*), իսկ թփատեսակներից՝ սովորական տխլենին (*Corylus avellana*), եվրոպական և լայնատերև իլենիները (*Euonymus europea*, *E. latifolia*), որոնք անտառի ստորին սահմանում առաջացնում են ծառուտներ: Անտառի փոքր տարածությունների վրա արևելյան սոսին (*Platanus orientalis*) առաջացնում է մաքուր ծառուտներ: Ընդարձակ բուսուտներով է հանդես գալիս գերիմաստին (*Viburnum lantana*)՝ անտառի ստորինից մինչև վերին սահմաններում: Անտառային դենդրոֆլորան հարուստ է նաև վայրի պտղատուներով՝ սովորական գլեռենին (*Mespilus germanica*), կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սզնին (*Crataegus*), սովորական սալորենին (*Prunus divaricate*) մամխենին (*Prunus spinosa*):

Ջկեռենին տարածվում է ձորակով շուրջ 850մ բարձրությամբ և մինչև 200մ լանջն ի վեր, ընդգրկելով լանջի ստորին և միջին հատվածներում: Ջկեռենու առանձնյակները կղզյակների տեսքով չեն հանդիպում: Ջկեռենու ծառերը հիմնականում բաշխված են հավասարաչափ: Հազվադեպ հանդիպում են երկու, երեք ծառերի խմբերով: Ջկեռենին հանդիպում է նաև ենթանտառում, հազվադեպ՝ միայնակ ծառերի տեսքով:

Խնձորենին հանդիպում է ենթանտառում, ինչպես նաև անտառներում: Ենթանտառում հանդիպում է հիմնականում միայնակ ծառերի տեսքով, հազվադեպ՝ մեկ, երկու ծառերի խմբերով: Իսկ անտառաճման պայմաններում, հատկապես 1500մ բարձրությունների վրա, խնձորենին հանդիպում է ինչպես միայնակ, այնպես էլ կղզյակների ձևով:

Փշոտ սալորենին, մամխենին (*Prunus spinosa*) հանդիպում է հիմնականում անտառաճման լուսավոր պայմաններում, թփուտների տեսքով: Այն ենթանտառային պայմաններում հազվադեպ է հանդիպում:

Սովորական սալորենին (*Prunus divaricate*) օժտված է էկոլոգիական մեծ ամպլիտուդայով, աճում է ինչպես ենթանտառային, այնպես էլ, անտառային պայմաններում: Արեալում տեղաբաշխված է պատահական,

այսինքն՝ յուրաքանչյուր առանձնյակ միշտ ունի հավասար հավանականությունը հանդիպելու համակեցության ցանկացած մասում:

Սզնի կովկասյանը (*Crataegus caucasica*) հանդիպում է հիմնականում անտառաձման պայմաններում, առանձին առանձնյակների տեսքով: Ունեն հավասար բաշխվածություն արեալում: Իսկ արևելյան (*Crataegus orientalis*) և հայկական սզնին (*Crataegus armena*) հիմնականում հանդիպում են ենթանտառային պայմաններում՝ առանձին առանձնյակների տեսքով, որոնց թիվը հասնում է 5-7, ինչպես նաև անտառի լուսավոր տեղերում:

Կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*) հանդիպում է հազվադեպ անտառներում, հիմնականում 2-3 առանձնյակների տեսքով: Սակայն ուռատերև տանձենին (*Pyrus salicifolia*) հանդիպում է ենթանտառում, հազվադեպ՝ մեկ առանձնյակով:

Լիաններից վայրի խաղողը (*Vitis sylvestris*) հանդիպում է անտառի ողջ տարածքում: Հազվադեպ հանդիպում է սովորական կիպրոսը (*Ligustrum vulgare*):

Ուսումնասիրվող տարածքի չոր, լուսավոր տարածքներում հանդիպում է նաև ուռատերև տանձենին (*Pyrus salicifolia*), կովկասյան փոշնին (*Celtis caucasica*), նեղատերև փշատենին (*Elaeagnus angustifolia*), վրացական ցախակեռասը (*Lonicera iberica*) և այլն:

<<Ըղանց պատի>> լանջի ներքևում հոսում է <<Խաչին տակից>> հոսող ջրերը, որի շրջակայքը հարուստ է դենդրոֆլորայի մի շարք տարրերով: Հիմնականում դոմինանտում են սև կտտկենին (*Sambucus nigra*), կովկասյան փոշնին և արևելյան սոսին:

Աղյուսակում ներկայացված է Խնապատի տարածաշրջանում հանդիպող դենդրոֆլորայի տեսակային կազմը:

Աղյուսակ  
Խնապատի տարածաշրջանից հայտնաբերված բույսերի  
կարգաբանական ցուցակ

| Ընտանիքի անվանումը            | N | Տեսակի անվանումը                                        | Կենսաձև        | Կենսաէկոլոգիական և ֆիտոցենոտիկ առանձնահատկությունները |
|-------------------------------|---|---------------------------------------------------------|----------------|-------------------------------------------------------|
| Աղտորազգիներ<br>Anacardiaceae | 1 | Աղտոր դաբաղային<br>Rhus coriaria L.                     | Թ <sub>տ</sub> | Չոր քարքարոտ լեռնալանջերին                            |
| Արալիազգիներ<br>Araliaceae    | 2 | Բաղեղ սովորական<br>Crataegus orientalis Pall            | Լ <sub>մ</sub> | Անտառում                                              |
| Բակլազգիներ<br>Fabaceae       | 3 | Ակացիա սպիտակ<br>Robinia pseudoacacia L.                | Ծ <sub>տ</sub> | Գյուղամիջում                                          |
|                               | 4 | Պայթակենի կիլիկյան -<br>Colutea cilicica Boiss. et Bal. | Թ <sub>տ</sub> | Թփուտներում                                           |
| Դոմազգիներ                    | 5 | Լոշտակ երկտուն –                                        | Լ <sub>տ</sub> | Գյուղամիջում                                          |



|                                        |    |                                                                 |                |                               |
|----------------------------------------|----|-----------------------------------------------------------------|----------------|-------------------------------|
| Cucurbitaceae                          |    | Bryonia dioica jacq.                                            |                |                               |
| Դժնիկազգիներ<br>Rhamnaceae             | 6  | Դժնիկ լուծողական -<br>Rhamnus cathartica L.                     | Ծ <sub>տ</sub> | Թփուտներում                   |
|                                        | 7  | Դժնիկ Պալասի -<br>Rhamnus pallasii Fisch. et<br>Mey. C. A. Mey. | Թ <sub>տ</sub> | Չոր քարքարոտ<br>լեռնալանջերին |
|                                        | 8  | Ցաքի փշոտ - Paliurus<br>spina- christi Mill.                    | Թ <sub>տ</sub> | Չոր քարքարոտ<br>լեռնալանջերին |
| Դիոսկորեազգիներ<br>– Dioscoreaceae     | 9  | Կնքաբույս – Tamus<br>communis L.                                | Լ <sub>տ</sub> | Կաղնեբոխային<br>անտառներում   |
| Դրախտավարդազ<br>գիներ<br>Hydrangeaceae | 10 | Սրնգենի կովկասյան -<br>Philadelphus caucasicus<br>Kochne        | Թ <sub>տ</sub> | Թփուտներում                   |
| Ընկուզազգիներ<br>Juglandaceae          | 11 | Ընկուզենի սովորական<br>Juglans regia L.                         | Ծ <sub>տ</sub> | Գետահովիտներ<br>ում           |
|                                        | 12 | Ընկուզենի սև<br>Juglans nigra L.                                | Ծ <sub>տ</sub> | Գետահովիտներ<br>ում           |
| Թթազգիներ<br>Moraceae                  | 13 | Թզենի սովորական- Ficus<br>carica L.                             | Ծ <sub>տ</sub> | Քարքարոտ<br>լանջերին          |
| Թխկազգիներ<br>Aceraceae                | 14 | Թխկի դաշտային - Acer<br>campestre L.                            | Ծ <sub>տ</sub> | Անտառներում,<br>անտառեզրերին  |
|                                        | 15 | Թխկի վրացական - Acer<br>ibericum M. Bieb                        | Ծ <sub>տ</sub> | Անտառներում,<br>անտառեզրերին  |
| Թեղազգիներ<br>Ulmaceae                 | 16 | Թեղի բոխատերև - Ulmus<br>carpinifolia Rupp. ex<br>Suckow        | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                   |
|                                        | 17 | Թեղի տերևառատ -<br>Ulmus foliacea Gilib                         | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                   |
|                                        | 18 | Ձեկվա բոխատերև -<br>Zelkova carpinifolia /Pall./<br>K. Koch     | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                   |
| Թունաթափազգիներ<br>Asclepiadaceae      | 19 | Շրջահյուս հունական<br>/Periploca graeca L./                     | Լ <sub>տ</sub> | Անտառներում                   |
| Իլենազգիներ<br>Celastraceae            | 20 | Իլենի եվրոպական -<br>Euonymus europea L.                        | Թ <sub>տ</sub> | Անտառներում                   |
|                                        | 21 | Իլենի լայնատերև -<br>Euonymus latifolia /Z./<br>Mill.           | Թ <sub>տ</sub> | Անտառներում                   |
| Լորենազգիներ<br>Tiliaceae              | 22 | Լորենի կովկասյան - Tilia<br>caucasica L.                        | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                   |
|                                        | 23 | Լորենի մանրատերև Tilia<br>cordata Mill.                         | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                   |
| Լեռնաչամիչազգին                        | 24 | Էֆեդրա երկհասկավոր                                              | Թ <sub>մ</sub> | Քարքարոտ                      |

|                               |    |                                                                              |                |                              |
|-------------------------------|----|------------------------------------------------------------------------------|----------------|------------------------------|
| էր Ephedraceae                |    | Ephedra distachya L.                                                         |                | լանջերին                     |
| Խաղողագգիներ<br>Vitaceae      | 25 | Խաղող անտառային -<br>Vitis sylvestris C.C. Gmel                              | Լ <sub>տ</sub> | Գետահովտային<br>անտառներում  |
| Ծորենագգիներ<br>Berberidaceae | 26 | Ծորենի սովորական -<br>Berberis vulgaris L.                                   | Թ <sub>տ</sub> | Անտառներում                  |
| Հաճարագգիներ<br>Fagaceae      | 27 | Կաղնի վրացական -<br>Quercus iberica Steven                                   | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                  |
|                               | 28 | Կաղնի խոշորառնջ -<br>Quercus macranthera<br>Fisch. et C. A. Mey. et<br>Hohen | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                  |
| Հոնագգիներ<br>Cornaceae       | 29 | Հոնի սովորական -<br>Cornus mas L                                             | Ծ/թ/<br>տ      | Անտառներում                  |
|                               | 30 | Ճապկի հարավային -<br>Swida australis Pojark                                  | Ծ/թ/<br>տ      | Անտառներում,<br>անտառեզրերին |
|                               | 31 | Ճապկի վրացական -<br>Swida iberica Pojark. ex<br>Grossh                       | Ծ/թ/<br>տ      | Անտառներում,<br>անտառեզրերին |
| Զիթենագգիներ<br>Oleaceae      | 32 | Հացենի սովորական -<br>Fraxinus excelsior L.                                  | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                  |
|                               | 33 | Հացենի սրապտուղ -<br>Fraxinus oxycarpa Willd.                                | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                  |
|                               | 34 | Հասմիկ թփային -<br>Jasminum fruticans L.                                     | Թ <sub>տ</sub> | Թփուտներում                  |
|                               | 35 | Կիպրոս սովորական -<br>Ligustrum vulgare L.                                   | Թ <sub>տ</sub> | Անտառներում                  |
| Նոճագգիներ<br>Cupressaceae    | 36 | Գիհի կազակական -<br>Juniperus sabina L                                       | Թ <sub>ւ</sub> | Քարքարոտ<br>լանջերին         |
|                               | 37 | Գիհի ցածրաճ - Juniperus<br>hemisphaerica J.                                  | Թ <sub>ւ</sub> | Անտառի վերին<br>սահմաններում |
|                               | 38 | Գիհի երկարատերև -<br>Juniperus oblonga M.<br>Bieb.                           | Ծ/թ/<br>ւ      | Անտառներում                  |
| Նոնագգիներ<br>Punicaceae      | 39 | Նոնենի սովորական -<br>Punica granatum L                                      | Ծ <sub>տ</sub> | Չոր<br>լեռնալանջերին         |
| Սոսագգիներ<br>Platanaceae     | 40 | Սոսի արևելյան - Platanus<br>orientalis L                                     | Ծ <sub>տ</sub> | Գետահովիտներ<br>ում          |
| Վարդագգիներ<br>Rosaceae       | 41 | Ասպիրակ<br>սրոնուղատերև - Spiraea<br>hypericifolia L.                        | Թ <sub>տ</sub> | Չոր, քարքարոտ<br>լանջերին    |
|                               | 42 | Զկեռենի սովորական -<br>Mespilus germanica L.                                 | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                  |
|                               | 43 | Խնձորենի արևելյան -<br>Malus orientalis Uglitzk                              | Ծ <sub>տ</sub> | Առափնյա<br>անտառներում       |

|            |    |                                                                       |    |                                        |
|------------|----|-----------------------------------------------------------------------|----|----------------------------------------|
|            | 44 | Կեռասենի անտառային -<br>Cerasus avium Moench                          | Ծտ | Անտառներում                            |
|            | 45 | Մասրենի սովորական -<br>Rosa canina L.                                 | Թտ | Անտառեզրերին,<br>թփուտներում           |
|            | 46 | Մասրենի առատափուշ -<br>Rosa spinosissima L.                           | Թտ | Քարքարոտ<br>լանջերին,<br>թփուտներում   |
|            | 47 | Մոշենի սովորական -<br>Rubus caesius L.                                | Կթ | Թփուտներում                            |
|            | 48 | Մոշենի կովկասյան -<br>Rubus<br>caucasicus /Focke/<br>Focke ex Haussen | Կթ | Թփուտներում                            |
|            | 49 | Մոշենի անատոլիական<br>Rubus anatolicus Focke                          | Կթ | Անտառեզրերին,<br>թփուտներում           |
|            | 50 | Մոշենի թաղիքավոր -<br>Rubus tomentosus Borkh                          | Կթ | Թփուտներում                            |
|            | 51 | Մոշենի երկարապտուղ -<br>Rubus dolichocarpus Juz.                      | Կթ | Անտառներում                            |
|            | 52 | Մոշենի հայկական -<br>Rubus armeniacus Focke                           | Կթ | Թփուտներում                            |
|            | 53 | Մոռենի Բուշի ( Rubus<br>Buschii /Rozan./ A. Grossh                    | Կթ | Անտառներում                            |
|            | 54 | Չմենի ամբողջաեզր -<br>Cotoneaster integerrimus<br>Medik               | Թտ | Զոր լանջերին,<br>անտառներում           |
|            | 55 | Սալորենի փշոտ,<br>մամխենի -<br>Prunus spinosa L. /կրտն/               | Թտ | Անտառներում,<br>խոնավ<br>աճեցվայրերում |
|            | 56 | Սալորենի սովորական -<br>Prunus divaricata Ledeb.                      | Թտ | Անտառներում                            |
|            | 57 | Սզնի կովկասյան -<br>Crataegus caucasica<br>K. Koch                    | Ծտ | Նոսրանտառներ<br>ում                    |
|            | 58 | Սզնի արևելյան -<br>Crataegus orientalis Pall                          | Ծտ | Թփուտներում                            |
|            | 59 | Սզնի հայկական -<br>Crataegus armena Pojark.                           | Ծտ | Նոսրանտառներ<br>ում,<br>կաղնուտներում  |
|            | 60 | Տանձենի կովկասյան -<br>Pyrus caucasica Fed.                           | Ծտ | Առափնյա<br>անտառներում                 |
|            | 61 | Տանձենի ուռատերև -<br>Pyrus salicifolia Pall.                         | Ծտ | Թփուտներում                            |
| Տիպազգիներ |    | Տիպենի սովորական -                                                    | Թտ | Անտառներում,                           |

|                                     |    |                                                   |                |                                       |
|-------------------------------------|----|---------------------------------------------------|----------------|---------------------------------------|
| Corylaceae                          | 62 | Corylus avellana L.                               |                | բոխուտներում                          |
|                                     | 63 | Բոխի արևելյան-<br>Carpinus orientalis Mill        | Ծ/թ/<br>տ      | Անտառներում                           |
|                                     | 64 | Բոխի կովկասյան –<br>Carpinus caucasica L          | Ծ <sub>տ</sub> | Անտառներում                           |
| Ցախակեռասազգի<br>ներ Caprifoliaceae | 65 | Գերիմաստի Viburnum<br>lantana L.                  | Թ <sub>տ</sub> | Գետահովտային<br>անտառներում           |
|                                     | 66 | Կտուկենի սև - Sambucus<br>nigra L.                | Թ <sub>տ</sub> | Խոնավ<br>վայրերում                    |
|                                     | 67 | Ցախակեռաս վրացական<br>Lonicera iberica M. Bieb.   | Թ <sub>տ</sub> | Չոր, քարքարոտ<br>լեռնալանջերին        |
|                                     | 68 | Ցախակեռաս կովկասյան<br>- Lonicera caucasica Pall. | Թ <sub>տ</sub> | Անտառներում                           |
|                                     | 69 | Ցախակեռաս այծի -<br>Lonicera caprifolium L.       | Թ <sub>տ</sub> | Անտառներում                           |
| Ուռազգիներ<br>Salicaceae            | 70 | Ուռենի բարձր - Salix<br>excelsa S. G. Gmel        | Ծ <sub>տ</sub> | Գետահովիտներ<br>ում                   |
|                                     | 71 | Ուռենի այծի (այծուռենի)<br>- Salix caprea L.      | Ծ <sub>տ</sub> | Գետահովիտներ<br>ում                   |
| Փռնազգիներ<br>Celtidaceae           | 72 | Փռնի կովկասյան –<br>Celtis caucasica Willd.       | Ծ <sub>տ</sub> | Անտառեզրերին,<br>քարքարոտ<br>լանջերին |
| Փշատազգիներ<br>Elaeagnaceae         | 73 | Փշատենի նեղատերև -<br>Elaeagnus angustifolia L.   | Ծ <sub>տ</sub> | Քարքարոտ<br>լանջերին                  |

Ծանոթություն. Ծ/թ/մ-ծառանման թուփ մշտադալար, Ծ/թ/տ – ծառանման թուփ տերևաթափ, Ծ<sub>տ</sub> – ծառ տերևաթափ, Թ<sub>տ</sub> – թուփ տերևաթափ, Թ<sub>մ</sub> – թուփ մշտադալար, Կ<sub>թ</sub> – կիսաթուփ, Լ<sub>տ</sub> – լիան տերևաթափ:

Ինչպես երևում է աղյուսակից, Խնապատի տարածաշրջանի դենդրոֆլորայի տարրերը խոշոր կարգաբանական խմբերում կազմում են հետևյալ հարաբերակցությունը՝ մերկասերմեր – 4 տեսակ, ծածկասերմեր – 69 տեսակ:

Խնապատի տարածաշրջանի դենդրոֆլորայում, ըստ կարգաբանական կազմի, բարձրակարգ մերկասերմ բույսերը թույլ են ներկայացված: Մերկասերմերից գիհի (Juniperus) ցեղը ներկայացված է 3 տեսակով, ընդ որում՝ երկարատև և ցածրած գիհիները հանդիպում են անտառաճման պայմաններում, իսկ կազակական գիհին քարքարոտ լանջերին: Ցեղի երեք տեսակները հանդիպում են սակավաթիվ: Մերկասերմերից հանդես է գալիս նաև էֆեդրա (Ephedra) ցեղը, մեկ տեսակով՝ երկհասակավոր էֆեդրան (Ephedra distachya), ընդարձակ բուստոտներով:

Հարուստ տեսակային կազմով հանդես է գալիս վարդազգիների ընտանիքը: Դա կապված է անտառային և հետանտառային

բուսականության գերակշռության հետ[5]: Անտառաճման պայմաններում վարդագգիները հանդես են գալիս հիմնականում արժեքավոր վայրի պտղատուներով՝ սովորական մասրենին (*Rosa canina*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սովորական սալորենին (*Prunus divaricata*), արևելյան սզնին (*Crataegus orientalis*):

Խնապատի տարածաշրջանի դենդրոֆլորան ներկայացված է 73 տեսակներով, որոնք պատկանում են 46 ցեղի և 29 ընտանիքի: Գերակշռող վարդագգիների (*Rosaceae*) ընտանիքն է՝ 11 ցեղ և 22 տեսակ: Ցախակեռասագգիները (*Caprifoliaceae*) ներկայացված են 3 ցեղով և 5 տեսակով, ձիթենագգիները (*Oleaceae*) ներկայացված են 3 ցեղով և 4 տեսակով, բակլագգիները (*Fabaceae*)՝ 2 ցեղով և 2 տեսակով, տիլագգիները (*Corylaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, դժնիկագգիները (*Rhamnaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, հոնագգիները (*Cornaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, թեղագգիները (*Ulmaceae*)՝ 2 ցեղով և 3 տեսակով, ուռագգիները (*Salicaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, հաճարագգիները (*Fagaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, թխկագգիները (*Aceraceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, իլենագգիները (*Celastraceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով, նոճագգիները (*Cupressaceae*)՝ 1 ցեղով և 3 տեսակով, ընկուզագգիները (*Juglandaceae*)՝ 1 ցեղով և 2 տեսակով: Մնացած ընտանիքները ներկայացված են 1 ցեղով և 1 տեսակով (աղյուսակ):

Ամփոփելով ուսումնասիրությունների արդյունքները՝ պարզվեց, որ ընդհանուր առմամբ Խնապատի տարածաշրջանի դենդրոֆլորան հարուստ է և հատկապես կարևորվում է վայրի պտղատու ծառաթփատեսակներով: Այդ նպատակով պետք է իրականացնել տարածքի բուսական պաշարների ընդհանուր գույքագրում և օգտակար բույսերի պաշարների գնահատում, ինչպես նաև կիրառել դրանց պահպանմանը նպատակաուղղված արդյունավետ միջոցներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբյան Ա.Ն., Մոշենու և մոռենու ենթացեղերի տեսակային կազմը և տարածվածությունը Արցախում. ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 2010.2(22), էջ 36-40:
2. Հարությունյան Լ. Վ., Հարությունյան Ս.Լ., Հայաստանի դենդրոֆլորա, Երևան, 1985 – 1986, 1-2:
3. Մելքունյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990, 132 էջ:
4. Карягин И.И. Флора Азербайджана. Баку, 1950–1957, Т,1-7.
5. Тахтаджян А.Л. Флора Армении. Ереван, 1954 – 1980, Т,1-7.

**Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկտիվի անդամ, կ.գ.դ. Ն. Գ.Գալստյանը:**

ՀՏԴ 378.1

Բարձրագույն կրթության կազմակերպում (մեթոդիկա)

Նելլի ԴԱՎԹՅԱՆ

ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, մ. գ. թ.

E-mail: [nellydavtian@mail.ru](mailto:nellydavtian@mail.ru)

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱ

Հոդվածում ներկայացվում են ԱրՊՀ դասախոսների հիմնական հեմոդինամիկական ցուցանիշները՝ կախված ուսումնական ծանրաբեռնվածության ազդեցությունից, տարիքասեռային առանձնահատկություններից և մասնագիտական գործունեությունից: Վարիացիոն վիճակագրության ստանդարտ մեթոդներով հիմնավորվել է անբարենպաստ գործոնների և մտավոր հոգնածության համալիր փոխազդեցության բացասական ազդեցությունը դասախոսների օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի վրա, որն էլ իր անբարենպաստ կնիքն է դնում առողջության վրա: **Բանալի բառեր**՝ դասախոսներ, ծանրաբեռնվածություն, հեմոդինամիկական ցուցանիշներ, մտավոր աշխատանք, հոգնածություն, ֆունկցիոնալ վիճակ:

**Н. Давтян**

## ВОЗДЕЙСТВИЕ УЧЕБНОЙ НАГРУЗКИ НА ОСНОВНЫЕ ФИЗИОЛОГИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ ПРЕПОДАВАТЕЛЕЙ

В статье представлены основные гемодинамические показатели преподавателей АрГУ в зависимости от воздействия учебной нагрузки, возрастных особенностей и профессиональной деятельности. Вариационно-статистическим стандартным методом обосновано отрицательное воздействие комплексного взаимодействия неблагоприятных факторов и умственной нагрузки на функциональное состояние организма, которое в свою очередь определяет профессиональное здоровье преподавателей.

**Ключевые слова:** преподаватели, нагрузка, гемодинамические показатели, умственная работа, утомляемость, функциональное состояние.

**N. Davtyan**

## THE IMPACT OF EDUCATIONAL WORKLOAD ON THE MAIN PHYSIOLOGICAL INDICATORS OF LECTURERS

In the article the main hemodynamic indexes of the Artsakh State University's lecturers are presented depending on the impact of educational workload, age and sex-specific characteristics and professional activity. The negative impact of adverse factors and the

*complex interaction of mental fatigue on the functional state of the lecturers' bodies, which puts its unfavorable stamp on professional health, have been substantiated by standard methods of variational statistics.*

**Keywords:** lecturers, workload, the modynamic indexes, mental work, fatigue, functional condition.

Հայտնի է, որ դասախոսների մասնագիտական գործունեությունը նյարդային լարված աշխատանք է, քանի որ այն բնորոշվում է բարձր աստիճանի պատասխանատվությամբ, մեծաքանակ տեղեկատվության վերամշակմամբ, արտահայտված խոսքաշարժողական ակտիվությամբ և սակավաշարժությամբ (հիպոկինեզիա): Վերջինս բացասաբար է ազդում հյուսվածքների կառուցվածքի ու գործառույթների վրա՝ հանգեցնելով օրգանիզմի պաշտպանական ուժերի նվազմանն ու բարձրացնելով տարբեր հիվանդությունների առաջացման ռիսկը [3]: Դրա հետ մեկտեղ կրթության բնագավառի նորագույն նվաճումները հանգեցրել են ծրագրային նյութի բարդացմանը, լրացուցիչ առարկաների ներդրմանը, կրթության գործընթացում համակարգչային ուսուցման ներառմանը, որոնց արդյունքում դասախոսները ստիպված են երկար ժամանակ նստած լինելու համակարգչի մոտ՝ վատ օդափոխվող սենյակներում [5]:

Ըստ գրականության տվյալների՝ հեմոդինամիկական ցուցանիշների փոփոխությունները կախված են ոչ միայն ուսումնական գործընթացի բնույթից, այլ նաև դասախոսի աշխատանքի և հանգստի ռեժիմից, շրջակա միջավայրի պայմաններից (ջերմաստիճան, օդի խոնավություն, վատ լուսավորվածություն, վնասակար քիմիական նյութերի ազդեցություն), տարիքից և բազմաթիվ այլ գործոններից [2]:

Ուսումնական գործունեության ընթացքում դասավանդողի օրգանիզմի օրգան համակարգերի ֆունկցիայի վրա ազդող հիմնական տարրերից են ստերեոտիպային, կրկնվող մկանային աշխատանքը, հարկադրական աշխատանքային դիրքը, տեսողական համակարգի վրա ծանրաբեռնվածության մեծացումը, նյարդային և հոգեհուզական լարվածությունը, աշխատանքային գործողությունների միապաղաղությունը, հիպոթենզիան [4]:

Հատկապես մեծ հուզական լարվածություն է նկատվում դեկավար աշխատողների, ուսուցիչների, դասախոսների մոտ, որոնց 40-50%-ի մոտ հայտնաբերվում է հիպերտոնիկ կամ սրտամկանի իշեմիկ հիվանդություն, իսկ ռիսկի գործոններ են բարձր նյարդաէմոցիոնալ լարվածությունը, հիպոկինեզիան, մարմնի ավելորդ քաշը, ծխելը, ժառանգական նախատրամադրվածությունը [5]:

Մտավոր աշխատանքի ժամանակ նյարդաէմոցիոնալ լարվածությունը բացատրվում է տվյալ ֆունկցիան կարգավորող ուղեղի բաժինների գործունեության հնարավորությունները գերազանցող ինֆորմացիայի մշակմամբ, ինչի հետևանքով տեղի է ունենում սրտի սիստոլիկ և

դիաստոլիկ ծավալների մեծացում, բարձրանում է զարկերակային ճնշումը, փոխվում է անոթագարկը: Սթրեսային իրավիճակներում, օրինակ՝ քննության ժամանակ, տեղի է ունենում սիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվացում: Ընդհանրապես մտավոր աշխատանքի ժամանակ արյան հոսքը մեծանում է հատկապես ձախ կիսագնդում:

Ֆոմինի կարծիքով մտավոր աշխատանքի ժամանակ հոգնածությունը ավելի շատ պայմանավորված է ուղեղի կեղևի և ենթակեղևային շրջանների վրա ցանցաձև գոյացության ակտիվացնող ազդեցության իջեցմամբ [9]: Գերցենը ասում էր, որ միտքը հնարավոր չէ ծալել ինչպես ձեռքերը: Մտավոր գործունեության դադարեցման համար անհրաժեշտ է ուշադրության վերաբևեռացում: Այս դեպքում նպատակահարմար է մտավոր աշխատանքի փոխարինումը ֆիզիկականով [8]:

Ներկայումս պարզվել է, որ շատ սիրտ-անոթային հիվանդություններ սկիզբ են առնում հենց երիտասարդ հասակում՝ ուսումնական ծանրաբեռնվածության պատճառով: Աշխատունակության և հոգնածության մակարդակների կարևոր ցուցանիշներից մեկը զարկերակային ճնշման ցուցանիշն է:

Ուսումնական գործընթացի ժամանակ հեմոդինամիկական ցուցանիշների տատանումների հիմնական պատճառը հոգնածությունն է: Այն դրսևորվում է մկանների ուժի և դիմադրության նվազմամբ, համաձայնեցված շարժումների վատացմամբ, տեղեկատվության մշակման արագության թուլացմամբ, որոշ դեպքերում նաև քրոնիկական հոգնածությամբ, օրգանիզմի կոմպենսատոր-հարմարողական մեխանիզմների իջեցմամբ: Նշված անբարենպաստ գործոնների կոմպլեքսային փոխազդեցությունը բացասական ազդեցություն է թողնում օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի վրա, որն առաջին հերթին արտահայտվում է մասնագիտական առողջության իջեցմամբ [6]:

Այս բնագավառում հետազոտություններ իրականացրած հեղինակների մեծամասնությունը նշում է, որ զարկերակային ճնշումը զգալիորեն տատանվում է (10–17%-ից ավելի) ուսումնական տարվա սկզբից մինչև դրա ավարտը, իսկ որոշները նշում են սիստոլիկ կամ մաքսիմալ ճնշման նվազում և միաժամանակ դիաստոլիկ կամ մինիմալ արյան ճնշման բարձրացում: Զարկերակային ճնշման տատանումները վկայում են սիրտ-անոթային համակարգի գործունեության լարվածության մասին [7]:

Վերոնշյալ փաստարկները հաշվի առնելով՝ մեր առջև խնդիր դրվեց ուսումնասիրելու ուսումնական ծանրաբեռնվածության ազդեցությունը՝ դասախոսների հիմնական ֆիզիոլոգիական ցուցանիշների վրա՝ գրանցելով դասախոսների զարկերակային ճնշման մեծությունը աշխատանքային օրվա սկզբում՝ հարաբերական հանգստի վիճակում և աշխատանքային օրվա վերջում:



Մեր կողմից իրականացված համալիր հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են ԱրՊՀ դասախոսների հիմնական հեմոդինամիկական ցուցանիշները (արյան ճնշումը և սրտի կծկումների հաճախությունը) ուսումնական տարվա կտրվածքով:

Սիրտ-անոթային համակարգի վիճակը գնահատելու համար հաճախ օգտագործում են անոթազարկի և զարկերակային ճնշման (ՁՃ)՝ սիստոլիկ (ՍՁՃ) և դիաստոլիկ (ԴՁՃ) ճնշման մեծությունները: Հայտնի է, որ ՍՁՃ-ի մեծությունը կախված է սրտի հարվածային ծավալից և անոթների պերիֆերիկ ընդհանուր դիմադրողականությունից: Դիաստոլիկ ճնշումն արտահայտում է հիմնականում զարկերակների տոնուսի վիճակը, այսինքն արյան հոսքին նրանց դիմադրողականությունը [1]:

Հետազոտվել են բնագիտական ֆակուլտետի 9 տղամարդ և 33 կին դասախոսներ, որոնք բաժանվել են ըստ սեռի, 4 տարիքային խմբերի.

1. առաջին տարիքային խումբ - 20-30 տարեկան ( 4 )
2. երկրորդ տարիքային խումբ - 31-40 տարեկան ( 11 )
3. երրորդ տարիքային խումբ - 41-50 տարեկան ( 11 )
4. չորրորդ տարիքային խումբ - 51-65 տարեկան ( 16 )

Նման ընտրությունը պայամանավորված է այն հանգամանքով, որ դասախոսների սիրտ-անոթային համակարգի գործունեության վրա տարբեր կերպ են ազդում մասնագիտությունը, դասավանդվող բազմաբնույթ առարկաները, սեռային տարբերությունները, ինչպես նաև ֆիզիկական մարզվածությունը և մի շարք այլ գործոններ: Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով՝ ուսումնական տարվա սկզբին (սեպտեմբեր-հոկտեմբեր), քննաշրջանում (հունվար-փետրվար) և ուսումնական տարվա վերջում (մայիս): Դա հնարավորություն է տվել ոչ միայն հետևելու այդ ցուցանիշների դինամիկային, այլև որոշելու դրանց առանձնահատկությունները հետազոտվող խմբերում: Որպես սիրտ-անոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի ելակետային ցուցանիշներ վերցվել են սիստոլային արյան ճնշումը (ՍՍՃ), դիաստոլային արյան ճնշումը (ԴՍՃ) և սրտի կծկումների հաճախականությունը (ՄԿՀ): Հետազոտվողների արյան ճնշման չափումը և անոթազարկի հաշվարկումը կատարվել է Կորոտկովի մեթոդով՝ էլեկտրոնային ճնշաչափով, տվյալները մշակվել են վարիացիոն վիճակագրության ստանդարտ մեթոդով: Ընդունված բանաձևերով յուրաքանչյուր խմբի համար հաշվարկվել են հեմոդինամիկական ցուցանիշների հիմնական չափանիշները, խմբերի միջև տարբերությունների վիճակագրական հավաստիությունը որոշվել է ըստ Ստյուդենտի  $t$  չափանիշի: Տարբերությունները հավաստի են համարվել  $p < 0,1$  -ի դեպքում:

Ինչպես ցույց են տվել ուսումնական տարվա սկզբին իրականացված հետազոտության արդյունքները (աղյուսակ 1), և՛ տղամարդկանց, և՛ կանանց մոտ տարիքի հետ արյան ճնշումը բարձրանում է, անոթազարկը՝

նվազում: Այսպես՝ առաջին տարիքային խմբի համեմատ՝ չորրորդ խմբի տղամարդկանց ՍԱՃ-ի ցուցանիշները բարձր են 23 մմ ս.ս.-ով, կանանց մոտ՝ 18 մմ ս.ս.-ով: Նմանօրինակ պատկեր է դիտվում նաև ԴԱՃ-ի ցուցանիշների պարագայում. տարիքին զուգընթաց այն բարձրանում է (համապատասխանաբար՝ 19 մմ ս.ս. և 12 մմ ս.ս.-ով): ՄԿՀ ցուցանիշներում գործում է հակառակ օրինաչափությունը: Երկու սեռի դասախոսների անոթազարկի մեծությունները տարիքի հետ նվազում են: Տղամարդկանց մոտ՝ 12 զարկ/ր-ով, կանանց մոտ՝ 8 զարկ/ր-ով):

#### Աղյուսակ 1

#### Տարբեր տարիքային խմբերի դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշները ուսումնական տարվա սկզբին

| Տարիք. խումբ | Տղամարդիկ   |              |             |            | Կանայք      |              |             |            |
|--------------|-------------|--------------|-------------|------------|-------------|--------------|-------------|------------|
|              | Ընդհ. թվի % | ՍԱՃ, մմ ս.ս. | ԴԱՃ մմ ս.ս. | ՄԿՀ զարկ/ր | Ընդհ. թվի % | ՍԱՃ, մմ ս.ս. | ԴԱՃ մմ ս.ս. | ՄԿՀ զարկ/ր |
| 20-30        | 12          | 124          | 77          | 81         | 6           | 111          | 67          | 84         |
| 31-40        | 13          | 129          | 86          | 73         | 15          | 119          | 75          | 82         |
| 41-50        | 25          | 141          | 94          | 71         | 38          | 126          | 77          | 78         |
| 51-65        | 50          | 147          | 96          | 69         | 41          | 129          | 79          | 76         |

Ստորև բերված աղյուսակներ 2-4-ում ներկայացված են հետազոտության արդյունքները, որոնք ցույց են տվել, որ հեմոդինամիկական ցուցանիշների տարբերությունները կապված են ոչ միայն դասախոսների տարիքաստեղծային առանձնահատկությունների, այլ նաև տարբեր մասնագիտությունների հետ:

Արդեն սեպտեմբեր-հոկտեմբերին կատարված հետազոտություններում դասախոսների հարաբերական հանգստի վիճակում (աշխատանքի սկզբում և վերջում) հանդես են եկել հավաստի տարբերություններ կենսաբանության և քիմիայի (այսուհետ՝ կենս/քիմ), ֆիզիկա և մաթեմատիկայի (այսուհետ՝ ֆիզ/մաթ) ու աշխարհագրության ամբիոնների տղամարդ և կին դասախոսների մոտ՝ ըստ ՍԱՃ-ի, ԴԱՃ-ի և ՄԿՀ-ի տվյալների (աղյուսակ 2) ( $p < 0.1-0.01$ ):

Աղյուսակ 2

**Դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշները ուսումնական տարվա սկզբին**

| Ամբիոն         | Տղամարդիկ    |     | Կանայք |     | t   | Տղամարդիկ    |     | Կանայք |     | t   |
|----------------|--------------|-----|--------|-----|-----|--------------|-----|--------|-----|-----|
|                | M            | ±m  | M      | ±m  |     | M            | ±m  | M      | ±m  |     |
|                | Դասերից առաջ |     |        |     |     | Դասերից հետո |     |        |     |     |
| ՍԱՃ, մմ ս.ս.   |              |     |        |     |     |              |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 141          | 3   | 122    | 4,8 | 3,4 | 145          | 5   | 127    | 4   | 2,8 |
| Ֆիզ/մաթ        | 127          | 7   | 123    | 3   | 0,5 | 132          | 6,8 | 124    | 3,7 | 1,3 |
| Աշխարհ.        | 138          | 6,1 | 119    | 6   | 2,2 | 145          | 7,5 | 123    | 6,5 | 2,2 |
| ԴԱՃ, մմ ս.ս.   |              |     |        |     |     |              |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 94           | 4   | 76     | 3,0 | 4   | 97           | 2,6 | 82     | 2,1 | 3,5 |
| Ֆիզ/մաթ        | 79           | 7   | 78     | 2,2 | 0,1 | 84           | 7,1 | 82     | 2   | 0,3 |
| Աշխարհ.        | 92           | 7,2 | 70     | 3,2 | 2,8 | 92           | 3,3 | 73     | 3,6 | 3,8 |
| ՄԿՀ, զարկ/րոպե |              |     |        |     |     |              |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 73           | 0,7 | 76     | 3,1 | 1   | 70           | 3,6 | 71     | 1,8 | 0,3 |
| Ֆիզ/մաթ        | 75           | 3,3 | 89     | 3,1 | 3,1 | 73           | 2,7 | 77     | 1,6 | 1,3 |
| Աշխարհ.        | 73           | 5,6 | 76     | 2,5 | 0,5 | 73           | 2,6 | 72     | 1,2 | 0,3 |

Նկատելի է, որ ինչպես ուսումնական տարվա սկզբում, այնպես էլ քննաշրջանում (աղյուսակներ 2, 3) կենս/ քիմ ամբիոնի տղամարդ դասախոսների ՍԱՃ-ի ցուցանիշները գերազանցում են մյուս երկու ամբիոնների տղամարդ դասախոսների ՍԱՃ-ի ցուցանիշներին: Աշխարհագրության ամբիոնի կին դասախոսների ՍԱՃ-ի ցուցանիշները և՛ ուսումնական տարվա սկզբին, և՛ քննական շրջանում ցածր են եղել մյուս երկու ամբիոնների կին դասախոսների համապատասխան ցուցանիշներից:

ԴԱՃ-ի տվյալների վերլուծությունն ուսումնական տարվա սկզբին (դասերից առաջ և հետո) և քննական շրջանում (քննությունից առաջ և հետո) ցույց են տվել, որ կենս/քիմ ամբիոնի դասախոսների ցուցանիշները գերազանցում են մյուս ամբիոնների դասախոսների ցուցանիշներին (աղյուսակ 2, 3):

Տարբեր ամբիոնների դասախոսների ՄԿՀ տվյալների միջև տարբերությունները բացահայտվել են և՛ ուսումնական տարվա սկզբին և՛ քննաշրջանում: Ընդ որում, նվազագույն ՄԿՀ-ն այդ նույն ժամանակահատվածներում գրանցվել է կենս/քիմ ամբիոնի և՛ տղամարդ, և՛ կին դասախոսների մոտ: Ընդհանրապես ցածր անոթազարկը վկայում է

սիրտ-անոթային համակարգի գործունեության ավելի բարձր և տնտեսող մակարդակի մասին [1]: Համեմատաբար հաճախակի անոթազարկ սեպտեմբեր-հոկտեմբերին դասերից հետո գրանցվել է ֆիզ/մաթ ամբիոնի տղամարդ և կին դասախոսների մոտ (աղյուսակ 2):

Աղյուսակ 3

**Դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշները քննաշրջանում**

| Ամբիոն         | Տղամարդիկ         |     | Կանայք |     | t   | Տղամարդիկ         |     | Կանայք |     | t   |
|----------------|-------------------|-----|--------|-----|-----|-------------------|-----|--------|-----|-----|
|                | M                 | ±m  | M      | ±m  |     | M                 | ±m  | M      | ±m  |     |
|                | Քննությունից առաջ |     |        |     |     | Քննությունից հետո |     |        |     |     |
| ՍԱՀ, մմ ս.ս.   |                   |     |        |     |     |                   |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 144               | 5,6 | 119    | 5   | 3,3 | 150               | 5   | 129    | 4,7 | 3   |
| Ֆիզ/մաթ        | 126               | 6,6 | 119    | 3   | 0,9 | 135               | 7,6 | 127    | 3,3 | 0,9 |
| Աշխարհ.        | 141               | 7,8 | 115    | 6,3 | 2,6 | 148               | 7,3 | 126    | 6,4 | 2,2 |
| ԴԱՀ, մմ ս.ս.   |                   |     |        |     |     |                   |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 95                | 3,6 | 75     | 3,5 | 5,2 | 100               | 3   | 81     | 2,8 | 4,8 |
| Ֆիզ/մաթ        | 77                | 7,3 | 76     | 2,4 | 0,1 | 87                | 8,2 | 79     | 2,6 | 0,9 |
| Աշխարհ.        | 93                | 1,7 | 70     | 3,4 | 6   | 98                | 1,5 | 72     | 3,7 | 5,5 |
| ՍԿՀ, զարկ/րոպե |                   |     |        |     |     |                   |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 67                | 2,6 | 71     | 1,6 | 1,3 | 73                | 2,6 | 72     | 1,2 | 0,4 |
| Ֆիզ/մաթ        | 72                | 2   | 84     | 2,5 | 3,8 | 73                | 1,7 | 77     | 1,5 | 1,7 |
| Աշխարհ.        | 71                | 0,7 | 73     | 1,7 | 0,5 | 75                | 2,9 | 74     | 1,3 | 0,3 |

Ուսումնական տարվա վերջում (մայիս) անցկացված հետազոտությունների երրորդ փուլի հեմոդինամիկական ցուցանիշների չափումների տվյալները վկայում են (աղյուսակ 4), որ եթե ուսումնական տարվա սկզբին և քննաշրջանում դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշների մակարդակները դասերից հետո բարձրանում են, ապա ուսումնական տարվա վերջում (ծանրաբեռնվածությունից հետո) դրանք իջնում են, ինչը խոսում է գերծանրաբեռնվածության մասին:

Ընդհանուր առմամբ, արյան ճնշման ցուցանիշների միջին մակարդակները ուսումնական տարվա սկզբում, քննաշրջանում և ուսումնական տարվա վերջում տղամարդ դասախոսների մոտ ավելի բարձր են, քան կին դասախոսների մոտ, իսկ անոթազարկի տվյալները՝ ավելի ցածր ( $p < 0.1 - 0.01$ ):

**Դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշները ուսումնական տարվա վերջին**


| Ամբիոն         | Տղամարդիկ    |     | Կանայք |     | t   | Տղամարդիկ    |     | Կանայք |     | t   |
|----------------|--------------|-----|--------|-----|-----|--------------|-----|--------|-----|-----|
|                | M            | ±m  | M      | ±m  |     | M            | ±m  | M      | ±m  |     |
|                | Դասերից առաջ |     |        |     |     | Դասերից հետո |     |        |     |     |
| ՍԱՃ, մմ ս.ս.   |              |     |        |     |     |              |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 140          | 9,6 | 123    | 3,6 | 1,5 | 133          | 8,6 | 120    | 3   | 1,4 |
| Ֆիզ/մաթ        | 126          | 1,5 | 119    | 3   | 2   | 123          | 1,8 | 117    | 2,6 | 2   |
| Աշխարհ.        | 123          | 2,1 | 118    | 3   | 1,4 | 123          | 2,1 | 110    | 3,1 | 3,3 |
| ԴԱՃ, մմ ս.ս.   |              |     |        |     |     |              |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 100          | 4   | 81     | 2,3 | 6,3 | 83           | 4,5 | 82     | 1,8 | 0,1 |
| Ֆիզ/մաթ        | 87           | 2,2 | 81     | 2,0 | 2,0 | 79           | 2   | 82     | 1,7 | 1,3 |
| Աշխարհ.        | 87           | 3   | 82     | 2,1 | 1,4 | 87           | 1,3 | 78     | 1,5 | 2,3 |
| ՄԿՀ, զարկ/րոպե |              |     |        |     |     |              |     |        |     |     |
| Կենս/քիմ       | 95           | 3,1 | 82     | 1,7 | 3,7 | 74           | 3,6 | 72     | 1,5 | 0,2 |
| Ֆիզ/մաթ        | 83           | 1,9 | 90     | 2,6 | 0,8 | 76           | 2,9 | 82     | 2   | 1,6 |
| Աշխարհ.        | 84           | 2   | 94     | 2,9 | 2,8 | 79           | 2,3 | 78     | 2,3 | 1,3 |

Ուսումնական տարվա ընթացքում հիմնական հեմոդինամիկական ցուցանիշների դինամիկական ներկայացված է ստորև բերվող գրաֆիկում:


Բոլոր ամբիոնների տղամարդ ներկայացուցիչների մոտ ուսումնական տարվա վերջում տեղի է ունեցել ՍԱՃ-ի իջեցում (գրաֆիկ): Ֆիզ/մաթ ամբիոնի տղամարդկանց մոտ ուսումնական տարվա սկզբից մինչև նրա ավարտը այն նվազել է 15 մմ ս.ս., իսկ կանանց մոտ՝ 4 մմ ս.ս.: Ուսումնական տարվա վերջում ֆիզ/մաթ ամբիոնի տղամարդկանց մոտ նկատվել է ԴԱՃ տվյալների բարձրացում 8 մմ ս.ս., իսկ աշխարհագրության ամբիոնի կանանց մոտ՝ 18 մմ ս.ս. (գրաֆիկ): Ուսումնական տարվա վերջում բոլոր ամբիոնների դասախոսների մոտ նկատվել է ՄԿՀ տվյալների հավաստի ավելացում: Քիմ/կենս. ամբիոնի տղամարդկանց մոտ այն ավելացել է 22 զարկ/ր, իսկ աշխարհագրության ամբիոնի կանանց մոտ՝ 18 զարկ/ր:

Այսպիսով՝ ԱրՊՀ դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշների դինամիկական ուսումնական տարվա ընթացքում բնութագրվում է ալիքաձև փոփոխություններով՝ կապված հոգնածության հետ, իր զագաթնակետին հասնելով ուսումնական տարվա վերջում (գրաֆիկ): Վերջինս դիտվում է


գրականության հեղինակների կողմից [2] որպես անբարենպաստ միտում՝  
 հետազայում սիրտ-անոթային հիվանդությունների զարգացման գործում:  
 Տղամարդիկ Կանայք




ՄԱՃ, ՄՄՄ.Ս.




ՄԱՃ, ՄՄՄ.Ս.




ԴԱՃ, ՄՄՄ.Ս.



ԴԱՃ, ՄՄՄ.Ս.



ՄԿՀ, ԶԱՐԿ/ԴՈՊԵ



ՄԿՀ, ԶԱՐԿ/ԴՈՊԵ

Գրաֆիկ: Դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշների տարեկան  
 փոփոխությունները:

կենս. և քիմիա [redacted], ֆիզ. և մաթ. [redacted], աշխարհ. [redacted]

Կատարված համալիր հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. ԱրՊՀ դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշների տարիքասեռային ուսումնասիրություններից պարզվել է, որ դրանք միանշանակ համապատասխանում են մեր տարածաշրջանի նորմերին, որոնք բնութագրվում են համեմատաբար ցածր արյան ճնշմամբ և բարձր անոթազարկով, ընդ որում տղամարդկանց մոտ այդ ցուցանիշներն ավելի բարձր են, քան կանանց մոտ:

2. Նույն դասախոսների պարբերական հետազոտությունները ուսումնական տարվա ընթացքում բացահայտել են նրանց սիրտ-անոթային համակարգի առանձին ցուցանիշների հարմարողական ռեակցիաների կախվածությունը ոչ միայն սեռից և տարիքից, այլ նաև դասավանդվող մասնագիտությունից: Տարբեր ամբիոններում հետազոտված դասախոսների հեմոդինամիկական ցուցանիշների տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ տղամարդ և կին դասախոսների մոտ դրանք տատանվում են, ինչը վկայում է նրանց սրտի լարված աշխատանքի մասին:

3. Հեմոդինամիկական ցուցանիշների տարեկան դինամիկան, ուսումնական գործընթացին ի պատասխան, հիմնականում կրում է երկարատև հարմարողական բնույթ. ապահովում է սրտի գործունեության խնայողությունը, հետևաբար նաև գլխուղեղի արյունամատակարարման համապատասխան փոխադեցությունները: Ուսումնական տարվա սկզբի հեմոդինամիկական ցուցանիշների կայուն վիճակը փոխարինվում է օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի կտրուկ փոփոխությամբ քննաշրջանում, այնուհետև՝ ուսումնական տարեվերջում՝ սկզբնական տվյալների համեմատ արտահայտելով օրգանիզմում զարգացած գերլարվածության գործընթացը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խուդավերդյան Դ.Ն., Ֆանարջյան Վ.Բ. Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքներ: Երևան, 1998, էջ 331-339:
2. Մինասյան Ս.Ս., Ադամյան Ծ.Բ., Սարգսյան Ն.Վ. Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա: Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 563-575:
3. Մինասյան Ս.Ս., Ադամյան Ծ.Բ. Առողջագիտություն /դասագիրք/: Երևան, ԵՊՀ հրատ., 2008, էջ 275-283:
4. Брехман И.И. Валеология-наука о здоровье. 2-е изд., доп., перераб. М.: Физкультура и спорт, 1990. 208 с.
5. Дивиченко И.В., Рыбка О.А. Физиология человека: учебное пособие. Белгород, 2008, с. 216-221.

6. Печеркина А. А. Технологии поддержки профессионального здоровья учителя /монография / Урал. гос. пед. ун-т, Екатеринбург, 2011, с. 53-61.
7. Попов В.И. и др. Методические указания по общей гигиене: для студентов методико-профилактического фак. Воронеж, 2009, с-321-331.
8. Полиевский С.А. Общая и специальная гигиена: учебник / С. А. Полиевский, А. Н. Шафранская. М.: Академия, 2009, с.74.
9. Фомин Н.А. Физиологические основы двигательной активности. М.: ФиС, 1998, 224с.

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Հ. Գ.Գալստյանը:



ՀՏԴ 579.61

Բժշկական մանրէաբանություն

**Հասմիկ ԳԱԼՍՅԱՆ**

ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ.

E-mail: ghg77@mail.ru

**Իվետա ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ԱՀ ԱՆ ՀԲԿ բակտերիոլոգիական լաբորատորիայի վարիչ

E-mail: iveta.stepanyan.1976@mail.ru

**Արփինե ՅԱՐԱՄԻՇՅԱՆ**

ԱրՊՀ մագ.2-րդ կուրսի ուսանողուհի

E-mail: yaramishyan.arpine@mail.ru

## ՍՏԱՖԻԼԱԿՈԿԻ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐ

Ստաֆիլակոկերը ֆակուլտատիվ անաէրոբ օրգանիզմներ են և լայնորեն տարածված են հողում, օդում, կենդանիների, մարդու մաշկի նորմալ միկրոֆլորայում: Այս խմբի մեջ մտնում են պաթոգեն և պայմանականորեն պաթոգեն տեսակներ՝ ընդունակ առաջացնելու էնդո- և էկզոտոկսիններ (ֆերմենտներ, որոնք խանգարում են բջջի նորմալ գործունեությունը): Ստաֆիլակոկը բակտերիաների ամենամեծ խմբերից է և ունի մոտ 40 տարատեսակ: Ինչպես մնացած պաթոգեն բակտերիաները, նրանք նույնպես առաջացնում են մի շարք հիվանդություններ, որոնց բուժումը իրականացվում է միայն հակաբիոտիկների միջոցով: Սույն աշխատանքում ներկայացված են հակաբիոտիկների նկատմամբ ստաֆիլակոկի զգայունության որոշման ուսումնասիրության արդյունքները:

**Բանալի բառեր՝** հակաբիոտիկներ, ստաֆիլակոկ, զգայունություն, միկրոօրգանիզմներ, մուտացիա, բակտերիաներ, դիմադրողականություն, սկավառակադիֆուզիոն մեթոդ:

### А.Галстян, И.Степанян, А.Ярамишян ОПРЕДЕЛЕНИЕ ВОСПРИИМЧИВОСТИ СТАФИЛОКОККА К АНТИБИОТИКАМ

Стафилококки являются факультативными анаэробными организмами и широко распространены в почве, воздухе, нормальной микрофлоре животных и коже человека. В эту группу входят патогенные и условно-патогенные виды, способные продуцировать эндо- и экзотоксины (ферменты, которые мешают нормальной клеточной активности). Стафилококк является одной из крупнейших групп бактерий, в котором насчитывается около 40 видов. Как и другие

патогенные бактерии, они также вызывают ряд заболеваний, лечение которых осуществляется лишь с использованием антибиотиков. В данной работе представлены результаты исследований по определению чувствительности стафилококка к антибиотикам.

**Ключевые слова:** антибиотики, стафилококк, чувствительность, микроорганизмы, мутация, бактерии, иммунитет, диско-диффузионный метод.

**A. Galstyan, I. Stepanyan, A. Yaramishyan DETERMINATION ON STAPHYLOCOCCUS SENSITIVITY TO ANTIBIOTICS**

*Staphylococci are facultative anaerobic organisms and are widely spread in soil, air, normal microflora of animals and human skin. This group includes pathogenic and conditionally pathogenic species which are capable of producing endo- and exotoxins (enzymes that interfere normal cellular activity). Staphylococcus is one of the largest bacterial groups with about 40 species. Like other pathogenic bacteria, they also cause a number of diseases that can only be treated with antibiotics. The article presents the results of sensitivity determination studies of staphylococcus to antibiotics.*

**Keywords:** antibiotics, staphylococcus, sensitivity, microorganisms, mutation, bacteria, immunity, disk diffusion method.

Վերջին տարիներին մեծ տարածում են գտել բակտերիոլոգիական հիվանդությունները, և դրա հետ կապված մեծացել է հակաբիոտիկների չարաշահումը: Այդ նկատառումից ելնելով՝ կարևորվում է լաբորատոր պայմաններում բակտերիաների զգայունությունը որոշելու միջոցով գտնել հակաբիոտիկների այն խմբերը, որոնք առավել արդյունավետ են դրանց դեմ պայքարի համար: Վերջինս հնարավորություն կտա խուսափելու չարդարացված սխալներից և հավանականության բարձր տոկոսով բակտերիաների դեմ պայքարում ընտրելու համապատասխան հակաբիոտիկները:

Սույն աշխատանքի նպատակն է ժամանակակից բակտերիոլոգիայում կիրառվող հակաբիոտիկների նկատմամբ ստաֆիլակոկի զգայունության որոշման և նրա դեմ պայքարում առավել ակտիվ հակաբիոտիկների ուսումնասիրությունը: Հետազոտության փորձարարական մասն իրականացվել է ԱՀ ԱՆ ՀԲԿ ՓԲԸ-ի բակտերիոլոգիական լաբորատորիաներում: Պատրաստած քսուքի ուսումնասիրությունը իրականացվել է թվային մանրադիտակով՝ ԱրՊՀ կենսաբանության լաբորատորիայում:


**Ստաֆիլակոկը** (լատ. *Staphylococcus*, հին հունական Σταφυλή — «խաղող» և κόκκος — «հատիկ»)՝ Staphylococaceae ընտանիքին պատկանող բակտերիաների խումբ է: Այս խմբի ներկայացուցիչները գնդաձև, անշարժ գրամ-դրական կոկեր են, սպոր և պատիճ չեն առաջացնում, նրանց բջջի տրամագիծը 0.6-1,2 մկմ սահմանում է: Այս խմբի բակտերիաների համար բնութագրական է տարբեր հարթություններով բաժանվելը, որի

հետևանքով էլ առաջանում է «խաղողի ողկույզ» տեսքը: Այս բակտերիաները կլորավուն գաղութաբնակ օրգանիզմներ են, որոնք բնակվում են այլ տիպի բակտերիաների ներկայացուցիչների հետ: Մանդամիջավայրերում առաջացնում են պիզմենտ՝ ոսկեգույն (*S.aureus*), սպիտակ (*S.epidermidis*): Արտաքին միջավայրում առավել կայուն են, քան մյուս կոկերը:

Ստաֆիլակոկները ֆակուլտատիվ անաէրոբ օրգանիզմներ են, լայն տարածված են հողում, օդում, կենդանիների և մարդու մաշկի նորմալ միկրոֆլորայում [1-3]: Դրա մեջ մտնում են պաթոգեն և պայմանականորեն պաթոգեն տեսակներ: Պաթոգեն ստաֆիլակոկերը ընդունակ են առաջացնել էնդո- և էկզոտոկսինների՝ ֆերմենտներ, որոնք խանգարում են բջջի նորմալ գործունեությունը: Այս բակտերիաների ոչ մեծ քանակության դեպքում մարդու իմունային համակարգը ընդունակ է պայքարելու [2,3]: Նորմալ իմունային համակարգի պարագայում այս բակտերիաները հիվանդություն չեն առաջացնում:

Ստաֆիլակոկը բակտերիաների ամենամեծ խմբերից է և ունի մոտ 40 տարատեսակ: Մարդկանց մոտ հիվանդություններ կարող են առաջացնել ստաֆիլակոկի հետևյալ երեք տեսակները՝ սաթրիֆիտիկ, էպիդերմային և ոսկեգույնը [3]: Ստաֆիլակոկը մուտք է գործում մակրոօրգանիզմ բազմաթիվ ուղիներով՝ առաջացնելով տարբեր բնույթի թարախային ինֆեկցիաներ՝ ֆուրունկուլ, ֆլեզմոնա, թարախակույտ, թոքաբորբեր և այլն: Ախտածնությունն ու վիրուլենտությունն ստաֆիլակոկի մոտ պայմանավորված են նրա արտաթայնով և ագրեսիայի ֆերմենտով: Արտաթայնն օրգանիզմի վրա ունի տարբեր կենսաբանական ազդեցություն՝  $\alpha$ -տոքսինն օժտված է հեմոլիտիկ և լետալ ակտիվությամբ: Ագրեսիվության ֆերմենտներից հատկապես ուշադրության են արժանի պլազմոկոագուլազան, լեցիտինազան, ֆիբրինոլիզինը:

Ստաֆիլակոկի պատրաստված քսուքը մեր կողմից ուսումնասիրվել է ԱրՊՀ լաբորատորիայի թվային մանրադիտակով (նկար 1):



Նկար 1. Ստաֆիլակոկի տեսքը մանրադիտակի տակ

Ստաֆիլակոկի «ծաղկման» շրջանը աշնանային և ձմեռային շրջանն է, երբ գլուխ են բարձրացնում այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են թարախային գրիպը, անգինաները, բրոնխիտը, օտիտները: Մեր տարածաշրջանում ստաֆիլակոկի ամենաակտիվ շրջանը 2016թ. էր: 2018թ. փետրվարին լաբորատորիա դիմած 57 հիվանդներից ստաֆիլակոկը բացահայտվել է 20-ի մոտ, 2017թ. նոյեմբերին՝ 41 հիվանդից 15-ի, 2016թ. միայն հոկտեմբերին դիմած 32 հիվանդներից 23-ի մոտ, իսկ 2015թ. հունվարին՝ 15 հիվանդից 8-ի:

Ստաֆիլակոկի բուժումը հակաբիոտիկներով համարվում է այդ բակտերիայի դեմ պայքարի միակ միջոցը [5]: Վերջին տարիներին ստաֆիլակոկի նկատմամբ գիտնականների կատարած փորձերի արդյունքում մշակվել է հակաբիոտիկների մի նոր խումբ. այն կարող է ազդել մեթիցիլինի նկատմամբ կայուն ոսկեգույն ստաֆիլակոկի շտամների վրա, որը կայուն է նաև սովորական հակաբիոտիկների նկատմամբ: Նոր հակաբիոտիկները պարունակում են սինթետիկ իբիդոլում, կոբալտ և այլ միացություններ, որոնք դժվար են քայքայվում բակտերիաների կողմից: Չնայած դրան՝ դեռ պարզաբանված չէ այդ նոր տիպի հակաբիոտիկների ազդեցությունը մարդու առողջության վրա: Սկզբում դրանք կիրառվել են կենդանիների վրա, որոնց մոտ այդ հակաբիոտիկները պաթոգեն ազդեցություն չեն ունեցել, այնուհետև նաև մարդու բջիջների վրա, այս դեպքում նույնպես խնդիրներ չեն առաջացել, հակաբիոտիկների նկատմամբ կայուն ստաֆիլակոկի բջիջները ոչնչացել են, և որևէ ազդեցություն առողջ բջիջների վրա տեղի չի ունեցել [5, 6]: Ներկայումս փորձեր են իրականացվում պարզելու այդ հակաբիոտիկների մյուս հատկությունները: Անհրաժեշտ է որոշել, թե որքանով են նրանք կայուն, ինչպես են բաշխվում ու կուտակվում հյուսվածքներում. արդյոք՝ թափանցում են արյան սպիտակ գնդիկների մեջ և ինչպես են յուրացվում օրգանիզմի կողմից: Բացառված չէ, որ մոտակա ժամանակներում բժշկության մեջ ստաֆիլակոկի կայուն բակտերիաների դեմ նոր հակաբիոտիկների խումբ կունենանք [6]:

Ներկայումս հանդիպում են ստաֆիլակոկների հակաբիոտիկների նկատմամբ կայուն տեսակներ, որոնք հանդիսանում են R-պլազմիդներով պայմանավորված մուտանտներ: Բնության մեջ գոյություն ունեն նաև ստաֆիլակոկի շտամներ, որոնք կայուն են հակաբիոտիկների խմբերի նկատմամբ, նման շտամները կոչվում են «մետիցիլին-ռեզիստենտ» և, ցավոք, ամեն տարի այդ շտամների թիվը ավելանում է մոտ 10%-ով: Հակաբիոտիկների նկատմամբ այս բակտերիաների դիմադրության առաջացման մեխանիզմը կապված է բջջաթաղանթի վրա ռեցեպտորային սպիտակուցի մուտացիայի հետ: Հակաբիոտիկների մոլեկուլները չեն կարողանում ադսորբցվել բակտերիայի բջջի թաղանթի վրա: Ստաֆիլակոկի շտամները դիմացկուն են նաև մեկ այլ բետա-լակտամ հակաբիոտիկների մեծ խմբի՝ ցեֆալոսպորինների (տերմինը ստացվել է

ցեֆալոսպորիում (*Cephalosporium*) բորբոսասնկից) նկատմամբ: Այնուամենայնիվ ոսկեգույն ստաֆիլակոկի (*S. aureus*) որոշ շտամներ վերջին տարիներին ձեռք են բերել դիմացկունություն միանգամից մի քանի տեսակի հակաբիոտիկների նկատմամբ: Նման տեսակի բակտերիաների պոպուլյացիաների շտամները նշվում են **MDR (Multidrug resistant)** հապավումով: Այժմ բժիշկների գինանոցում MDR-շտամների դեմ պայքարելու համար կա հակաբիոտիկ վանկոմիցինը, սակայն ավելի ու ավելի են հայտնվում շտամներ, որոնք դիմացկուն են նաև այդ հակաբիոտիկի նկատմամբ: Ստաֆիլակոկային վարակների շտամների քանակությունը, որոնք չեն ենթարկվում հակաբիոտիկների ազդեցությանը, ներկայում հասնում է 2%-ի [5]:

Ստաֆիլակոկի զգայունությունը որոշելու համար բակտերիան կարող ենք վերցնել ցանկացած լորձային թաղանթից՝ մաշկից, քթի խոռոչից, աղիներից և այլն: Փորձի ընթացքում հակաբիոտիկների նկատմամբ ոսկեգույն ստաֆիլակոկի զգայունությունը որոշելու համար հատուկ ստերիլ ձողիկներով նյութը վերցվել է քթի խոռոչից: Կատարվել է ցանքս համապատասխան սնուցող միջավայրերում՝ արյունային և արյան գերհագեցած (շոկոլադե) միջավայր, ԴԱԱ, Էնդո և Սաբուրո, որից հետո պատրաստի Պետրիի թասիկները տեղափոխվել են թերմոստատ 24 ժամ 37°C պայմաններում: Այնուհետև համապատասխան միջավայրերում կատարվել է գաղութների տարբերակում՝ ըստ նրանց աճմանը: Ստացված գաղութները համապատասխան միջավայրերում ունենում են հետևյալ պատկերը (նկար 2)՝

- ԴԱԱ միջավայրում ունեն յուրահատուկ աճման ձև, ցուցաբերում է լեցիտինազայի հատկություն:


- Արյունային միջավայրի վրա ունեն կլոր, ուռուցիկ դեղնասպիտակավուն հարթ եզրերով գաղութներ: Ի տարբերություն մնացած ստաֆիլակոկների՝ ոսկեգույն ստաֆիլակոկն ունի հեմոլիտիկ հատկություն (քանի որ հեմոլիզում են արյան կարմիր գնդիկները):

- Էնդո միջավայրում ստաֆիլակոկը հիմնականում չի աճում:

- Արյան գերհագեցած միջավայրում աճում է այնպես, ինչպես արյունային միջավայրում:

- Սաբուրո միջավայրը նախատեսված է հիմնականում խմորասնկեր աճեցնելու համար[4]:

-




**Նկ. 2. Ուսումնասիրվող նյութը համապատասխան սննդային միջավայրերում:**

Աճած կուլտուրաների իդենտիֆիկացումը՝ ախտաճնությունը և վիրուլենտությունը որոշում են հետևյալ հատկանիշներով.

- պլազմոկոագուլազային ակտիվությամբ,
- լեցիտինազային ակտիվությամբ,
- գլյուկոզը և մաննիտը անաերոբ պայմաններում քայքայելու ունակությամբ:

Աճած գաղութներից կարող են պատրաստվել քսուքներ, այնուհետև ներկվելով Գրամի ներկման եղանակով՝ ուսումնասիրվել մանրադիտակի օգնությամբ: Վերջնական դիֆերենցման համար պետք է որոշել ոսկեգույն ստաֆիլակոկի պլազմա կոագուլյացիոն ակտիվությունը, որը լաբորատոր պայմաններում որոշվում է հատուկ թեստով (ճագարի չոր պլազմայով): Հաջորդ քայլը՝ անջատված մաքուր կուլտուրայի զգայունության որոշումն է հակաբիոտիկների նկատմամբ: Մաքուր կուլտուրան աճեցվում է հատուկ միջավայրի վրա (Մյուլեր-Խիլտոն): Այնուհետև ստերիլ պինցետով միջավայրում տեղադրվում են հակաբիոտիկներով ներծծված սկավառակները: Ստաֆիլակոկի հակաբիոտիկների նկատմամբ զգայունությունը առավել արդյունավետ է որոշել սկավառակա-դիֆուզիոն մեթոդով: Սկավառակների հեռավորությունները միմյանցից պետք է կազմի 15մմ, որից հետո Պետրիի թասիկները տեղադրվում են թերմոստատում 24 ժամ 37°C պայմաններում: Հաջորդ օրը հաշվարկվում են փորձի արդյունքները ըստ սկավառակների շուրջը առաջացած ստերիլ զոնայի տրամագծի (նկար 3), որը չափվում է հատուկ սանդղակի և քանոնի օգնությամբ [4]:



**Նկար 3. Ստաֆիլակոկի զգայունության զոնաները**

Ներկայումս հակաբիոտիկների հանդեպ ստաֆիլակոկի զգայունությունը ամբողջ աշխարհում որոշվում է մեթոդով, որը մշակվել է ԱՄՆ Ազգային կլինիկոլաբորատորիայի կոմիտեի (NCCLS) նորմերով [4, 6]: Հակաբիոտիկների նկատմամբ զգայունությունը որոշվում է ոչ թե հետազոտվող նյութով, այլ անմիջապես հարուցիչից, որը աճեցվել է հետազոտվող նյութից վերցված կուլտուրայից: Այդ իսկ պատճառով նյութը պետք է վերցնել մինչև հակաբակտերիալ թերապիան:

Սույն աշխատանքը ունի կիրառական նշանակություն, և հետազոտության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ ԱրՊՀ կենսաբանության լաբորատորիայում բակտերիոլոգիական որոշ հետազոտությունների իրականացման համար:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Հ.Մ., Աստվածատրյան Վ.Ա., Աբրահամյան Ռ.Ա. Հանրամատչելի բժշկական հանրագիտարան: Երևան, 2001:
2. Դանիելյան Լ.Թ. Ընդհանուր և մասնավոր մանրէաբանություն: Երևան, 2002:
3. Մարտիկյան Հ.Ռ. Ընդհանուր մանրէաբանության հիմունքներ: Երևան, 2015:
4. Сбойчаков В. Б. Микробиология, основы эпидемиологии и методы микробиологических исследований : учебник для средних медицинских учебных заведений. СанктПетербург : СпецЛит, 2017, 712 с.
5. Сизенцов А.Н., Мисетов И.А., Каримов И.Ф. Антибиотики и

- || химиотерапевтические препараты, Оренбург, ОГУ, 2012, 489 с.  
6. <https://life.panorama.am/hy/news/2014/02/26/bacteria/103534>

ՀՈԴՎԱԾԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՐՑԱԽՈՒՄ»  
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



ՀՏԴ 595.773.4Կենդանաբանություն**Նոննա ԳՐԻԳՈՐՅԱՆ****ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոնի ասպիրանտ****E-mail: [nonna.grigoryan.88@mail.ru](mailto:nonna.grigoryan.88@mail.ru)****Վարուժան ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ****ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և Հիդրոէկոլոգիայի գիտական  
կենտրոնի առաջատար գիտաշխատող, կ.գ.դ.****E-mail: [varugh\\_zool52@mail.ru](mailto:varugh_zool52@mail.ru)**

**OPHIOMYIA CUNCTATA (HENDEL, 1920) (DIPTERA;  
AGROMYZIDAE) ԱԿԱՆԱՃԱՆՃԵՐԸ ԱՐՑԱԽԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ականաճանճերի *Ophiomyia* ցեղի ներկայացուցիչները լայնորեն տարածված են Եվրոպական երկրներում: Հոդվածում տրվում է *Ophiomyia cunctata* (Hendel, 1920) տեսակի կենսաբանական, էկոլոգիական և մորֆոլոգիական առանձնահատկությունները, տեր-բույսերը, վարակի էքստենսիվությունը, ինտենսիվությունը և ականների տիպերը:

**Բանալի բառեր՝** Երկթևեր, ականներ, ականաճանճեր, աստղաձաղկազգիներ, ինտենսիվություն, էքստենսիվություն:

**Н.Григорян, В.Оганесян**

**OPHIOMYIA CUNCTATA (HENDEL, 1920) (DIPTERA;  
AGROMYZIDAE) МИНИРУЮЩИЕ МУХИ В РЕСПУБЛИКЕ  
АРЦАХ**

Минирующие мухи рода *Ophiomyia* широко распространены по всей Европы. В статье представлены биологические, экологические и морфологические особенности, растения-хозяева, экстенсивность и интенсивность заражения и типы мин вида *Ophiomyia cunctata* (Hendel, 1920).

**Ключевые слова:** Двукрылые, *Ophiomyia*, мины, минирующие мухи, Asteraceae, интенсивность, экстенсивность

**N.Grigoryan, V.Hovhannissyan**

**OPHIOMYIA CUNCTATA (HENDEL, 1920)  
(DIPTERA; AGROMYZIDAE) MINING FLIES IN ARTSAKH  
REPUBLIC**

The mining flies of the genus *Ophiomyia* are quite widespread in Europe. The article presents the biological, ecological and morphological features, host-plants, extensiveness and intensity of infection and mines' types of the species *Ophiomyia cunctata* (Hendel, 1920).

**Keywords:** *Diptera; Ophiomyia; mines; leaf-miners; Asteraceae; intensity; extensiveness*

**Ներածություն:** Արցախի Հանրապետությունում ականաճանների ընտանիքի (*Diptera; Agromyzidae*) հետազոտությունները սկսվել են 2018 թ-ից: *Ophiomyia* ցեղի ականաճանները լայնորեն տարածված են ամբողջ աշխարհում և հանդիսանում են աստղաձաղկազգի (*Asteraceae*) բույսերի շատ տեսակների (*Solidago virgaurea* L. *Cichorium intybus* L. և այլն) տերևային ականորդներ:

Ըստ գրական տվյալների՝ *Ophiomyia* ցեղը նախկինում դիտարկվում էր որպես *Agromyza* ցեղի ենթացեղ, իսկ հետագայում ավստրիացի միջատաբան Ֆ. Ջ. Հենդելը ենթացեղը նկարագրեց որպես առաձին ցեղ, որի հասուն ներկայացուցիչների մեծամասնությանը հատուկ է սև բզզան և դիմային սեպ, վերջինս բացակայում է այլ ցեղերի մոտ և համարվում է ցեղի տարբերակիչ հատկանիշ, սակայն առանձնյակների մյուս մասը գուրկ է դիմային սեպից [1]: Ուստի տեսակի պատկանելությունը որոշելիս պետք է հաշվի առնել զարգացման բոլոր փուլերի՝ հասունի, թրթուրի և հարսնյակի մորֆոլոգիական, էկոլոգիական, կենսաբանական առանձնահատկությունները և ականների տիպերը:

**Նյութը և մեթոդները:** Հետազոտության նյութ են հանդիսացել 2018-2019թթ. Արցախի Հանրապետության տարբեր շրջաններից հավաքված, ականաճաններով վարակված բույսերի տերևները և ականներից դուրս բերված ականաճանների թրթուրներն ու հարսնյակները, ինչպես նաև հարսնյակների դաստիարակման ընթացքում դուրս եկած հասուն առանձնյակները: Բույսի վարակի էքստենսիվությունը որոշվել է 100 բույսի հաշվարկով, իսկ ինտենսիվությունը՝ մեկ բույսի վրա ականավորված տերևների քանակով: Նյութի հավաքը և մշակումը կատարվել է *Agromyzidae* ընտանիքի համար ընդունված դասական մեթոդներով [2,3,4]: Ականաճանների մորֆոլոգիական հետազոտությունները կատարվել են Արցախի պետական համալսարանի կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայում XSZ-0800 և ADSM302 մակնիշի թվային մանրադիտակների օգնությամբ: Ականաճանների և տեր-բույսերի տեսակները որոշվել են համապատասխան որոշիչներով [4, 5, 6]:

**Արդյունքների ամփոփում:** Հետազոտությունների ընթացքում բացահայտվել է, որ *O. cunctata* տեսակը աստղաձաղկազգիներ ընտանիքի Կաթնբեկ դաշտային (*Sonchus arvensis*) և Խարբուկ խոշորաձաղիկ (*Lapsana grandiflora*) բույսերի մակաբույծ է:

Ականները ձևավորվում են տերևաթիթեղի վերին կամ ստորին եզրերից և նման են շատ նեղ անցուղու (նկ. 1): Թրթուրները, զարգանալով, թափանցում են կենտրոնական ջիղ, իսկ այստեղից նորից անցնում են տերևային թիթեղի մեջ, որտեղ սնվում են տերևային պարենխիմով և նորից

վերադառնալով կենտրոնական ջիդ՝ առաջ են շարժվում: Թրթուրի զարգացումը  $25\pm 1^\circ\text{C}$ -ի պայմաններում ընթանում է 5-6 օր: *S. arvensis* Բույսերի վարակի էքստենսիվությունը կազմում է 70-80%, իսկ *L. grandiflora* տեսակի մոտ՝ 65-70%, իսկ վարակի ինտենսիվությունը *S. arvensis* և *L. grandiflora* տեսակների մոտ կազմում է 40-60 (%):




Նկ. 1. *Ophiomyia cunctata* տեսակի թրթուրների ականների տեսքը  
**A** - *Sonchus arvensis*, **B** - *Lapsana grandiflora*

*O. cunctata* ականաճանձի թրթուրների և հարսնյակների վերջին հետին հատվածի վրա երևում են կարճ ոտիկի վրա տեղադրված էլիպսաձև 9 շնչացքներ (նկ.2) [7]:

Հարսնյակավորումը տեղի է ունենում գլխավոր ջրի ներսում: Հարսնյակներն ունեն սպիտակադեղնավուն գունավորում, զարգացման վերջին 2 օրում հարսնյակները դառնում են մոխրագույն: Հարսնյակի զարգացումը  $25\pm 3^\circ\text{C}$ -ի պայմաններում տևում է 7-13 օր: Պետք է նշել, որ  $25^\circ\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանային պայմաններում հարսնյակի զարգացման տևողությունը կրճատվում է, իսկ  $25^\circ\text{C}$ -ից ցածր պայմաններում՝ երկարում: Հասուն ձևերը ամբողջովին սև են, չունեն


կանաչավուն կամ պղնձագույն երանգ, ունեն 2 վերին (ors) և 2 ներքին օրբիտալային քիստեր (ori) [8]:



Նկ. 2 *Ophiomyia cunctata* տեսակի հարսնյակի ընդհանուր տեսքը

*A* – հետին շնչացքերը *B* – ընդհանուր տեսքը

Օրբիտալային մազիկները երկար են, ուղղված են դեպի առաջ, բացառություն են կազմում առջևի մի քանի մազիկները, որոնք ակնհայտորեն ուղղված են դեպի հետ: Բացակայում է դիմային սեպը, արական սեռի ներկայացուցիչները չունեն վիբրիսային փունջ: Անտենայի 3-րդ հատվածը կլոր է և սև: Կոստան հասնում է մինչև M1+2 ջիղը, M3+4 ջղի վերջին հատվածը թեթևակի կարճ կամ հավասար է նախավերջի հատվածին (նկ. 4) [9]: Մեջքը սև է, կրում է 2 գույգ դորզոցենտրալ (dc) քիստեր, ակրոստիքալ քիստերը (acr) դասավորված են մի քանի շարքով, նախակարային քիստերը բացակայում են: Բզզանը և ոտքերը սև են:



Նկ. 3 *Ophiomyia cunctata* տեսակի թևի կառուցվածքը

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են *O. cunctata* ականաճանձի վիճակագրական վերլուծության տվյալները (աղ.1):

*Ophiomyia cunctata* տեսակի մորֆոմետրիկ չափումների արդյունքները

Աղյուսակ 1

|                           |   | n<br>(մմ) | M<br>(մմ) | m<br>(մմ) | $\sigma$<br>(մմ) | Cv<br>(%) | t <sub>st</sub> |
|---------------------------|---|-----------|-----------|-----------|------------------|-----------|-----------------|
| Մարմնի<br>երկարություն    | ♂ | 19        | 1,92      | 0,02      | 0,08             | 4         | P>0,999         |
|                           | ♀ | 17        | 2,06      | 0,03      | 0,11             | 5,2       |                 |
| Թևի<br>երկարություն       | ♂ | 19        | 1,8       | 0,01      | 0,06             | 3,5       | P>0,999         |
|                           | ♀ | 17        | 1,9       | 0,02      | 0,08             | 4,1       |                 |
| Հարսնյակի<br>երկարություն |   | 24        | 2,4       | 0,04      | 0,21             | 8,7       | -               |

**Եզրակացություն:** Արցախի հանրապետությունում *Ophiomyia* ցեղի ականաճանձերը նկարագրվում են առաջին անգամ: *O. cunctata* տեսակն Արցախում ունի բավական մեծ տարածվածություն, և համարվում են վայրի աճող խոտաբույսերի (*S. arvensis*, *L. grandiflora*) վնասատուներ: Բույսերի վարակի էքստենսիվությունը *S. arvensis* տեսակի մոտ կազմում է 70-80%, իսկ *L. grandiflora* տեսակի մոտ՝ 65-70%: Բույսերի վարակի ինտենսիվությունը *S. arvensis* և *L. grandiflora* տեսակների մոտ կազմում է 40-60%: *Ophiomyia* ցեղի ականաճանձերի հայտնաբերումը Արցախի Հանրապետությունում ունի գիտական և գործնական մեծ նշանակություն, այն լրացուցիչ տեղեկություններ է տալիս այս ընտանիքի ներկայացուցիչների կենսաշխարհագրական տարածման, զարգացման, տեր բույսերի և նրանց վարակվածության առանձնահատկությունների մասին:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Spencer K.A. A revision of the palaearctic species of the genus *Ophiomyia* Braschnikov (Diptera: Agromyzidae)// Beiträge zur Entomologie, Band 14, Nr. 7/8, 1964. P.775-786. DOI: 10.21248/contrib.entomoL14.7-8.773-822
  2. Лакин Г.Ф. Биометрия // Издание четвертое, Москва «Высшая школа», 1990
  3. Hering M.E. Biology of the leaf miners // Berlin: Springer Science + Business Media, 1951. P. 301-309. DOI: 10.1007/978-94-015-7196-8.
  4. Spencer K.A., Steyskal G.C. Manual of the Agromyzidae (Diptera) of the US // Agriculture Handbook. 1986. Vol. 638. P. 8-14, 37-52
  5. Определитель насекомых европейской части СССР. Т. V. Двукрылые, Блохи. Вторая часть / под общ. ред. Г.Я. Бей-Биенко. Л.: Наука, 1970. с. 241-245
  6. Բալայան Կ. Վ. Լեռնային Ղարաբաղի Ֆլորան (Անոթավոր բույսեր): Ատեն., կենս. գիտ. թեկն., Երևան, 2014. 200 էջ
  7. Pitkin B., Willem E., Plant C. and Edmunds R. The leaf and stem mines of British flies and other insects (*Ophiomyia cunctata*). 2019. URL: [http://www.ukflymines.co.uk/Flies/Ophiomyia\\_cunctata.php](http://www.ukflymines.co.uk/Flies/Ophiomyia_cunctata.php) (accessed on 01.05.2020)
  8. Ortiz R.G. Biosystematic contributions to Agromyzidae: thesis Doctoral. Valencia, 2009. P. 79-85.
- Guglya Yu. A. Mining flies of the genus *Ophiomyia* (Diptera, Agromyzidae) of eastern Ukraine and adjacent territories: review of the species without a fasciculus // Vestnik zoologii, 48(1): 51–66, 2014. DOI: 10.2478/vzoo-2014-0005.

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Ն. Գ.Գալստյանը:



ՀՏԴ 581.92

Բուսաբանություն

Արմիդա ՀԱԿՈԲՅԱՆ

ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոն

## ՔՍԵՐՈՖԻԼ ԲՈՒՑՄԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի տարածքում քսերոֆիլ բուսականությանը կարելի է հանդիպել կիսանապատներում, տափաստաններում, լեռնատափաստաններում և չորասեր նոսր անտառներում: Այդ տարածքները առավելապես կրում են մարդածին գործոնի ազդեցությունը, խիստ ծանրաբեռնված են, հանդիսանում են արոտավայրեր և խոտհարքներ: Հաշվի առնելով, որ վերջին մի քանի տասնամյակներում բնության վրա մարդածին ազդեցությունը ուժեղանում է, ինչը, ի վերջո, հանգեցնում է կենսաբանական բազմազանության ոչնչացմանը, տարածաշրջանային բուսական աշխարհի ամենավաղ հնարավոր գույքագրումը և դրանց բնապահպանական, կենսաբանական, աշխարհագրական և այլ առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարևոր դեր է խաղում շրջակա միջավայրի իրազեկման ներկա փուլում: Մեր կողմից արձանագրվել է Արցախում տարածված քսերոֆիլ բուսականության մոտ յոթ տասնյակ բուսատեսակներ: Հոդվածում ներկայացված է քսերոֆիլ բուսականության տեսակային կազմը և տարածման արեալները:

**Բանալի բառեր՝** քսերոֆիլ բույսեր, կիսանապատային, տափաստանային, ֆրիգանոֆիլ բուսականություն, նոսր անտառներ, քսերոմորֆ կազմություն, օշինդր, փետրախոտ, գրիի:

**А. Акопян**

### РАСПРОСТРАНЕНИЕ КСЕРОФИЛЬНЫХ РАСТЕНИЙ В АРЦАХЕ

На территории Арцаха ксерофильная растительность встречается в полупустынях, степях, горных степях и засушливых редких лесах. На эти районы больше всего влияют антропогенные факторы, они очень нагружены и являются пастбищами и лугами. Учитывая, что воздействие человека на природу в последние десятилетия усилилось, что в конечном итоге приводит к исчезновению биоразнообразия, скорейшая возможная инвентаризация региональной флоры и изучение их экологических, биологических, географических и других особенностей играют важную роль в осознании экологических проблем на текущем этапе. Мы зафиксировали около семи десятков видов

ксерофильной растительности в Арцахе. В статье представлены таксоны ксерофильной растительности и ареалы распространения.

**Ключевые слова:** ксерофильные растения, полупустыня, степь, фриганоидная растительность, редколесья, ксероморфное строение, полынь, ковыль, можжевельник

**A. Hakobyan**

### **THE PREVALENCE OF XEROPHILIC PLANTS IN ARTSAKH**

*In the territory of Artsakh, xerophilic vegetation can be found in semi-deserts, steppes, mountain steppes and arid sparse forests. These areas are mostly affected by man-made factors, are very congested and are pastures and grasslands. Given that the human impact on nature has intensified in recent decades, which ultimately leads to the extinction of biodiversity, the earliest possible inventory of the regional flora and the study of their ecological, biological, geographical and other features play an important role in environmental awareness at the current stage. We have recorded about seventy dozen species of xerophilic vegetation in Artsakh. The article presents the type of xerophilic vegetation and the distribution areas.*

**Keywords:** xerophilic plants, semi-desert, steppe, friganoid vegetation, sparse forests, xeromorphic composition, *Artemisia*, *Stipa*, *Juniperus*

Կենսաբազմազանության պահպանությունը և ուսցիոնալ օգտագործման ապահովումը դարձել են համաշխարհային առաջնահերթ հիմնախնդիր: Բնական բուսական համակեցությունների պահպանման, բարելավման և առավել արդյունավետ օգտագործման միջոցառումների մշակման համար խիստ անհրաժեշտ է ֆլորայի և բուսականության խորն ու բազմակողմանի ուսումնասիրությունը: Չնայած Արցախը հին բնակավայրերից մեկն է և ունի հարուստ բուսականություն, մինչ այժմ ֆլորայի և բուսականության նպատակային ուսումնասիրություններ համարյա չեն իրականացվել: Իսկ բուսականության մասին գրական տեղեկությունները թերի են և ոչ ամբողջական:

Քսերոֆիլ բույսերը բուսական օրգանիզմների հատուկ խումբ են, որոնք ընդունակ են ապրելու ծայրահեղ ցածր խոնավության պայմաններում և չեն կարողանում տանել բարձր խոնավությունը: Սրանք ընդունակ են տանելու օդի բարձր չորությունը՝ զուգակցելով բարձր ջերմության հետ: Արցախի տարածքում քսերոֆիլ բուսականության համալիրը հանդիսանում է միջանկյալ զոնա կիսանապատների և անտառի միջև:

Մեր ժամանակի բնապահպանական խնդիրների շարքում կենսաբանական բազմազանության ուսումնասիրությունը և դրա պահպանման ու վերականգնման պայմանները բացարձակ կարևորություն ունեն, քանի որ մեծածավալ մարդածին ազդեցությունները ուղղակիորեն



կամ անուղղակիորեն ազդում են բուսականության, կենդանական աշխարհի և շրջակա միջավայրի վրա: Վերջին մի քանի տասնամյակներում բնության վրա մարդածին ազդեցությունը ուժեղանում է, ինչը, ի վերջո, հանգեցնում է կենսաբանական բազմազանության ոչնչացմանը: Առավել կերպով մարդածին գործոնի ազդեցության տակ են գտնվում քսերոֆիլ բույսերը, որոնք տարածված են հիմնականում կիսանապատային և տափաստանային գոտում: Այդ տարածքները խիստ ծանրաբեռնված են, հանդիսանում են արոտավայրեր և խոտհարքներ: Ինտենսիվ մարդածին սթրեսի ազդեցության տակ տարածքի բնածին բույսերը ենթարկվել են դեգրադացիայի, ձևափոխվել է դրանց կառուցվածքը և ֆիտոցենոզ են մուտք գործել անսովոր տեսակներ: Դա, իր հերթին, պատճառ դարձավ, որ շատ էկոլոգիապես մասնագիտացված տեսակներ կորստի ենթարկվեն, և իրենց տեղը համարվեն նորերը՝ էքսպլերենտները: Վերջիններս ներառում են այնպիսի տեսակներ, որոնց առանձնահատկությունները լրիվ չեն համապատասխանում ֆիտոցենոզի մասնագիտացված տեսակների հետ:

**Աշխատանքի նպատակն է** ուսումնասիրել Արցախի տարածքում քսերոֆիլ բուսականության տարածվածությունը, առաջարկել բնական էկոհամակարգերի պահպանման և արդյունավետ օգտագործման ուղղությամբ իրականացվող միջոցառումներ:

Այդ նպատակով մեր առջև դրվել են **հետևյալ խնդիրները**.

- բացահայտել Արցախում տարածված քսերոֆիլ բուսականության տեսակային կազմը.

- կատարել հետազոտվող տարածքի ֆլորայի բազմակողմանի վերլուծություն.

- բացահայտել հետազոտվող տարածքի ֆլորայի հազվագյուտ և վտանգված տեսակների տարածվածությունը, մշակել և առաջարկել այդ տեսակների պահպանման վերաբերյալ միջոցառումների համակարգ:

Ուսումնասիրությունները կատարվել են երթուղային, գիտական գույքագրման, որոշիչներով որոշման, լուսանկարման մեթոդներով:

**Ուսումնասիրությունների արդյունքում** պարզվել է, որ Արցախի քսերոֆիլ բույսերը տարածված են *կիսաանապատային, տափաստանային, ստորին և միջին լեռնային, ստորին անտառային* գոտիներում: Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում է քսերոֆիլ բույսերի տեսակային կազմը (4, 7), կենսաձևը, տարածման գոտին (աղյուսակ):

Աղյուսակ

Քսերոֆիլ բուսականության աշխարհագրական տարածվածությունն Արցախում

| Բուսակա-<br>նություն | Տեսակների անվանումը                         |                                   |                                      | Կենսաձևը                     |
|----------------------|---------------------------------------------|-----------------------------------|--------------------------------------|------------------------------|
|                      | Լատիներեն                                   | հայերեն                           | Ռուսերեն                             |                              |
| Կիսանա-<br>պատային   | Alhagi<br>pseudoalhagi<br>M.Bieb.           | Ուղտափուշ<br>սովորական            | Верблюжья<br>колючка<br>обыкновенная | Խոտաբուսային<br>/թփային/     |
|                      | Artemisia fragrans<br>Willd                 | Օշինդր<br>բուրավետ                | Полынь<br>душистая                   | Խոտաբուսային<br>/կիսաթփային/ |
|                      | Astragalus<br>Stevenianus DC.               | Գազ Ստեվենի                       | Астрагал<br>Стевена                  | Խոտաբուսային<br>/կիսաթփային/ |
|                      | Capparis<br>spinosa                         | Կապար փշավոր                      | Каперсы<br>колючие                   | Խոտաբուսային<br>/կիսաթփային/ |
|                      | Ecballium<br>elaterium A. Rich              | Վարունգ<br>կատաղի/<br>Իշավարունգ/ | Бешеный<br>огурец<br>обыкновенный    | Խոտաբուսային                 |
|                      | Euphorbia<br>marschalliana                  | Իշակաթնուկ<br>Մարշալի             | Молочай<br>Маршалла                  | Խոտաբուսային<br>/թփանման/    |
|                      | Kochia<br>prostrata                         | Ավլարույս<br>գետնատարած           | Кохия<br>простертая                  | Խոտաբուսային                 |
|                      | Peganum<br>harmala L.                       | Սպանդ<br>սովորական                | Гармала<br>обыкновенная              | Խոտաբուսային<br>/կիսաթփային/ |
|                      | Verbascum L.                                | Խոնդատ                            | Коровяк,<br>вербаскум                |                              |
|                      |                                             |                                   |                                      |                              |
|                      | Acantholimon<br>Boiss.                      | Ոգնաթուփ,<br>փշաբարձ              | Акантолимон,<br>ежик                 | Խոտաբուսային<br>/թփուտային/  |
|                      | Amygdalus<br>fenzliana (Fritsch)<br>Lipsky. | Նշենի Ֆենցլի                      | Миндаль<br>Фенцля                    | Ծառաթփային                   |
|                      | Astragalus L.                               |                                   | Астрагал                             | Խոտաբուսային<br>/կիսաթփային/ |

|           |                                                       |                                        |                                                          |                                          |
|-----------|-------------------------------------------------------|----------------------------------------|----------------------------------------------------------|------------------------------------------|
| Ֆրիզանդիդ | Bellevalia fominii<br>Woronow                         | Գազ, հոսի<br>Բելևալիա/ալյազ<br>Ֆոմինի/ | Бельвалия<br>Фомина<br>Гусиный<br>лук<br>тонколиственный | Խոտաբուսային<br>Խոտաբուսային             |
|           | Gagea tenuifolia<br>(Boiss.) Fomin                    | Սագասխուկ<br>/Սագասխոռ<br>նրբատերև/    | Качим,<br>гипсолюбка                                     | Խոտաբուսային<br>/կիսաթփային/             |
|           | Gypsophila L.                                         | Յմախ,<br>սապնարմատ                     | Ирис/касатик<br>черепитчатый                             | Խոտաբուսային                             |
|           | Iris imbricata<br>Lindl.                              | Հիրիկ/փնջածաղ<br>իկ կղմինդրածև/        | Юнона<br>кавказская                                      | Խոտաբուսային                             |
|           | Juno caucasica<br>(Hoffm.) Tratt.<br>(Iris caucasica) | Հիրիկ<br>կովկասյան                     | Гадючийлук/<br>мышинный<br>гиацинт<br>тонкоцветковый     | Խոտաբուսային<br>Խոտաբուսային<br>/թփային/ |
|           | Muscari<br>tenuiflorum<br>Tausch                      | Պապլոռ<br>նրբածաղիկ                    | Эспарцет                                                 | Խոտաբուսային                             |
|           | Onobrychis Mill.                                      | Կորնգան,<br>իդիսար                     | Птицемлечник<br>Гуссона<br>тонколиственный               | Թփային<br>/ծառանման/                     |
|           | Ornithogalum<br>tenuifolium Guss.                     | Աստղաշուշան<br>Գուստնի,<br>նրբատերև    | Держи-дерево,<br>Христовы тернии                         | Ծառային                                  |
|           | Paliurus<br>spina-christi Mill.                       | Գրուշա<br>иволистная                   | Груша                                                    | Թփային<br>/ծառանման/                     |
|           | Pyrus salicifolia<br>Pali.                            | Զաքի փշոտ                              | Крушина,<br>жостер палласа                               | Խոտաբուսային<br>/կիսաթփային/             |
|           | Rhamnus pallasii<br>Fisch. et C.A. Mey.               | Տանձենի<br>ուռատերև                    | Шалфей<br>змееголовников<br>ая                           | Խոտաբուսային                             |
|           | Salvia<br>dracocephaloides<br>Boiss.                  | Դժնիկ<br>պալլասի                       | Пролеска<br>сибирская                                    | Խոտաբուսային<br>/կիսաթփային/             |
|           | Scilla sibirica<br>Haw.                               | Եղեսպակ<br>վիշապազուխ                  |                                                          | Խոտաբուսային                             |
|           | Stachys                                               |                                        |                                                          |                                          |

|                   |                                                 |                                                |                                                       |                              |
|-------------------|-------------------------------------------------|------------------------------------------------|-------------------------------------------------------|------------------------------|
|                   | inflata Benth.                                  | Մկնասոխ<br>սիբիրյան                            | Чистец вздутый                                        | /կիսաթփային/<br>Խոտաբուսային |
|                   | Thymus<br>kotschyanus                           | Աբեղախոտ<br>փքված                              | Тимьян Кочи                                           |                              |
|                   | Tulipa<br>biebersteiniana<br>Schult. et Schult. | Ուրց<br>Կոչիի<br><br>Վարդակակաչ<br>Բիբերշտեյնի | Тюльпан<br>Биберштейна                                |                              |
| Տափաստ-<br>անային | Bromus squarrosus<br>L.                         | Ցորնուկ/ցորենի<br>խոտ ցցամազ/                  | Костер<br>растопыренный                               | Խոտաբուսային                 |
|                   | Dactylis glomerata<br>L.                        | Ոգնախոտ<br>հավաքված                            | Ежа Сборная                                           | Խոտաբուսային                 |
|                   | Filipendula vulgaris<br>M.                      | Փրփրուկ/Գինար<br>Բ<br>Սովորական/               | Таволга<br>обыкновенная<br>/Лабазник<br>обыкновенный/ | Խոտաբուսային                 |
|                   | Melica taurica K.<br>Koch                       | Մարգարտախոտ<br>դրիմյան                         | Перловник<br>крымский                                 | Խոտաբուսային                 |
|                   | Melica<br>transsilvanica Schur                  | Մարգարտախոտ<br>տրանսսիլվանյա<br>ն              | Перловник<br>трансильванский                          | Խոտաբուսային                 |
|                   | Phleum pratense L.                              | Սիզախոտ<br>մարգագետնային<br>/ Տիմոֆեենի խոտ    | Тимофеевка<br>луговая/<br>Тимофеева трава             | Խոտաբուսային<br>/Թփանման/    |
|                   | Stipa arabica Trin.<br>& Rupr.                  | Փետրախոտ<br>արաբական                           | Ковыль арабский                                       | Խոտաբուսային                 |
|                   | Stipa<br>capillata L.                           | Փետրախոտ<br>մազանման                           | Ковыль -<br>волосатик<br>/волосовидный/               | Խոտաբուսային                 |
|                   | Stipa lessingiana<br>Trin. et Rupr.             | Փետրախոտ/<br>Սմբուլ Լեսսինգի                   | Ковыль Лессинга                                       | Խոտաբուսային                 |
|                   | Vulpia hirtiglumis                              | Վուլպիա<br>մազաթեփուկ                          | Вульпия<br>волосисто-<br>чешуйная                     | Խոտաբուսային                 |

|                                    | Boiss. & Hausskn.                           |                                          |                              |                      |
|------------------------------------|---------------------------------------------|------------------------------------------|------------------------------|----------------------|
| Քսերոֆիլ<br>նոսր<br>Անտառա-<br>յին | Amygdalus<br>fenzliana<br>(Fritsch) Lipsky. | Նշենի<br>Ֆենցլի                          | Миндаль<br>Фенцля            | Թփային<br>/ծառանման/ |
|                                    | Bothriochloa                                | Կծմախոտ/<br>Միրուսաբույս                 | Бородач                      | Խոտաբուսային         |
|                                    | Celitis L.                                  | Փռշնի                                    | Каркас                       | Ծառային              |
|                                    | Cotinus<br>cogggyria Scop.                  | Դրախտածառ<br>կաշվենման                   | Скумпия<br>кожевенная        | Թփային<br>/ծառանման/ |
|                                    | Cotoneaster L.                              | Ցրպտկի/չմենի                             | Кизильник                    | Ծառաթփային           |
|                                    | Jasminum Fruticans<br>L.                    | Հասմիկ թփային                            | Жасмин<br>кустарниковый      | Թփային               |
|                                    | Juniperus<br>foetidissima Willd.            | Գիհի<br>գարշահոտ/<br>ցրտենի              | Можжевельник<br>вонючий      | Ծառային              |
|                                    | Juniperus<br>Oxycedrus L.                   | Գիհի փշոտ                                | Можжевельник<br>многоплодный | Ծառային              |
|                                    | Juniperus<br>polycarpus<br>C. Koch.         | Գիհի (արևելյան)<br>բազմապտուղ/<br>արտուճ | Жимолость                    | Թփային               |
|                                    | Lonicera L.                                 | Ցախակեռաս                                | Палиурус                     | Ծառաթփային           |
|                                    | Paliurus Tourn. ex<br>Mill.                 | Ցաքի/<br>ժանտափուշ                       | Фисташка                     | Ծառաթփային           |
|                                    | Pistacia L.                                 | Պիստակենի/<br>խնկենի                     | Дуб Грузинский               | Ծառային              |
|                                    | Quercus Iberica<br>Stev.                    | Կաղնի<br>վրացական                        | Спирея                       | Թփային               |
|                                    | Spiraea L.                                  | Ասպիրակ                                  |                              |                      |

Արցախի քսերոֆիլ բույսերը տարածված են *կիսաանապատային* գոտում՝ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Քաշաթաղի, Շահումյանի շրջաններում մինչև 350–400 մ բարձրությունները: Այս գոտում

կարելի է հանդիպել հետևյալ քսերոֆիլ բույսերին՝ օշինդր բուրավետ /*Artemisia fragrans* Willd./ և նրա ուղեկիցները՝ իշակաթնուկ մարշալի /*Euphorbia marschalliana*/, խոնդատ /*Verbascum* L./, գազ ստեննի /*Astragalus stevenianus*/, ավլարույս գետնատարած /*Kochia prostrata*/ և այլն: Որոշ տարածքներում (Մարտունի) հանդիպում է նաև կապար փշավոր /*Capparis spinosa* L./: Այդ գոտու քսերոֆիլ բույսերից է նաև կատաղի վարունգ, իշավարունգ /*Ecballium elaterium* A. Rich./, սպանդ սովորական /*Peganum harmala* L. /, ուղտափուշ սովորական /*Alhagi pseudoalhagi* (Bieb.) Desv./ (նկար 1):



Օշինդր բուրավետ




Խոնդատ սովորական



Գազ ստեննի



Կապար փշավոր



Կատաղի վարունգ սովորական



Ուղտափուշ սովորական

#### ՆԿ. 1 Արցախի կիսաանապատային գոտում տարածված քսերոֆիլ բուսատեսակները

Քսերոֆիլ բուսականությանն է պատկանում լեռնաչորասեր (ֆրիգանոֆիլ) բուսականությունը: Լինելով լեռնային երկիր՝ Արցախի տարածքում իր ուրույն տեղն ունի լեռնաչորասեր (ֆրիգանոֆիլ) բուսականությունը, որը տարածված է կիսաանապատային գոտու վերին մասում: Այն առավել փարթամ է դեպի Իրանի կողմը չոր կլիմա ունեցող լեռնային շրջաններում: Հարմարվելով չորային պայմաններին՝ լեռնաչորասեր բույսերը ձեռք են բերել մի շարք առանձնահատկություններ. ունեն հզոր արմատային համակարգ, որը թափանցում է հողի խորը շերտերը՝ յուրացնելով խոնավություն, աճում են նույնիսկ շարժուն սուբստրատում, խիստ գառիթափ լանջերում (5):

Արցախում լեռնաչորասեր բույսերը տարածված են ստորին և միջին լեռնային գոտիներում, որտեղ զբաղեցնում են շատ քիչ տարածություններ, հաճախակի զարգանալով խախտված աճելավայրերում: Գերակշռող են



օշինդր բուրավետ */Artemisia fragrans/* և հիմնականում խեժոտ */Hymenocrater bituminosus/* տեսակները, իսկ որպես կոեդիֆիկատոր սովորաբար հանդես են գալիս մեղրածուծ սովորական */Marrubium vulgare/*, մեղրածուծ կատվադադատերն */M. Catariifolium/*, կատվադադ Մուսինի */Nepeta mussinii/*, մայրամախոտ */Teucrium polium/*, ուրց Կոչիի */Thymus kotschyanus/* տեսակները (5):

Ֆրիգանոիդ բուսականությունը բաժանվում են 3 հիմնական ենթատիպերի՝ բուն ֆրիգանա, գազուտներ և տոմիլյարներ (1): Արցախի տարածքում բուն ֆրիգանոիդ բուսականության տարրերից տարածված են՝ Ցաքի (ժանատափուշ) փշոտ */Paliurus spina-christi Mill./*, Դժնիկ (բեկտենի) պալլասի */Rhamnus pallasii Fisch. et C.A.Mey./*, Տանձենի ուռատերն */Pyrus salicifolia Pall./*, Նշենի ֆենցլի */Amygdalus fenzliana (Fritsch) Lipsky./*, Բելևալիա (ալյազ) ֆոմինի */Bellevalia fominii Woronow/*, Սկնասոխ սիբիրյան */Scilla sibirica Haw./*, Աստղաշուշան (խնջլոզ) Գուսսոնի նրբատերն */Ornithogalum tenuifolium Guss/*, Աստղաշուշան լեռնային */O. montanum Cirillo/*, Սագասոխուկ (սագասխոտ) նրբատերն */Gagea tenuifolia (Boiss.) Fomin/*, Վարդակակաչ բիբերշտեյնի */Tulipa biebersteiniana Schult. et Schult./*, Հիրիկ (փնջածաղիկ) կոմինդրաձև */Iris imbricata Lindl./*, Հիրիկ նեղգծային */I. lineolata (Trautv.) Grossh./*, Հիրիկ կովկասյան */Juno caucasica (Hoffm.) Klatt./*, Պապլոր (վարդապետիկ) նրբածաղիկ */Muscari tenuiflorum Tausch/* (նկար 2)։ Այս բույսերի մեծ մասը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում (3):



Մեղրածուծ սովորական Կատվադադ Մուսինի

Լերդախոտ ալեհեր



Դժնիկ պալլասի

Սկնասոխ սիբիրյան

Սագասոխուկ նրբատերն

ՆԿ. 2 Արցախում տարածված բուն ֆրիգանոիդ ենթատիպի բուսականություն

Ֆրիգանդիդ բուսականության <<տոմիլյարների>> ենթատիպի խմբակցությունները կազմված են տարբեր տեսակի խուլեդինջագգիներին պատկանող բույսերից, ինչպես նաև աստղաձև կազգիների ընտանիքին պատկանող չորասեր բույսերից: ԼՂՀ հարավային մասում տոմիլյար տեսակներից են՝ Ուրց Կոչիի */Thymus kotchyanus/*, Եղեսպակ վիշապագլուխ */Salvia dracocephaloides/*, Աբեղախոտ փքված */Stachys inflata/* (նկար 3):



Ուրց Կոչիի



Եղեսպակ վիշապագլուխ



Աբեղախոտ փքված

**ՆԿ. 3 Արցախում տարածված <<տոմիլյարների>> ենթատիպի ֆրիգանդիդ բուսականություն**

Ֆրիգանդիդ բուսականության ենթատիպ է գազուտները կամ տրագականտաթփերը, որոնք փշոտ գազերի բուսատներ են, աճում են հողից զրեթե զուրկ, քարքարոտ լանջերին, տրագականտային տափաստանների ստորին սահմանի մոտ: Այստեղ գերակշռում են բարձիկանման բույսերը: Տարածված ցեղերից են՝ Ցմախ (սապնարմատ) */Gypsophila L./*, Գազ (հոսի) */Astragalus L./*, Կորնգան (իդիսար) */Onobrychis Mill./*, Ոզնաթուփ (փշաբարձ) */Acantholimon Boiss./* և այլ ցեղերի ներկայացուցիչներ (նկար 4):



Ոզնաթուփ



Կորնգան (իդիսար)



Ցմախ (սապնարմատ)

**ՆԿ. 4 Արցախում տարածված գազուտների կամ տրագականտաթփերի ենթատիպի ֆրիգանդիդ բուսականություն**



Արցախի տափաստանային գոտին ընդարձակ տարածություններ է զբաղում Քաշաթաղի, Հադրութի, Մարտունու, Ասկերանի և Մարտակերտի շրջանների հարավային մասերում: *Տափաստանային բուսականությունը* կազմված է քսերոֆիլ բնույթ ունեցող խոտային բուսատեսակներից, որոնցից են՝ Փետրախոտ (սմբուլ) *Լեսսինգի /Stipa lessingiana Trin. et Rupr./*, Փետրախոտ արաբական */S. arabica Trin. & Rupr./*, Փետրախոտ մազանման */S. capillata L./*, Փրփրուկ (զինարբ) սովորական */Filipendula vulgaris M./*, Ցորնուկ (ցորենի խոտ) ցցամազ */Bromus squarrosus L./*, Վուլպիա մազաթեփուկ */Vulpia hirtiglumis Boiss. & Hausskn./*, Մարգարտախոտ դրիմյան */Melica taurica K. Koch/*, Մարգարտախոտ տրանսսիլվանյան */M. transsilvanica Schur/*, Սիզախոտ մարգագետնային, Տիմոֆեևի խոտ */Phleum pratense L./*, Ոզնախոտ հավաքված */Dactylis glomerata L./* և այլն(2)(նկար 5):



Փետրախոտ Լեսսինգի



Փրփրուկ սովորական



Ցորնուկ ցցամազ



Մարգարտախոտ դրիմյան



Սիզախոտ մարգագետնային



Ոզնախոտ հավաքված

**ՆԿ. 5 Արցախում տարածված տափաստանային քսերոֆիլ բուսականություն**

Չորասեր (քսերոֆիլ) նոսր անտառները միջանկյալ տեղ են զբաղում քսերոֆիլ խոտային և անտառային բուսականության միջև: Այս բուսականությունը կազմված է ցածրահասակ ծառերից և թփերից, իսկ ստորին շարահարկում տարածված են չորասեր խոտաբույսեր: Տարբերում են չորասեր նոսրանտառային 2 ենթատիպ՝ *սաղարթավոր կամ <<շիբլյակ>>*, որը կազմված է լայնատերև թփերից ու մանր ծառերից և *գլիհու նոսր անտառ*՝ կազմված ասեղնատերև թփածառատեսակներից: Շիբլյակը տարածված է Արցախի հյուսիսային և ծայրամասային հարավային շրջաններում: Լինում է խառը շիբլյակ, որը բնորոշ է հարավային չոր, խիստ լվացված, սակավագոր, քարքարոտ

լանջերին: Այն կազմված է ցածրահասակ, նոսր դասավորված թփերից՝ ասպիրակից (թագուհի մարգագ) */Spiraea L./*, ցրպտկուց (չմենի) */Cotoneaster L./*, հասմիկ թփայինից */Jasminum fruticans L./*, ցաքիից (Ժանտափուշ) */Paliurus Tourn. ex Mill./*, ցախակեռասից */Lonicera L./*: Հատուկ են հանդիպում են ծառատեսակներից՝ փոշնի */Celitis L./*, կաղնի վրացական */Quercus iberica Stev./*, նշենի Ֆենցլի */Amygdalus fenzliana (Fritsch) Lipsky/*, պիստակենի (խնկենի) */Pistacia L./*, դրախտածառ կաշվենման/սովորական */Cotinus coggygria Scop./*: Խոտածածկույթը կազմված է տափաստանային և ֆրիգանոիդ բուսականությունից:

Սաղարթավոր նոսրանտառի երկրորդ ենթատիպը՝ ցաքու շիբլյակը խառը շիբլյակի համեմատ ունի լայն տարածում: Աճում է նախալեռնային գոտու զառիկող լանջերի շագանակագույն հողերին: Գերիշխող բուսատեսակ է ցաքին */Paliurus/*, իսկ խոտածածկույթում՝ կծմախոտը (միբուսաբույս) */Bothriochloa/*: Տիպիկ շիբլյակը տարածված է 700-1000մ բարձրության վրա(6): Էկոլոգիապես շիբլյակը կապված է գիհու նոսրանտառների հետ: Գերիշխող է գիհի զարշահոտը կամ ցրտենին */Juniperus foetidissima Willd./*, ինչպես նաև հանդիպում են արևելյան գիհի բազմապտուղը կամ արտուճը */J. polycarpus C. Koch./* և գիհի փշոտը */Juniperus oxycedrus/* (նկար 6): Գիհուն ուղեկցում է ցաքին */Paliurus/*, խնկենին */Pistacia L./*, դրախտածառը */Cotinus/*, փոշնին */Celitis L./* և այլ քսերոֆիլներ (5): Խոտածածկույթում տարածված է կծմախոտը */Bothriochloa/*: Արցախում հանդիպող գիհիները /զարշահոտ, ցածրաճ, երկարաթև և պտղակոթավոր/ երկարակյաց և դանդաղաճ, դիմացկուն բնափայտով ծառաթփատեսակներ են, որոնք հարմարվել են չոր, ցամաքային կլիմային աղքատ, քարքարոտ կմախքային հողերին:



Ասպիրակ աղեղնաեզր



Ճախակեռաս կովկասյան



Հասմիկ թփային



Փռնի կովկասյան



Յաքի (ժանատափուշ) փշոտ



Գիհի փշոտ

#### **ՆԿ. 6 Արցախում տարածված չորասեր (քսերոֆիլ) նոսր անտառային բուսականություն**

Այս իմաստով շատ էական է գիհու նոսր անտառի հակաեռոգիտն նշանակությունը: Պակաս կարևոր չէ կենսոլորտը մանրէագերծելու գիհու նոսրանտառի նշանակությունը: Քսերոֆիլ բույսերի տարածվածության վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու տաքսոնների թվային հարաբերակցությունը, տարածված բույսերին բնորոշ մի շարք այլ քանակական և որակական ցուցանիշներ:

Մեր կողմից գույքագրված քսերոֆիլ բուսական աշխարհի համակարգված ցուցակը կազմում է մոտ յոթ տասնյակ անոթավոր բույսեր, որոնք պատկանում են 45 ցեղերի և 22 ընտանիքի, տարածված են տարբեր աշխարհագրական գոտիներում և ձեռք են բերել չորադիմացկունության տարբեր հարմարանքներ: Առավել մեծ թվաքանակ են կազմում խուլեղինջագգիների, հացագգիների, ծնեբեկագգիների, վարդագգիների ընտանիքներին պատկանող բուսատեսակները:

Այսպիսով՝ քսերոֆիլ բույսերի տարածվածության վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու տաքսոնների թվային հարաբերակցությունը, տարածված բույսերին բնորոշ մի շարք այլ քանակական և որակական ցուցանիշներ: Քսերոֆիլ բուսականության ճնշող մասը համարվում է տարածքի ֆլորայի հազվագյուտ և վտանգված տեսակներ: Ուստի առաջարկում ենք համապատասխան օրգանների կողմից մշակել այդ տեսակների պահպանման վերաբերյալ միջոցառումների համակարգ /արգելանոց, արգելավայր, որոշ տարածքներում արածեցման արգելում և այլն/:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Ա. Գ., Բույսերի աշխարհագրություն, Երևան 2005 թ. 485 էջ:
2. Բալայան Կ. Վ. Արցախի ֆրիգանոիդ բուսականությունը և նրա պահպանության հիմնախնդիրները, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, պրակ 2, Ստեփանակերտ, 2019
3. ՀՀ բույսերի Կարմիր գիրք (բարձրակարգ բույսեր և սնկեր), Երևան, 2010թ. 415 էջ:
4. ՂազարյանՌ. Ս. Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան, Երևան, 1981, 180 էջ:
5. Гроссгейм А. А. Флора Кавказа. Баку, 1940, 290 стр.
6. Тахтаджян А. Л. Жизнь растений, том 5 / 2/, т. 6, Москва, 1978, 1982, 490 стр.
7. Новиков В. С., Губанов И. А. Атлас – определитель дикорастущих растений, М. 2008, 415 стр.

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկցիայի անդամ, կ.գ.դ. Հ. Գ.Գալստյանը:

ՀՏԴ 547.1

Քիմիա

Վոլոդյա ՄԻՐԶՈՅԱՆ

ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, ք.գ.թ.

E-mail: [volodyamirzoyan@mail.ru](mailto:volodyamirzoyan@mail.ru)

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԻՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Աշխատանքում դիտարկվում են օրգանական նյութերի սինթեզի մի շարք փոխարկումներ և նրանց իրականացման հնարավոր եղանակները:

**Բանալի բառեր`** տեղակալում, նուկլիոֆիլ, էլեկտրոֆիլ, ռադիկալային, նիտրացում, ալկիլացում, հալոգենացում:

B. Мирзоян

### НЕКОТОРЫЕ ЗАДАЧИ, СВЯЗАННЫЕ С СИНТЕЗОМ ОРГАНИЧЕСКИХ СОЕДИНЕНИЙ

В работе рассмотрены решения некоторых превращений, связанных с синтезом органических соединений.

**Ключевые слова:** замещение, нуклеофильные, электрофильные, радикальные, нитрование, алкилирование, галогенирование.


V. Mirzoyan

### SOME TASKS RELATED TO THE SYNTHESIS OF ORGANIC COMPOUNDS

The paper considers the solutions of some transformations associated with the synthesis of organic compounds.

**Keywords:** substitution, nucleophilic, electrophilic, radical, nitration, alkylation, halogenation.

Օրինակ 1. Տրված է հետևյալ փոխարկումների սխեմաները



Որտեղ  $S_E$ ,  $S_R$  և  $S_N$  համապատասխանաբար էլեկտրոֆիլ, ռադիկալային և նուկլիոֆիլ տեղակալումներ են:


Որոշել  $A-H$ , նյութերի կառուցվածքային բանաձևերը, գրել ռեակցիաների հավասարումները, բացատրել նրանց ընդհանուր մեխանիզմները:

Լուծում: Խնդրի լուծման համար նպատակահարմար է սկսել վերջից: Փոխարկման վերջին փուլը համապատասխանում է  $RNO_2$  (նիտրո) միացության վերականգնմանը մինչև  $RNH_2$  (ամինի):


Այստեղից հետևում է, որ  $F$  և  $H$  կլինեն նիտրոբենզոլական թթվի երկու իզոմերներ  $C_6H_4(NO_2)COOH$ : Սրանք իրենց հերթին նուկլիոֆիլ տեղակալման ռեակցիայի մեխանիզմով կարելի էր ստանալ, կամ նիտրիլներից  $C_6H_4(NO_2)(CN)$ , կամ եռհալոգեն ածանցյալներից  $C_6H_4(NO_2)(CCl_3)$ :

Մյուս կողմից  $E$  և  $G$  նյութերը ստացվել են ռադիկալային տեղակալման մեխանիզմով, ուրեմն չեն կարող լինել նիտրիլներ, հետևաբար իրենցից ներկայացնում են իզոմերային նիտրոտոլուոլներ  $C_6H_4(NO_2)CH_3$ , որոնք ստացվել են տոլուոլից ( $B$ ) էլեկտրոֆիլ տեղակալման մեխանիզմով (նիտրացում): Հավանաբար վերջինս էլ ստացվել է բենզոլից ( $A$ ) էլեկտրոֆիլ տեղակալման մեխանիզմով՝  $R_{hal}$  կամ  $ROH$  օգտագործելով:


Ընդհանրացնելով՝ փոխարկումների շղթան կարելի է ներկայացնել ըստ սխեմայի՝








Օրինակ 2. Տրված են հետևյալ փոխանակումների սխեմաները




Որոշել A-E նյութերի կառուցվածքային բանաձևերը և 1-6 ազդանյութերը:

Լուծում:






$\text{C}_6\text{H}_6 \rightarrow \text{C}_6\text{H}_5\text{COOH}$  փոխարկումների շղթան A և B միջանկյալ նյութերի առաջացմամբ համապատասխանում է արոմատիկ օդակում տեղակալիչի մուտքի և հետագա ռադիկալային մեխանիզմով տեղակալման ընթացքին՝ ըստ սխեմայի




Երկրորդ շղթան  $\text{C}_6\text{H}_6 \rightarrow \text{C}_6\text{H}_5\text{COOH}$  C,D,E միջանկյալ նյութերի առաջացմամբ ընդգրկում է մագնիզիում օրգանական միացության առաջացման, որը կարող է ստացվել արոմատիկ շարքի հալոգեն ածանցյալից (C)՝ ըստ սխեմայի



է համապատասխանում ռեալ գործող պրոցեսներին:




Լուծում: ա) և բ) նյութերի դեպքում, շնորհիվ ածխածնի և քլորի էլեկտրաբացասականության արժեքի, ածխածնի ատոմը ձեռք է բերում մասնակի դրական լիցք, հետևաբար –  $\text{C}^{+\delta} \rightarrow \text{Cl}^{-\delta}$  ջրի բևեռային մոլեկուլը պետք է հարձակվի ածխածնի ատոմին բացասական բևեռով կամ թթվածնի ատոմով




այսպիսով, ռեակցիան ռեալ ընթանում է ա) սխեմայի համաձայն և ոչ թե բ)-ի:


գ) և դ)-ի դեպքում C-Na կապը մոտենում է իոնական կապին, ընդ որում C-ը ձեռք է բերում համարյա լրիվ բացասական լիցք, հետևաբար ջրի բևեռային մոլեկուլը պետք է հարձակվի C-ի ատոմին դրական մասով



Հետևաբար ռեակցիան ընթանում է գ) սխեմայի համաձայն ե) – ի դեպքում կարբոնիլ խմբի C=O կապը բևեռացված է



Ռեակցիան HCN-ի հետ ընթանում է նուկլիոֆիլ միացման մեխանիզմով, հիմքի ներկայությամբ առաջացնելով CN





հետևաբար ե)-ն չի համապատասխանում ռեալ գոյություն ունեցող պրոցեսին:


Օրինակ 4. Տված են հետևյալ օրգանական միացությունները՝ բենզոլ, տոլուոլ, բրոմբենզոլ և նիտրոբենզոլ: Դասավորել դրանք ըստ ռեակցիոն ունակության մեծացման՝ նիտրացման ռեակցիայի դեպքում:

Լուծում: Նիտրացման ռեակցիան դասվում է էլեկտրոֆիլ տեղակալման ռեակցիայի շարքին: Այն հեշտանում է, երբ մոլեկուլում առկա են դոնոր խմբեր, որոնք մեծացնում են արոմատիկ օղակում էլեկտրոնային խտությունը:

Որպես էտալոն կարելի է վերցնել բենզոլի նիտրացման ռեակցիայի արագությունը:

Հազեցած  $\text{CH}_3$  խումբը հանդիսանում է դոնոր բենզոլային օղակի համար և հեշտացնում է տեղակալման ռեակցիան:  $\text{Br}$  – ի ատոմը բնութագրվում է մինուս  $-I$  ինդուկտիվ էֆեկտով և դժվարացնում է տեղակալման ռեակցիան: Նիտրո խումբը համարվում է էլեկտրոնակցեպտոր, որը փոքրացնում է էլեկտրոնային խտությունը արոմատիկ օխակում ռեակցիայի երկու փուլերով և դրանով իսկ դժվարացնում է երկրորդ տեղակալիչի մուտքը արոմատիկ օղակ էլեկտրոֆիլ տեղակալման մեխանիզմով:

Հետևաբար, ըստ տրված խնդրի պայմանի, միացությունները կարելի է դասավորել ըստ նիտրացման ռեակցիայի արագության՝



#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кванезский З., Шарманевич Т. и др. Польские химические олимпиады. Пер. с польск. М.: Мир, 1980.
2. Дайнеко В.И., Как научить школьников решать задачи по органической химии. М.: Высшая школа, 1987.
3. Чуранов С.С., Химические олимпиады в школе. М.: Просвещение, 1982.

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.թ. Ա. Ն. Աբրահամյանը:

ՀՏԴ 372.854 (004.9)

Քիմիա

**Աննա ՄՏԵՓԱՆՅԱՆ**

ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոնի դասախոս, ք.գ.թ.

e-mail: a.v.stepanyan@yandex.ru

**Կարինե ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ**

ԱրՊՀ, Կենսաբանության և քիմիայի ամբիոնի դասախոս

e-mail: musaelyan1968@mail.ru

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔԻՄԻԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման պրոցեսում օբյեկտիվ և միանգամայն բնական գործընթաց է, ավելին՝ դա արդեն ժամանակի պահանջ է: Այսօր դպրոցական կրթության հիմնական խնդիրներից են սովորողի նախապատրաստումը մեծ քանակությամբ տեղեկատվության արագ ընկալման և մշակման գործընթացին, ինչպես նաև ժամանակակից գործիքներով նրան զինումը:

Սույն աշխատանքով փորձում ենք ընդհանրացնել և համակարգել քիմիայի դասապրոցեսում կիրառման հնարավորություն ունեցող տեղեկատվական և հաղորդակցական մի քանի տեխնոլոգիաներ:

**Բանալի բառեր**՝ նոր մանկավարժական տեխնոլոգիաներ, ՏՀՏ (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ), վիրտուալ լաբորատորիա, ինտերակտիվ գրատախտակ, հեռավար ուսուցում:

### **А. СТЕПАНЯН, К. МАНГАСАРЯН ПРИМЕНЕНИЕ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ХИМИИ**

Применение информационно-коммуникационных технологий в учебном процессе является объективным и совершенно естественным процессом, более того, это уже требование сегодняшнего дня. Одной из основных задач школьного образования сегодня является подготовка учащегося к быстрому пониманию и обработке большого количества информации, а также оснащение его современными инструментами.

В данной статье мы попытались обобщить и скоординировать некоторые информационные и коммуникационные технологии, которые можно использовать на уроках химии.

**Ключевые слова:** новые педагогические технологии, ИКТ (информационные и коммуникационные технологии), виртуальная лаборатория, интерактивная доска, дистанционное обучение.

**A.STEPANYAN, K. MANGASARYAN**  
**THE USE OF INFORMATION AND COMMUNICATION**  
**TECHNOLOGIES IN THE PROCESS**  
**OF CHEMICAL TEACHING**

*The use of information and communication technologies in the process of teaching is an objective and completely natural process, moreover it is already a requirement of time.*

*Today one of the main tasks of school education is the preparation of the students for the process of understanding and developing a large amount of information as well as to arm it with modern tools.*

*With this work we try to generalize, coordinate some informational and communicational technologies that can be used in the chemistry lesson.*

**Keywords:** new pedagogical technologies, ICT (information and communication technologies), virtual laboratory, interactive whiteboard, distance learning.

Կրթության ոլորտի մարտահրավերները բազմազան են, դրանց լուծման ուղիները՝ նույնպես: Այդ խնդիրներից առանձնահատուկ ուշադրության է արժանի բնագիտական առարկաների՝ հատկապես քիմիայի նկատմամբ հետաքրքրության նվազումը: Վերջին տասնամյակներում փոխվել է հանրակրթական դպրոցում քիմիայի ուսուցման համակարգը. էականորեն մեծացել է դասավանդվող նյութի ծավալը, իսկ հատկացվող ժամաքանակը, հակառակը, կրճատվել է:

Վերը նշված փաստի առկայությունն արդիական է դարձնում նոր, մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման հարցը, որոնք մի կողմից՝ նպաստում են կայուն դրական մոտիվացմանը, մյուս կողմից՝ ապահովում են որակյալ քիմիական կրթություն, ձևավորում են հմտություններ և գործունեության ունիվերսալ եղանակներ:

Այս խնդրի լուծումը պետք է համակարգային լինի, իսկ կիրառվող գործիքակազմը՝ արդիական: Առաջին հերթին ուսումնական պրոցես պետք է ներմուծել SՆՏ՝ կրթական պրոցեսն ինտենսիվ դարձնելու և դասի ընթացքում անհատական պայմանների ստեղծման հնարավորություն ապահովելու համար: Սա, իհարկե, բավականին ծավալուն գործընթաց է, որը պետք է իրականացվի շատ արագ՝ գլոբալ պրոցեսներից ետ չմնալու համար:

Ներկայումս փոփոխվում են ժամանակակից կրթության նպատակները և խնդիրները, տեղի է ունենում շեղում՝ գիտելիքի յուրացման ջանքից դեպի կոմպետենտության ձևավորում, շեշտը դրվում է տրամաբանական-կողմնորոշված ուսուցման վրա: Բացի այդ, փոխվել են նաև սովորողների պահանջները. աշակերտներին դժվար է հետաքրքրել միայն ֆունդամենտալ գիտելիքներով, տալ օրենքներ, օրինաչափություններ,

տեսություններ՝ առանց կիրառական դաշտ մտնելու և կյանքի ամենատարբեր ոլորտների հետ տեսական գիտելիքը կապելու: Այնուամենայնիվ դասը եղել և մնում է ուսումնական պրոցեսի գլխավոր բաղադրիչը: Աշակերտի պատրաստվածության որակը որոշվում է կրթության բովանդակությամբ, դասի վարման տեխնոլոգիաներով, նրա կազմակերպմամբ և պրակտիկ ուղղվածությամբ, տիրող բարոյահոգեբանական մթնոլորտով: Հետևաբար կրթության ոլորտում նոր մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումն այլևս անխուսափելի է:

Վերը դիտարկված խնդիրների լուծմանն է ուղղված ՏՀՏ կիրառումը, ինչը բավականին հեշտացնում է ուսուցչի կողմից դասի նախապատրաստման և վարման գործընթացը: Այն նաև թույլ է տալիս

- ձևավորել սովորողի անհատականությունը, նախապատրաստել նրան ինքնուրույն արդյունավետ գործունեության,
- իրագործել սոցիալական պահանջմունքները, որոնք պայմանավորված են ժամանակակից աշխարհի տեղեկատվականացմամբ,
- կրթադաստիարակչական պրոցեսի մոտիվացիա ձևավորել[1]:

Քիմիայի դասավանդման պրոցեսում, կախված ուսուցման նպատակներից, փուլից, տեղից և ժամանակից, կիրառվում են բովանդակությամբ և տեսակով տարբեր թվային ռեսուրսներ: Այսպես՝ էլեկտրոնային ուսուցման պրոցեսում նոր նյութի հաղորդման բովանդակային բաղադրիչն ապահովում են այն ռեսուրսները, որոնք ուղղված են նոր նյութի բացատրմանը, ուսումնական բովանդակության պարզաբանմանը (մուլտիմեդիա, դասընթացների տեսանյութեր, շնորհանդեսներ, արխիվային փաստաթղթեր, լուսանկարների հավաքածու, ձայնագրություններ, խնդիրների լուծման օրինակներ և վերլուծություններ):

Մոտիվացնող բաղադրիչն ապահովում են այն ռեսուրսները, որոնք սովորողների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություն են ձևավորում (մուլտիմեդիա, խաղային շնորհանդեսներ, անիմացիաներ, ինտերակտիվ առաջադրանքներ, ավտոմատացված հարցաթերթեր, խաղային թեստեր) [1]:

Այս բաղադրիչների լիարժեք կիրառման համար գոյություն ունեցող ՏՀՏ բազմազան են: Դրանցից առանձնահատուկ ուշադրության են արժանի ինտերակտիվ գրատախտակները, վիրտուալ լաբորատորիաները, քիմիական բանաձևերի, ռեակցիաների գրանցման և եռաչափ պատկերման ծրագրերը:

Բավականին լայն հնարավորություններ են ստեղծում հատկապես ինտերակտիվ գրատախտակները, որոնք թույլ են տալիս նախապես պատրաստել դասին անհրաժեշտ նյութերը, գրածը պահպանել որպես առանձին ֆայլ, ֆայլերն իրար կապել հղումների միջոցով, օբյեկտներն ազատորեն տեղափոխել, չափերը և մասշտաբը փոփոխել, ուսումնական նյութը պատկերավոր ներկայացնել, ինտերակտիվ

դասեր վարել՝ կիրառելով նկարներ և անիմացիաներ, ինչպես նաև անմիջապես օգտվել համացանցից: Բացի այդ՝ միշտ հնարավորություն կա վերադառնալու նախորդ դասին և կրկնելու կարևոր դրույթները [2]:

Ինտերակտիվ դասի նախապատրաստումը բավականին հեշտացվում է ChemOffice ծրագրային փաթեթի կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս գրանցելու քիմիական բանաձևերը և ռեակցիաները, պատկերացումներ կազմել մոլեկուլների տարածական կառուցվածքի մասին, ուսումնասիրել դրանց երկրաչափական պարամետրերը, ինչպես նաև մոլեկուլների տարբեր կոնֆորմացիաներ [3,4]:

ChemOffice փաթեթը ներառում է տարբեր մասնագիտացված հավելվածներ.

- CS ChemDraw- նախատեսված է կառուցվածքային բանաձևերի պատկերման և խմբագրման համար;
- CS Chem3D - նախատեսված է միացությունների տարածական կառուցվածքի պատկերման, քիմիական ռեակցիաների մոդելավորման և ֆիզիկա-քիմիական հաշվարկների համար;
- CS ChemFinder, CS Table Editor – նախատեսված են տվյալների հենքերի հետ աշխատելու համար [3]:

Նմանատիպ ֆունկցիոնալ հնարավորություններ են առաջարկում ChemWindow, ISIS/Draw և ChemSketch ծրագրերը, որոնցից յուրաքանչյուրն ունի կոնկրետ դաշտում աշխատելու հնարավորություն: Բայց դրանք բոլորն են լիովին բավարարում են դպրոցական ծրագրի պահանջներին [4]:

Ուշադրության են արժանի նաև վիրտուալ լաբորատորիաները: Այս ընդհանուր անվան տակ ներկայացվում են երկու տիպի լաբորատորիաներ՝ հեռավար և վիրտուալ (բառի նեղ իմաստով): Առաջինը լաբորատոր սարքավորում է հեռավար մուտքի հնարավորությամբ, երկրորդը՝ լաբորատոր փորձի մոդելավորման հնարավորություն ստեղծող ծրագիր:

Վիրտուալ լաբորատորիաներն ունեն մի շարք առավելություններ՝ համեմատած իրական լաբորատորիաների հետ: Նախ՝ դրանք

- թույլ են տալիս խնայել ռեսուրսներ, քանի որ թանկարժեք ռեակտիվներ և սարքավորումներ գնելու անհրաժեշտություն չկա,
- կարող են փոխարինել իրական լաբորատորիաներին, հատկապես դրանց բացակայության պարագայում,
- թույլ են տալիս մոդելավորել այնպիսի պրոցեսներ (պայթյուններ, հրդեհավտանգ պրոցեսներ, թունավոր նյութերի մասնակցությամբ ընթացող ռեակցիաներ, ռադիոակտիվ նյութերով և էրեխայի առողջության համար վտանգավոր այլ փորձեր), որոնք լաբորատոր պայմաններում ընթանալ չեն կարող,
- խնայում են ժամանակը, քանի որ վիրտուալ պրոցեսը ղեկավարում է համակարգիչը,
- ունեն հեռավար կրթության պրոցեսում ներդնելու հնարավորություն [5]:

Վիրտուալ էքսկուրսիաներն էականորեն ընդլայնում են երեխայի մտահորիզոնը և հեշտացնում են քիմիական տեխնոլոգիաների էության ընկալումը:

Ներկայացնենք մի քանի վիրտուալ լաբորատորիաների ծրագրային փաթեթներ և դրանց ֆունկցիոնալ հնարավորությունները.

- VirtualLab – վիրտուալ լաբորատոր աշխատանքների իրականացման հնարավորություն է ստեղծում տարբեր առարկաներից (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, էկոլոգիա),
- PhET- նախագիծը ներառում է բազմաթիվ վիրտուալ լաբորատորիաներ՝ տարբեր բնագավառներում աշխատելու համար (քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, Երկրի մասին գիտություններ, մաթեմատիկա),
- Wolfram Demonstrations Project – ժամանակակից գիտության և տեխնիկայի հայեցակարգերի վիզուալ պատկերման հարթակ, որը թույլ է տալիս ստեղծել օնլայն ինտերակտիվ լաբորատորիաների միասնական կատալոգ [6]:

Հեռավար լաբորատորիաներից են The Labshare Institute (LBI), MIT iCampus iLabs, lobster, e-LABORATORY PROJECT, iLough-lab և այլն [7]:

SZS-ից ուսումնական գործընթաց պետք է ներառել նաև համակարգչային թեստավորումը: Այս եղանակով գիտելիքների ստուգումը կարող է իրականացվել ոչ միայն ուսուցչի կողմից, այլ հենց սովորողը կարող է վերահսկել նյութի յուրացման աստիճանը:

Ուսումնական գործընթացի տարբեր բաղադրիչների նկատմամբ հետաքրքրության, ճանաչողական ակտիվության մեծացման համար կարելի է կիրառել խաղային տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են երեխայի գիտելիքների ամրապնդմանը:

Բավականին մեծ տարածում են ստանում առցանց աշխատող զանազան քիմիական հաշվիչները, որոնք խնայում են ժամանակը տարբեր հաշվարկներ կատարելիս, ներառում են քիմիական տարրերի ինտերակտիվ պարբերական համակարգեր, թույլ են տալիս հավասարեցնել քիմիական ռեակցիաները և այլն:

Օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ այսօր մասսայական կիրառություն ունեն հեռավար դասերը: Ստեղծված իրավիճակում դրանք, իհարկե, չեն կարող լիարժեք կրթություն ապահովել, որովհետև չեն ներառում ողջ գործիքակազմը: Այնուամենայնիվ հնարավորություն են ստեղծում լիովին փոփոխելու կրթության բովանդակությունը՝ ստեղծելով նոր հնարավորություններ: Հեռավար դասը ոչ միայն նոր նյութին հաղորդակից լինելու և սովորածը վերարտադրելու, այլև ինքնուրույն մտածելու, վերլուծելու, նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից օգտվելու պրոցես է: Այն նաև հնարավորություն է ստեղծում լուծելու գյուղական համայնքների դպրոցներում առկա խնդիրները՝ կապված մասնագետների պակասի հետ: Այս պրոցեսներին աջակերտները բավականին հեշտ են ինտեգրվում:

Այսպիսով՝ կրթական համակարգում նոր մանկավարժական տեխնոլոգիաների, մասնավորապես S2S ներդնումն անհրաժեշտություն է, հատկապես քիմիայի ուսուցման պրոցեսում: Դրանք դասապրոցեսն ինտենսիվ դարձնելու և դասի ընթացքում անհատական պայմանների ստեղծման հնարավորություն են ապահովում, սովորողներին զինում են նոր տեխնոլոգիաների հետ աշխատելու գործիքակազմով, ինչպես նաև մեծացնում են առարկայի նկատմամբ հետաքրքրությունը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Новые педагогические и информационные технологии в системе образования : учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Е.С.Полат, М. Ю. Бухаркина, М. В. Моисеева, А.Е.Петров ; под ред. Е.С.Полат. — 4-е изд., стер. — М. : Издательский центр «Академия», 2009. — 272 с.
2. Нечитайлова, Е. В. GO TO THE WHITE-BOARD, или Интерактивная доска на уроке химии / Е. В. Нечитайлова // Химия в школе. - 2009. - N 6. - С. 33-38 .
3. ChemDraw, CambridgeSoft Corporation, 875 Massachusetts Ave., Cambridge, MA 02139, USA. <http://www.cambridgesoft.com/>
4. Personal experience with four kinds of chemical structure drawing software: review on ChemDraw, ChemWindow, ISIS/Draw and ChemSketch // Zhenjiang Li, Honggui Wan, Yuhu Shi and Pingkai Ouyang - Journal of Chemical Information Comput. Sci. 2004, 44, 1886-1890
5. А.В. Трухин. «Об использовании виртуальных лабораторий в образовании» // Открытое и дистанционное образование. — 2002. — № 4 (8) .
6. <http://www.virtulab.net/>  
<https://phet.colorado.edu/>  
<http://demonstrations.wolfram.com/>
7. <http://www.labshare.edu.au>  
<http://icampus.mit.edu/projects/ilabs/>  
<http://www.ises.info/index.php/en>  
<http://www.ilough-lab.com/>

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.թ. Վ. Ս. Միրզոյանը:

ՀՏԴ 621

Ռադիոտեխնիկա

**Սամվել ԱՆՏՈՆՅԱՆ**

ՀԱՊՀ, Ռադիոտեխնիկայի և կապի համակարգերի ֆակուլտետ, ռադիոսարքավորումների ամբիոն, 4-րդ կուրսի բակալավրիատի ուսանող, էլ. հասցե՝ [samwellantonyan@gmail.com](mailto:samwellantonyan@gmail.com)

**Գրիգոր ԾԱՏՈՒՐՅԱՆ**

ՀԱՊՀ, Ռադիոտեխնիկա և կապի համակարգեր ֆակուլտետ, Ռադիոսարքավորումների ամբիոն, 4-րդ կուրսի բակալավրիատի ուսանող, էլ. հասցե՝ [grigor.tsaturyan99@gmail.com](mailto:grigor.tsaturyan99@gmail.com)

**Լիա ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՊՀ, տ.գ.թ., դոցենտ

**ՎԵԿՏՈՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ՃՇԳՐԻՏ  
ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ**

Ռադարային համակարգերի մոդելավորման և թեստավորման կարևոր խնդիրն է հաղորդիչների երկու մատույցների միջև ճառագայթող ազդանշանների փուլերի ենթաստիճանների կարգի համաժամանակացումը:

Իրականացվել է երկու NI PXI 5840 վեկտորային հաղորդիչ-ընդունիչների (vector signal transceiver) համաժամանակացման մոդելավորում՝ հետերոդինի և տակտային զենեքատրի հզորությունների բաժանման միջոցով: Մոդելավորումը կատարվել է LabVIEW ծրագրային միջավայրում՝ մշակված ծրագրի օգնությամբ: Բերված են մոդելավորման համար անհրաժեշտ պարամետրերի պատուհանը և հետազոտության արդյունքները:

**Բանալի բառեր՝** Հաղորդիչների համաժամանակացում, Tclk, հետերոդինի ճառագայթած հզորության կիսում, վեկտորային հաղորդիչ-ընդունիչ սարք:

**Л. Мовсисян, С. Антонян, Г. Цатурян**

**МЕТОД ТОЧНОЙ СИНХРОНИЗАЦИИ ВЕКТОРНЫХ  
ПЕРЕДАТЧИКОВ**

При моделировании и тестировании радарных систем важной задачи является синхронизация с точностью до долей градуса фаз сигналов излучаемых между двумя портами.

Осуществлено моделирование синхронизации двух NI PXI-5840 векторных приемо-передатчиков с использованием деления мощностей гетеродина и тактового генератора. С использованием разработанной программы осуществлено моделирование процесса синхронизации в программной среде LabVIEW. Предоставлены



необходимые для моделирования параметры и результаты исследования.

**Ключевые слова:** синхронизация передатчика, TCLK, гетеродинное распределение мощности, векторный передатчик-приемник.

**L. Movsisyan, S. Antonyan, G. Tsaturyan**

**PRECISE SYNCHRONIZATION METHOD BETWEEN MULTIPLE VECTOR SIGNAL GENERATORS**


*An important task of modeling and testing radar systems is to synchronize the order of the sub-degree of the radiated signals between the two ports of the transmitters.*

*The simulation of synchronization of two vector transceivers NI PXI 5840 with the separation of the power of the local oscillator and the clock generator was performed. The simulation was done in the LabVIEW software environment using the developed program.*

*Necessary parameters for modeling and research results are provided.*

**Keywords:** Transmitter synchronization, Tclk, heterodyne radiated power sharing, vector transmitter-receiver device.

**Ներածություն.** Երկու ազդանշանների համաժամանակացման հիմքում ընկած է «հիմնական-օժանդակ» (master-slave) սկզբունքը: Համաժամանակյա գեներացման համար հետերոդինի և տակտային գեներատորի ելքային հզորությունները բաժանվում են «հիմնական» և «օժանդակ» համարվող վեկտորային հաղորդիչ սարքերի միջև: Հաճախության փուլային ավտոմատ ենթալարման համակարգի (ՀՓԱԵՀ) շնորհիվ ընդհանուր տակտային գեներատորի ելքային հզորության բաժանումը հնարավորություն է ստեղծում բազմաթիվ ելքերով հաղորդիչների ազդանշանների համաժամանակացված հաղորդման և ընդունման համար:



SU - Տակտային Ազդանշան  
ԼՂԳ - Լարմամբ Դեկավարվող Գեներատոր

Նկ. 1 Հզորության բաժանումը ՀՓԱԵՀ-ների միջև

ՀՓԱԵՀ-ն սկսում է իր աշխատանքը  $f_{osc}$  հաճախությունից, որը չի փոփոխվում ժամանակի և ջերմաստիճանի փոփոխությունից: Փուլային դետեկտորը համեմատում է  $f_{osc}$  հաճախությամբ և բաժանիչից եկած ազդանշանների փուլերը և, կախված դրանց տարբերությունից, գեներացնում ազդանշաններ, որոնց միջանցիկությունը ուղիղ համեմատական է փուլային սխալանքի արժեքին: Այնուհետև անցնելով ցածր հաճախական գոտիով (ՑՀԶ)՝ օղակային գոտիով՝ շտկող ազդանշանը տրվում է լարմամբ դեկավարվող գեներատորին (ԼԴԳ): ԼԴԳ-ն  $K_{VCO}$  փոխանցման գործակցով լարում-հաճախության փոխակերպիչ է: ԼԴԳ-ի ելքային ազդանշանը անցնում է բաժանիչով՝ հենակային ազդանշանի  $f_{osc}$  հաճախությանը հետ համեմատվելու նպատակով: ԼԴԳ-ի հաճախությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$f_{VCO} = f_{osc} * N, \quad (1)$$


որտեղ  $N$ -ը բաժանիչի բաժանման գործակիցն է:

ՀՓԱԵՀ-ները մտցնում են անցանկալի աղմուկներ, որոնց բաղադրիչներից են նաև փուլային աղմուկները: Հաճախականային տիրույթում դրանք դիտարկվում են որպես սպեկտրային աղմկային հզորություն և գնահատվում են դԲկ/Հց-ով: Փուլային աղմուկների մակարդակի նվազեցմանը էապես նպաստում է բաժանիչների օգտագործումը: Անցնելով  $N$  բաժանման գործակցով՝ բաժանիչով փուլային աղմուկները թուլացվում են, ինչը քանակապես գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$d = 20 * \log(N), \quad (2)$$

Օրինակ՝  $N = 2$  բաժանման գործակցի դեպքում, փուլային աղմուկները նվազում են 6 դԲ-ով [1]:

Միաժամանակ ճառագայթման խնդիրը լուծելու հնարավորություն է տալիս NI Tclk տեխնոլոգիան, ինչը նկարագրվում է հետևյալ կերպ: Ենթադրենք, երկու (կամ ավելի) գեներատորներ իրարից անկախ ճառագայթում են իրենց տակտային ազդանշանը: Այդ տակտային ազդանշանների դրական (կամ բացասական) թռիչքի պահին, երկու (կամ ավելի) սարքերը ստանում են մեկնարկի ազդանշան՝ ազդանշանի միաժամանակ ճառագայթելու մասին (նկ. 2):




Նկ. 2 Tclk տեխնոլոգիան

Երկու ազդանշաններ համարվում են կոհերենտ, եթե նրանց միջև հարաբերական փուլը ժամանակի ընթացքում մնում է հաստատուն: Այս սահմանումը կարելի է կիրառել նաև տարբեր հաճախություններով ազդանշանների դեպքում, որոնց հարաբերական փուլը կմնա կայուն որոշակի  $N$  պարբերություն հետո: Օրինակ՝ 2 Հց ազդանշանի փուլը կհամընկնի 1 Հց ազդանշանի փուլի հետ ամեն 1 վայրկյան [2]:

**Խնդրի դրվածքը:** Օգտագործելով նույն հետերոդինը և նույն տակտային զենեքատորը՝ հետազոտել երկու վեկտորային հաղորդիչների համաժամանակացման մակարդակը՝ արտահայտելով այն աստիճաններով: Որպես համաժամանակյա ազդանշանների ճառագայթման աղբյուր՝ օգտագործվել է NI PXIe-5840 ազդանշանների վեկտորային հաղորդիչ-ընդունիչ սարքերը, որոնք ճառագայթում են 4.4 ԳՀց կրող հաճախություն: Փոխակերպման արդյունքում հաղորդչով ճառագայթվել է ռադիոփմպուլսներ՝  $4.4 - 0.2 = 4.2$  ԳՀց և  $4.4 + 0.2 = 4.6$  ԳՀց հարմոնիկներով, որոնց հզորությունը  $-20$  դԲմ է: Անհրաժեշտ է ապահովել ռադիոփմպուլսների համաժամանակացված ճառագայթումը:

**Հետազոտությունների արդյունքները:** Նկ. 2-ում պատկերված է հետազոտվող համակարգի բլոկ-սխեման:




Հ - Հետերոդին

SU - Տակտային Ազդանշան

ՎՅԸ - Վեկտորային Հաղորդիչ-Ընդունիչ


Նկ. 2 Համակարգի բլոկ սխեման

Ծրագրի տվյալների ներմուծման պատուհանը ներկայացված է նկ. 3-ում:



Նկ. 3 Ծրագրի տվյալների ներմուծման պատուհանը

Համաժամանակացված համակարգերի համար կարևոր է նաև համաժամանակյա ընդունումը: Առաջին հերթին կատարվել է ընդունիչների համաժամանակյա ընդունման չափաբերում, այնուհետև՝ հաղորդվող ազդանշանների համաժամանակացումը: Փուլային շեղումների մակարդակը չափելու նպատակով համաժամանակացված ազդանշանները հաղորդիչներից տրվում են համաժամանակեցված մուտքերով ընդունիչներին: Նկ. 4-ում պատկերված է հետազոտության արդյունքում ստացված փուլային շեղումների հիստոգրամը: Չափումները կատարվել են 1 ժամ անընդհատ ճառագայթման ընթացքում: Ինչպես երևում է նկարից, համաժամանակացման մակարդակը մոտավորապես կազմում է  $-0,05^\circ$ :



Նկ. 4 Համաժամանակեցված ազդանշանների փուլային շեղումների հիստոգրամը

**Եզրակացություն:** Մշակվել է ծրագիր, որի միջոցով LabVIEW ծրագրային միջավայրում կատարվել է NI PXIe-5840 վեկտորային հաղորդիչ-ընդունիչների համաժամանակացման մոդելավորումը՝ համաժամանակացման մակարդակի չափման նպատակով: Ստացվել են ժամանակի ընթացքում երկու սարքերի միջև առաջացած փուլային շեղումների վարքագիծը հիստոգրամի տեսքով: Արդյունքների վերլուծության հիման վրա արվել է եզրակացություն, որ հետերոդինի և տակտային գեներատորի հզորությունների բաժանման միջոցով կարելի է ստանալ մինչև  $0,05^\circ$  համաժամանակացում՝ հաշվի չառնելով ընդունման սխալանքները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Dean Banerjee PLL Performance, Simulation, and Design.- Dog Ear Publishing.- 5<sup>th</sup> edition. – 2017. -p.4
2. National Instruments NI Tclk Overview

Հոդվածը տպագրության է ներառված, տ.գ.դ., պրոֆեսոր  
Հ.Գոմցյանը՝ ՀԱՊՀ ռադիոսարգավորումների ամբիոնի վարիչի  
պ/կ:



**АГАЛОВЯН ЛЕНСЕР АБГАРОВИЧ**  
(к восьмидесятилетию со дня рождения)

Исполнилось 80 лет со дня рождения выдающегося ученого-механика, известного общественного деятеля, академика-секретаря «Отделения математических и технических наук» НАН РА, заведующего отделом «Механика тонкостенных систем» и советника директора Института механики НАН РА, заслуженного деятеля наук РА, академика НАН РА, доктора физико-математических наук, профессора Ленера Абгаровича Агаловяна.

Л.А.Агаловян родился 3 февраля 1940 года в селе Колатак Мартакертского района Нагорного Карабаха в семье учителей. В 1961 году Л.А.Агаловян с отличием окончил механико-математический факультет Ереванского государственного университета по специальности механика. После окончания университета был оставлен в качестве ассистента (кафедра теоретической механики). В 1966 году после окончания очной аспирантуры ЕГУ успешно защитил кандидатскую диссертацию. Трудовую деятельность в качестве старшего преподавателя продолжил на кафедре высшей математики ЕГУ. С 1969-ого года отдаст предпочтение научной деятельности и переходит на работу в Институт механики НАН РА в качестве старшего научного сотрудника. В 1980 году в Казанском государственном университете защищает докторскую диссертацию и ему присуждается ученая степень доктора физико-математических наук. В 1987 г. Л.А.Агаловян избирается на должность директора Института механики НАН РА и, неоднократно переизбираясь, почти 20 лет работает на этом посту.

В 1996 году избирается действительным членом НАН РА.

С 2006 года по сей день Л.А.Агаловян является советником директора Института механики НАН РА и заведует отделом «Механика тонкостенных систем», с 2016 года - Академик-секретарём Отделения математических и технических наук НАН РА. Л.А.Агаловян является членом Президиума НАН РА (2000-2006гг., с 2011г.).

Круг научных интересов Л.А.Агаловяна достаточно широк и охватывает теорию анизотропных пластин и оболочек, смешанные краевые задачи теории упругости и вязкоупругости, неклассические статические и динамические краевые задачи тонких тел, проблемы сейсмологии и сейсмостойкого строительства, обоснование прикладных моделей оснований и фундаментов, волновые процессы, распространение волн в слоистых средах и др.

Всеобщее признание получили работы Л.А.Агаловяна, в которых, на основе уравнений трехмерной теории упругости, впервые была построена асимптотическая теория анизотропных слоистых балок, пластин и оболочек. Эта теория положила начало широкомасштабным исследованиям напряженно-деформированного состояния

тонкостенных конструкций, находящихся в стесненных, с лицевых сторон, условиях. Такие задачи часто встречаются на практике, однако, в силу явного несоответствия гипотезам Кирхгоффа-Лява, не могут быть решены в рамках классической теории пластин и оболочек. Построенная теория позволяет четко выделить рамки применимости как классической, так и уточненных теорий пластин и оболочек, построенных на основе гипотез, а также широко используемых для расчета упругих оснований-фундаментов моделей Винклера-Фукса, Пастернака, Клейна, вычислить коэффициенты постели для слоистых и неоднородных оснований.

Л.А.Агаловян является одним из первоисследователей задач погранслоя для балок, пластин и оболочек. Полученное математически точное решение для погранслоя прямоугольника позволило ему установить связь между погранслоем и принципом Сен-Венана, доказать справедливость этого принципа в случае первой краевой задачи теории упругости и объяснить неприменимость его ко второй и смешанной граничным задачам.

Показана эффективность асимптотического метода при решении динамических задач для анизотропных и слоистых тел. Найдены частоты собственных колебаний слоистых пакетов в виде полос и пластин, содержащих сжимаемые и несжимаемые, а также вязкоупругие слои. Намечены пути использования этих результатов в сейсмостойком строительстве, в частности, показано, что при надлежащем выборе параметров основания можно максимально разнести частоты собственных колебаний и сейсмических волн и, тем самым, снизить риск разрушения сооружения при землетрясении.

Основные научные достижения Л.А.Агаловяна обобщены в трёх объемных монографиях (Л.А.Агаловян «Асимптотическая теория анизотропных пластин и оболочек». М. Наука, 1997. 415с., Л.А.Агаловян, Р.С.Геворгян «Неклассические краевые задачи анизотропных балок, пластин и оболочек». Ереван. Изд. «Гитутюн» НАН РА. 2005. 468с. и Aghalovyan L.A. «Asymptotic theory of anisotropic plates and shells». Singapore-London. World Scientific Publ. 2015. 376p.) и многочисленных научных статьях. Он автор свыше 200 научных работ.

Велика заслуга Л.А.Агаловяна и в деле подготовки высококвалифицированных научных кадров. Под его руководством 15 человек защитили кандидатские диссертации и трое из них - докторские диссертации.

Научные заслуги Л.А.Агаловяна признаны мировой научной общественностью. Он является членом European Mechanics Society (EUROMECH), European Association for the Control of Structures, Российского Национального комитета по теоретической и прикладной механике, Президиума НАН РА, редколлегии журнала «Известия НАН РА, Механика», международных редакционных советов журналов «Прикладная механика» (Украина), «Механика композитных материалов» (Латвия), редколлегии журнала «Ученые Записки АрГУ» (Республика Арцах), Председатель Специализированного Совета по защитах докторских диссертаций по специальностям «Механика деформируемого твердого тела» и «Теоретическая механика» со дня его создания (1990 г.).

За большой вклад в развитие новых научных направлений в механике, решение актуальных проблем механики и прикладной математики, большую научно-организационную работу Л.А.Агаловян награжден грамотами НАН Армении «Говестагир» и «Вастакагир». В 1995 году Ассоциация армянских инженеров и ученых США присудила ему премию им. Виктора Амбарцумяна, в 2009 г. Американский биографический институт вручил Л.А.Агаловяну «Gold Medal For Armenia», а Международным биографическим центром признан одним из «Top 100 Scientists-2009».

Редакция журнала «Ученые Записки АрГУ», научная общественность Армении и Арцаха поздравляют Ленсера Абгаровича Агаловяна с юбилеем и желают ему крепкого здоровья, долгих лет жизни, новых творческих успехов.

Արցախի պետական համալսարանի  
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ

Арцахского государственного университета  
Artsakh State University's  
PROCEEDINGS

1/2020



Հանձնված է տպագրության՝ 4.05.2020 թ.:  
Ստորագրված է տպագրության՝ 29.06.2020 թ.:  
Ծավալը՝ 11,5 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան,  
Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5  
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14  
E-mail: [rector@asu.am](mailto:rector@asu.am)

Արդձ հրատարակչություն, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),  
կայք: [www.asu.am](http://www.asu.am) – Գիտական հրապարակումներ – Գիտական  
տեղեկագիր

Учредитель – Арцахский государственный университет  
г.Степанакерт, ул. Мхитара Гюша 5,  
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14  
Издательство АргУ, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),  
сайт: [www.asu.am](http://www.asu.am) – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert  
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14  
ASU Publishing house, e-mail: [printery.asu@mail.ru](mailto:printery.asu@mail.ru),  
website: [www.asu.am](http://www.asu.am) – Scientific publications – Proceedings.

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

**ԷԴԻԹ ՊՐԻՆՏ**  
Երևան, Թումանյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)



**EDIT PRINT**  
12 Tumanyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)